



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԳԱՏԱՐԱՆ
CASSATION COURT
OF THE REPUBLIC OF ARMENIA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ASSOCIATION OF JUDGES
OF THE REPUBLIC OF ARMENIA

ISSN 1829 - 0744

ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ



ԴԱՏԱԿԱՆ ԻՃԽԱՆՈՒԹՅՈՒՆ СУДЕБНАЯ ВЛАСТЬ JUDICIAL POWER

ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ НАУЧНО-МЕТОДИЧЕСКИЙ ЖУРНАЛ SCIENTIFIC - METHODOLOGICAL JOURNAL

10-12/304-306 2024
ՀՈԿՏԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ

Գիտական խմբագրական խորհուրդ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Լիլիթ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ – ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ, ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Արման Դիլանյան – ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Համլետ Ասատրյան – ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ, ՀՀ վաստակավոր իրավաբան,

Հովսեփ Բեդկյան – ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ,

Արթուր Դավթյան – ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Երվանդ Խունդկարյան – ՀՀ Սահմանադրական դատարանի դատավոր, ՀՀ վաստակավոր իրավաբան,

Սերժիկ Ավետիսյան – ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր, ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Ելիզավետա Դանիելյան – ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավոր, ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Լիանա Հակոբյան – ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Ռուզաննա Հակոբյան – ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի դատավոր, ՀՀ վաստակավոր իրավաբան,

Նորա Կարապետյան – ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Գոռ Թորոսյան – ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Արշակ Վարդանյան – ՀՀ դատավորների միության անդամ, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Կարեն Ջարիկյան – ՀՀ վարչական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու,

Սերգեյ Առաքելյան – ՀՀ Արդարադատության ակադեմիայի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Արմեն Հայկյանց – ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Վահե Հովհաննիսյան – ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Բորիս Գավրիլով – ՌԴ ներքին գործերի նախարարության Կառավարման ակադեմիայի հանցագործությունների քննության մարմինների կառավարման ամբիոնի պրոֆեսոր, ՌԴ գիտության վաստակավոր գործիչ, ՌԴ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Անատոլի Կուստով – ՌԴ վաստակավոր իրավաբան, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Գլխավոր խմբագիր՝

ՀՀ վաստակավոր իրավաբան, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Վահե Ենգիբարյան**

«Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիրը 2014 թվականից ընդգրկված է Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից հաստատված թեկնածուական առենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում:

Հրատարակվում է

Երևանի դատական փորձագիտության և հոգեբանության ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«ՀՀ դատավորների միություն»
հասարակական կազմակերպություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 5
<http://www.ajra.am>

«Դատական իշխանություն»
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռ.՝ 56-99-89
Էլ. հասցե՝ judge@netsys.am
ISSI 1829-0744

Հանձնվել է տպագրության՝ 20.01.2025
Ֆորմատը՝ 70x100 1/8
Տպաքանակը՝ 50
Ծավալը՝ 9.755 պայմ. մամուլ + 2 էջ ներդիր
Գրանցման վկայական՝ 01ՄՕՕՕ023
Տրված է՝ 07.11.2001 թ.

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ-ում:
ք. Երևան, Խորենացի 4-րդ նրբ., 69 տուն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ
ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԿ**

Սիրելի՛ հայրենակիցներ,

Ընդունեք իմ ջերմ շնորհավորանքները՝
Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ:

Ցանկանում եմ 2025 թվականը բոլորիս համար
ընթանա խաղաղության, համերաշխության ու
լավատեսության մթնոլորտում:

Թող նոր տարին նշանավորվի մեր երկրի
պետականության ամրապնդման ու հզորացման
աննախադեպ առաջընթացով, շարունակական
ձեռքբերումներով, մարտահրավերները
հաղթահարելու վճռականությամբ, նոր
հնարավորություններով ու գաղափարներով,
յուրաքանչյուրիս ընտանիքի բարօրությամբ և
երջանկությամբ:



Հարգանքով,

Հայաստանի Հանրապետության
Վճռաբեկ դատարանի նախագահ
ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ
ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ**

Հարգելի գործընկերներ,
ՀՀ դատավորների միությունը շնորհավորում է Ամանորի և
Սուրբ Ծննդյան տոների առթիվ:
Արժանապատիվ կեցվածքով, հաղթական հետազիծ ամրագրելու
վճռականությամբ և նվիրումով թևակոխենք 2025 թվական:
Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ.

Հարգանքով՝
Հայաստանի Հանրապետության
դատավորների միության նախագահ
ԱԼԵԲՍԱՆԴՐ ԱԶԱՐՅԱՆ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ
/THEORY OF STATE AND LAW/ТЕОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА

Գազիկ Համբարձումյան

Իրավահասկացման տիպաբանությունն իրավունքի ժամանակակից
հայեցակարգային մոտեցումներում 3

Լիլիթ Ֆանարջյան

Իրավական համակարգի հասկացությունը, կառուցվածքը և
համակարգաստեղծ կապերը..... 10

ՎԱՐՉԱՎԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/ADMINISTRATIVE LAW/АДМИНИСТРАТИВНОЕ ПРАВО

Лусине Алексанян

Последствия признания акта налогового органа недействительным и
проведения повторного администрирования25

ՔՐԵԱՎԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CRIMINAL LAW/УГОЛОВНОЕ ПРАВО

Արման Բարախանյան

Քրեական ենթամշակույթը բնութագրող եզրույթների օրենսդրական ամրագրման
որոշ հիմնահարցեր..... 38

**ՔՐԵԱՎԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CRIMINAL PROCEDURE/УГОЛОВНЫЙ
ПРОЦЕСС**

Ինգա Ավագյան

Պաշտպանի մասնակցությունը նախաքննության փուլում իրականացվող
ապացուցմանը..... 48

Օվանես Բаяндурյան

Уголовно-процессуальные меры обеспечения, применяемые в отношении
юридического лица 59

ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ/CRIMINALISTICS/КРИМИНАЛИСТИКА

Սուրեն Բաղինյան

Պետական դավաճանության քննության փուլերի խնդիրներն ու
առանձնահատկությունները72

**ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ/FORENSIC EXAMINATION/СУДЕБНАЯ
ЭКСПЕРТИЗА**

Կարեն Մամիկոնյան

Ֆինանսատնտեսագիտական փորձաքննությունների շրջանակներում ապրանքային նշանի արժեքի որոշման մեթոդաբանության հարցերը.....82

ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ

Վճռաբեկ դատարանի որոշումներ..... 94

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ/THEORY OF STATE AND LAW/ ТЕОРИЯ
ГОСУДАРСТВА И ПРАВА**

<https://doi.org/10.59546/18290744-2024.10-12-3>

ԳԱԳԻԿ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ
«ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի հայցորդ»

GAGIK HAMBARDZUMYAN
*Applicant of the Institute of Philosophy,
Sociology and Law of the National Academy
of Sciences of the Republic of Armenia*

ГАГИК АМБАРЦУМЯН
*Соискатель Института философии,
социологии и права Национальной академии наук
Республики Армения*

**ԻՐԱՎԱՀԱՍԿԱՑՄԱՆ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՈՒՄ**

**TYPOLOGY OF LEGAL UNDERSTANDING IN MODERN CONCEPTUAL
APPROACHES TO LAW**

**ТИПОЛОГИЯ ПРАВОПОНИМАНИЯ В СОВРЕМЕННЫХ
КОНЦЕПТУАЛЬНЫХ ПОДХОДАХ К ПРАВУ**

Ներածություն

Իրավունքի ժամանակակից հայեցակարգային մոտեցումներում առանձնանում են բազմաթիվ և բազմազան տիպեր, որոնցից յուրաքանչյուրը յուրովի է բացահայտում իրավունքի այս կամ այն որակական հատկանիշները: Իրավաբանական գրականության մեջ հիմնականում առանձնացվում են իրավահասկացման հետևյալ հիմնական տիպերը. նորմատիվ, ինտեգրատիվ, սոցիոլոգիական, լեգիստական, բնաիրավական, ազատական-իրավաբանական, որոնք հիմնականում փոխլրացնում են միմյանց:

Հոդվածի հեղինակի դիրքորոշումն իրավաբանական իրավահասկացությունն է, ըստ որի՝ իրավունքը դիտարկվում է բացառապես իրավաբանական, այլ ոչ թե սոցիոլոգիական կամ բարոյագիտական տեսանկյունից:

Իրավաբանական հայեցակարգը ենթադրում է, որ իրավունքն իր էությանը և բովանդա-

կությանը զուտ իրավաբանական երևույթ է, որն ունի իր ներքին տրամաբանական կառուցվածքը և արտահայտման արտաքին ձևը:

Հիմնական հետազոտություն

Արդի իրավաբանական գրականության մեջ գոյություն ունեն իրավահասկացման տարբեր տիպաբանական մոտեցումներ:

Օ Վ. Մարտիշինն առանձնացնում է իրավաբանական, սոցիոլոգիական պոզիտիվիզմը, բնական իրավունքը և իրավունքի փիլիսոփայական մոտեցումները¹: Իրավաբանական և սոցիոլոգիական պոզիտիվիզմն ընդունվում են այնպիսին, ինչպիսին այն կա իրականում, իսկ բնական իրավունքը և իրավունքի փիլիսոփայական մոտեցումները ելնում են նրանից, թե ինչպիսին պետք է լինի իրավունքը: Սակայն մենք համաձայն ենք այդպիսի բաժանման հետ, քանի որ իրավունքի փիլիսոփայությունը ու բնական իրավունքի տեսությունը, սոցիոլոգիական իրավահասկացումը և իրավաբանական պոզիտիվիզմը ներկայացնում են իրավունքի վերաբերյալ գոյաբանական և իմացաբանական մոտեցման տարբեր զույգեր: Իրավունքի փիլիսոփայությունն ևս իրավունքի սոցիոլոգիայի նման իրավունքի մասին գիտություն է: Իրավունքի փիլիսոփայություն եզրույթը գիտական շրջանառության մեջ է ներմուծել Գևորգ Վիլյամ Ֆրիդրիխ Հեգելը՝ գերմանական դատական փիլիսոփայության հիմնադիրներից մեկը²:

Ընդհանրացնելով իրավահասկացման տարբեր տիպերը՝ Ռ. Զ. Լիվշիցը նշում է երեք մոտեցումներ՝ նորմատիվ, սոցիոլոգիական, բարոյական³: Օ. Է. Լեյստն առանձնացնում է երեք իրավահասկացություններ՝ որպես իրավունքի հիմնական հիմնադրույթներ՝ պոզիտիվ նորմատիվ, բնական-իրավական, սոցիոլոգիական տեսություններ⁴: Սոցիոլոգիական մոտեցման շրջանակում հետազոտողի մեկնաբանությամբ իրավունքը կարգ է, ենթադրում է հասարակական իրավագիտակցություն՝ որպես այդ աղբյուրի ուսումնասիրություն:

Մենք համաձայն ենք Օ. Է. Լեյստի տեսակետի հետ, որ հետազոտողների կախվածությունն իրավահասկացման որևէ տիպի հետ սուբյեկտիվ նախասիրությունների հարց է⁵: Բայց չի կարելի չհամաձայնվել գիտնականի հետ այն հարցում, որում նա հաստատում է՝ բոլոր այս իրավահասկացումները կապված են մարդու իրավունքի հիմնադրույթի հետ:

Դրա հետ մեկտեղ գիտնականը հնարավորություն չի տեսնում գտնելու ընդհանրացնող սկիզբ վերը թվարկված այս երեք իրավահասկացման մեջ՝ դրանք համարելով արդարացի: Այս հիմնադրույթներից յուրաքանչյուրն այլոց համար անհրաժեշտ հակակշիռ է, որը թույլ չի տալիս ընկնել ծայրահեղության մեջ, դուրս գալ իրավունքի սահմաններից դեպի անօրինություն և կամայականություն: Բանն այն է, որ այս հիմնադրույթների ծայրաստիճան տեսանկյունների միջև գտնվում է ոչ թե ճշմարտությունը, այլ հասարակական բարձրագույն երևույթ՝ իրավունքը, որը բոլոր իր մասերով կարող է լինել և՛ ազատության կեցություն, և՛ ստրկացնելու ու կամայականության գործիք, և՛ հասարակական շահերի փոխզիջում, և՛ ճնշման միջոց, և՛ կարգերի հիմք, և՛ դատարկ, անուժ դեկլարացիա, և՛ անձի իրավունքների հուսալի հիմք⁶:

Ժամանակակից գիտական գրականության մեջ իրավահասկացման եռակազմ տիպա-

¹ Տե՛ս *Мартышин О. В.*, Совместимы ли основные типы понимания / Гос. и право, 1990. №10 / права, с 13-21:

² Տե՛ս *Միլեփանյան Հովհաննես*, Հեգելի իրավունքի փիլիսոփայությունը, Երևան, 2020, *Нерсисянц В. С.*, Философия права Гегеля. М., Юристы, 1998.

³ Տե՛ս *Лившиц Р. З.*, Теория права, М., 1994.

⁴ Տե՛ս *Лейст О. Э.*, Сущность права Проблемы теории и философии прав М., 2002, с. 265-279.

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 273:

⁶ Տե՛ս *Лейст О. Э.*, նշվ. աշխ., էջ 275:

բանությունն առավել տարածված է: Այսպես, օրինակ, հետազոտելով իրավահասկացումը քաղաքացիական հասարակության զարգացման պայմաններում, Ի. Լ. Չեստնովը և Յ. Ն. Վոլկովն առանձնացնում են երեք իրավահասկացումներ՝ բնական իրավունքի տեսությունը, իրավաբանական պոզիտիվիզմը և իրավունքի սոցիոլոգիան: Նրանք նշում են, որ իրավահասկացման բոլոր տիպերից լիբերալիզմին և քաղաքացիական հասարակության հիմնադրույթին ամենից մոտը 18-րդ դարի բնական իրավունքի դասական տեսությունն է⁷:

Շատ հետազոտողներ առաջարկում են ընդհանրացնել իրավահասկացման այս երեք մոդելները: Օրինակ, Ո. Ջ. Լիվշիցի կարծիքով՝ պետք է հեռացնել դպրոցներից յուրաքանչյուրի տարբերությունները և առանձնացել այն, ինչը դրանց միավորում է, իրավունքի՝ որպես հասարակական կարգի համակարգի մասին պատկերացում⁸: Սակայն իրավունքի նմանօրինակ հասկացումը համարում ենք սոցիոլոգիական, այլ ոչ թե համընդհանուր:

Իր աշխատանքներից մեկում Վ. Վ. Լապանան դիտարկում է իրավահասկացման տարբեր տիպերը դրանց կիրառելիության և գործնական խնդիրների լուծման համար, որոնք կանգնած են իրավական համակարգի առջև զարգացման ժամանակակից փուլում: Հեղինակը ենթադրում է, որ իրավահասկացման տիպը, որպես գիտական պարադիգմի հատուկ տեսակ, իրենից ներկայացնում է իրավունքի կերպարի ձևավորման հանդեպ տեսական-մեթոդոլոգիական մոտեցում, որն իրականանում է վերլուծության որոշակի մեթոդոլոգիայի շրջանակում խնդրի այս կամ այն տեսական տեսանկյունից: Վ. Վ. Լապանան առաջարկում է իրավահասկացման տիպերի դասակարգման հիմքում դնել իրավունքի վերլուծության մեթոդաբանությունը, որը թույլ է տալիս առանձնացնել իրավահասկացման պոզիտիվիստական ու նեոպոզիտիվիստական տիպերը, որոնց առնչությամբ զարգանում են իրավահասկացման ու իրավունքի հիմնադրույթի տարբեր ուղղություններ⁹:

Սա առաջին լեգիստական մոտեցումն է իրավունքի հասկացման հանդեպ, որի դեպքում իրավունքը նույնականացվում է օրենքի, հանրային իշխանության կողմից նախատեսված վարքագծային համապարտադիր կանոնների հետ, որն ապահովված է քաղաքական իշխանական հարկադրանքով: Այս առումով, օրենք բառը կիրառվում է լայն իմաստով, որը ներառում է դատական նախադեպը և իրավական սովորույթը: Ավելի ուշ ձևավորվել են պոզիտիվիստական իրավահասկացման այլ ուղղություններ, որոնք կոչվում են Լապանայի կողմից սոցիոլոգիական և մարդաբանական, որն առաջարկում է չխառնել նրանց իրավունքի ուսումնասիրության հանդեպ նույնանուն մոտեցումների՝ իրավական երևույթների միջդիսցիպլինար հետազոտությունների համապատասխան ուղղությունների հետ¹⁰:

Ինչ վերաբերում է ոչ պոզիտիվիստական իրավահասկացմանը, ապա Վ. Վ. Լապանան նկարագրում է նման նշան, ինչպես որոշակի իդեալական իրավական չափանիշի առկայության մասին պատկերացումը, որը թույլ է տալիս գնահատել երևույթների իրավական բնույթը, որոնք դիտարկվում են էմպիրիկ մակարդակում: Ըստ նրա՝ իրավահասկացման այս տիպը ներառում է երկու հիմնական ուղղություններ՝ բնական-իրավականը և փիլիսոփայականը: Իրավահասկացման փիլիսոփայական տիպը, որի հեղինակը տարբերում է իրավունքի հանդեպ փիլիսոփայական մոտեցումից, կողմնորոշված է դեպի իրավունքի էության որպես հատուկ սոցիալական երևույթի ճանաչում, կատարյալ էությանական չափանիշի տեսանկյունից դրական իրավունքի գնահատում: Բնական իրավական տիպը Լապանայի տեսանկյունից,

⁷ Տե՛ս *Михайлов А. М., Идея естественного права история и теория, М., 2010:*

⁸ Տե՛ս *Лившиц Р. З., Теория права, М., 1994, 53:*

⁹ Տե՛ս *Лапаева В. В., Различные типы правовопонимания: анализ научно-практического поненциала, М., 2006, с. 56.*

¹⁰ Տե՛ս *Лапаева В. В., նշվ., աշխ., էջ 57:*

որպես դրական իրավունքի գնահատման չափանիշ է դիտարկում, ոչ թե իրավունքի մասին տեսական պատկերացումը, այլ բնական իրավունքը, որը հանդես է գալիս միաժամանակ, և՛ որպես որոշակի իդեալ, և՛ որպես իրապես գործող իրավունք, որին պետք է համապատասխանի գործող օրենսդրությունը¹¹:

Իրավահասկացման փիլիսոփայական տիպը դրսևորվում է Վ. Ս. Ներսեսյանցի լիբերտարիզմում: Իրավահասկացումը կառուցվում է իրավունքի էության և երևույթի տարբերակման վրա: Օրենքը, որը չի համապատասխանում իրավական էությանը, կրում է ոչ իրավական, կամայական բնույթ:

Համաձայն Վ. Ս. Ներսեսյանցի փիլիսոփայական իրավական մտքերի՝ առկա են իրավահասկացման երկու հակադիր տիպեր, իրավաբանական իրավահասկացում (ius-իրավունք) և լեգիստական իրավահասկացում (lex-Օրենք)¹²: Իրավաբանական՝ իրավահասկացման հեղինակը վերագրում է ոչ միայն իր հիմնադրույթը՝ լիբերտար իրավահասկացումը, այլ նաև մնացած բոլոր դոկտրինները, որոնք կողմ են հանդես գալիս իրավունքի դրական գրված իրավունքի չվերագրվելուն: Հեղինակը նշում է. որ սա միայն լեգիստական իրավահասկացման տեսակետից, որը միավորում է իրավունքը օրենքի հետ ու այն ուղղորդում է միայն դեպի դրականը, իրավունքի՝ դրական իրավունքի հետ տարբերակման մեջ բնական իրավունք է¹³:

Փիլիսոփայական իրավահասկացման տարբերակներում իրավունքը դիտարկվում է որպես բնական իրավունք, իրերի բնություն, բանական իրավունք, փիլիսոփայական իրավունք, իրավունքի գաղափար և այլն: Օրենքը նույնպես նշանակվում է որպես կամարտահայտիչ իրավունք, պաշտոնական իրավունք, դրական իրավունք և այլն:

Իրավունքի տեսության զարգացման խորհրդային փուլում առկա էր կայուն տենդենց, իրավահասկացման ոչ բոլոր պոզիտիվիստական տիպերը վերագրվում էին բնական իրավունքին: Օրինակ, Վ. Ա. Չետվերտնինն իրավահասկացման տարբեր տիպերի բազմազանությունը՝ աստվածաբանական, նեոկանտյան, էքզիստենցիալ, հերմենևտիկ, վերագրում է բնական իրավական տիպին¹⁴: Հեղինակը կիսում է իրավահասկացման բոլոր տիպերը երեք մեծ խմբերի՝ պոզիտիվիստական, բնական իրավական, մարքսիստական: Սակայն ժամանակից գիտությունում նույնպես առկա է պարզեցում: Օրինակ՝ Վ. Վ. Լապանան վերագրում է իրավահասկացման հոգեբանական, ֆենոմենոլոգիական, էքզիստենցիալ, հերմենևտիկ տիպերը: Իրավահասկացման դիտարկվող տիպը, որը որոնում է իրավունքի աղբյուրները մարդու մեջ, ինչպես և սոցիոլոգիականը, ըստ Լապանայի, հիմնվում է պոզիտիվիստական մեթոդաբանության վրա, քանի որ սահմանափակում է իրավունքի իր տեսությունը միայն վերլուծության էմպիրիկ մակարդակով: Նրա գործնական նշանակությունը կապված է ճանաչողական հնարավորությունների հետ, որոնք նա տալիս է սոցիալ-կենսաբանական գործոնների բարդ համալիրի ուսումնասիրության համար, որոնք ազդում են օրենսդրի ու իրավակիրառողի դիրքորոշման վրա, նրանց կողմից իրավունքի ճանաչման, ստեղծման ու կիրառման գործընթացում: Հեղինակը ենթադրում է, որ, ըստ իր տեսական մեթոդաբանական բնութագրերի, այս ուղղությունը ձգտում է դեպի սոցիոլոգիական իրավահասկացում ու կրկնում է ինչպես նրա արժանիքները, այնպես էլ թերությունները, որոնք կապված են պոզիտիվիստական մեթոդոլոգիայի սահմանափակվածության հետ¹⁵:

¹¹ Տե՛ս նույն տեղը, էջ 88:

¹² Տե՛ս *Нерсесян В. С.*, *Философия права*, М., 2006, с. 32:

¹³ Տե՛ս նույն տեղը, էջ 33:

¹⁴ Տե՛ս *Четверин В. А.*, *Современные концепции естественного права*. М., 2001, с. 11-12:

¹⁵ Տե՛ս *Лапаева В. В.*, *Различные типы правопонимания анализ научно-практического потенциала*. с. 60:

Իրավունքի տարբեր հայեցակարգերի բաժանման մի տարատեսակ էլ դուաիզմն է՝ իրավական իդեալիզմը և նիհիլիզմը: Օրինակ ըստ Ն. Վ. Սամարինայի՝ բնական իրավունքի հիմնադրույթը, որը ներառել է անձի իրավունքների ինստիտուտը, իրավաբանական պոզիտիվիզմը, լայնորեն տարածվել ու ապացուցվել են ժամանակակից գոյության իրենց իրավունքը, քանի որ օգնել են մի կողմից անհատական հետաքրքրությունների ամրապնդմանը, իսկ մյուս կողմից իրավունքների նորմերի ճշգրիտ իրացմանը:

Որոշ հեղինակներ առանձնացնում են իրավահասկացման ճյուղային տիպեր: Օրինակ, Ի. Ա. Կրավեցը ենթադրում է, որ ժամանակի կոնստիտուցիոնալիզմը հիմնվում է իրավահասկացման տարբեր տիպերի վրա: Առաջին հերթին կարող է կիրառվել սահմանադրականության բնական իրավական տեսությունը, նրա հիմքում ընկած է բնական իրավունքների ու անձի ազատությունների գաղափարը, երկրորդ սահմանադրականության պոզիտիվիստական տեսությունը, երբ իրավական ակտերը գնահատվում են՝ ըստ ձևի կամ բովանդակության սահմանադրությանը համապատասխանության առարկայի հիման վրա, երրորդ սահմանադրականությունը կարող է դիտարկվել որպես պատմական ու փոփոխական կատեգորիա մարդկային հանրույթների ու սոցիալական առաջընթացի էվոլյուցիայի ընթացքում, այս դեպքում կիրառվում է սահմանադրականության պատմական իրավական տեսությունը, որի դեպքում սահմանվում են գործող իրավական նորմերի, դրանց ընդունման քաղաքական մոտիվների որոշակի սահմանադրական իրավական ինստիտուտների ձևավորման պատմական պայմանների միջև կապեր¹⁶:

Վերջերս հեղինակներն առանձնացնում են իրավահասկացման տիպերը՝ կախված իրավական համակարգի արժեքների քաղաքական կողմնորոշումից: Օրինակ, Տ. Մ. Պոլյակովան ենթադրում է, որ կոնսերվատիվ իրավահասկացումը 19-րդ դարի գոյաբանական և իմացաբանական տեսակետից քննադատության է ենթարկել, նախևառաջ այն դոգմատիկ բնական իրավական գաղափարներին¹⁷: Ճանաչողության կոնսերվատիվ տեսությունը ձգտում էր բացահայտել միստիկ, գեղագիտական և գաղափարական-բանական ճանաչողության աշխարհի յուրացման ոչ ռացիոնալ ձևերի իմացաբանական հնարավորությունները:

Կոնսերվատիվ իրավահասկացման խնդիրները բացահայտվել են Ա. Ս. Անդրեյչենկոյի աշխատանքում, որոնցում նշվում է, որ կոնսերվատիվ իրավահասկացումը և իրավական մտածողությունը տարբերվում են իրավական պետության ժամանակակից դոկտրինից ու պահանջում են իրավունքի հասկացման հանդեպ ժամանակակից մոտեցումների փոփոխություններ: Ըստ հեղինակի՝ իրավահասկացումը չի կարող դիտարկվել բացառապես իրավունքի աղբյուրի տեսանկյունից՝ բնական աղբյուրից, սուվերենի կամքից կամ սոցիալական-իրավական հարաբերություններից: Բնական-իրավական, պոզիտիվիստական կամ սոցիոլոգիական իրավահասկացման առանձնացումը իրենից ներկայացնում է միայն դասակարգման եղանակներից մեկը որոշակի չափանիշի հիման վրա, որը իրավունքի աղբյուրի մասին ուսմունքն է: Իրավահասկացումն իրավունքի մասին որոշակի ուսմունք է, նրա բնույթի վերաբերյալ հատուկ տեսակետ, որն արտացոլվում է նաև պետության իրավական քաղաքականության վրա: Դրա համար էլ Ա. Ս. Անդրեյչենկոն հնարավոր է համարում լիբերալիզմի, սոցիալիզմի ու կոնսերվատիզմի ներկայացուցիչների իրավահասկացման քաղաքական դիրքորոշման մասին խոսակցությունը: Իրավահասկացում կատեգորիայի միջոցով կարելի է ընդհանրացնել ու բնութագրել այս բևեռային հասարակական-քաղաքական պարադիգմայի ներկայացուցիչները:

¹⁶ Տե՛ս *Кравец И. А.*, Становления российского конституционализма дисс. д-ра юрид. наук. М., 2006:

¹⁷ Տե՛ս *Полякова Т. М.*, К вопросу о политико-правовой доктрине России/История государства и права, 2006, с. 24-25:

րի իրավաբանական համոզմունքները¹⁸:

Ենթադրում ենք, որ իրավահասկացման տիպը՝ իրավունքի իմաստային մոդելն է, որը սահմանվում է նրա աղբյուրով ու իրավունքի տեսության առարկայի մասին պատկերացմամբ:

Իրավունքի տեսության առարկայի տեսակետից կարելի է առանձնացնել իրավունքի նորմատիվ ու լայն հասկացումը: Իրավունքի նորմատիվ հասկացումը նույնական է իրավաբանական պոզիտիվիզմին, որի դեպքում իրավունք ասելով ենթադրվում է պաշտոնապես ճանաչվող նորմերի միասնությունը, որոնք ապահովված են պետական հարկադրանքով, իսկ լայն հասկացմամբ՝ իրավունքի տեսության առարկան ներառում է իրավունքի հասկացության մեջ նաև սոցիալական հարաբերությունները, իրավագիտակցությունը: Լայն իրավահասկացումը ենթադրում է իրավունքի հանդեպ զանազան մոտեցումներ՝ բնական իրավական, մշակութային-պատմական, սոցիոլոգիական, հոգեբանական և այլն:

Մենք հատուկ ենք սահմանում իրավագիտության առարկան որպես տարբերակման չափանիշ նորմատիվ ու լայն իրավահասկացման դեպքում, քանի որ իրավական մշակույթի կամ իրավական հոգեբանության բացառումն իրավունքի հասկացությունից հնարավոր է միայն իրավունքի տեսական հետազոտության շրջանակում և չի կարելի բացառել դրանց դերը իրավաբանորեն նշանակալից որոշումների ընդունման մեջ:

Եզրակացություն

Իրավունքը, որպես բարդ սոցիալական երևույթ, իր հետ բերում է նաև բազմաթիվ և բազմազան իրավահասկացման տիպեր, որոնք այս կամ այն կերպ ազդում են իրավունքի և իրավաստեղծ գործունեության հետագա զարգացումների վրա: Իրավահասկացումը կառուցվում է իրավունքի էության և երևույթի տարբերակման վրա: Օրենքը, որը չի համապատասխանում իրավական էությանը, կրում է ոչ իրավական, կամայական բնույթ:

Ամփոփագիր: Սույն հոդվածում հանգամանորեն քննարկվում է իրավահասկացման տիպաբանության հետ կապված հարցերն իրավունքի ժամանակակից հայեցակարգային մոտեցումներում: Իրավունքի ժամանակակից հայեցակարգային մոտեցումներում առանձնանում են բազմաթիվ և բազմազան տիպեր, որոնցից յուրաքանչյուրը յուրովի է բացահայտում իրավունքի այս կամ այն որակական հատկանիշները: Հոդվածի հեղինակի դիրքորոշումը իրավաբանական իրավահասկացությունն է, ըստ որի՝ իրավունքը դիտարկվում է բացառապես իրավաբանական, այլ ոչ թե սոցիոլոգիական կամ բարոյագիտական տեսանկյունից: Քննական վերլուծության արդյունքների հիման վրա հոդվածում առանձնացվում են ժամանակակից իրավահասկացման հետևյալ տիպերը. նորմատիվ, սոցիոլոգիական, լեգիստական, բնաիրավական, ազատական-իրավաբանական ինտեգրատիվ:

Annotation. This article thoroughly discusses the issues related to the typology of legal understanding in modern conceptual approaches to law. In the modern conceptual approaches to law, many and diverse types are distinguished, each of which reveals one or another qualitative characteristic of law in its own way. The position of the author of the article is the jurisprudence, according to which the right is considered exclusively from a juridical point of view and not from a sociological or moral point of view. Based on the results of the examination analysis, the following types of modern legal understanding are distinguished in the article: normative, sociological, legalistic, natural law, and liberal-legal integrative.

Аннотация. В данной статье подробно рассматриваются вопросы, связанные с типологией правопонимания в современных концептуальных подходах к понятию «право». В современных концептуальных подходах к праву

¹⁸ Տե՛ս *Андрейченко А. С.*, Консервативное правопонимание в России XIX-XX вв., Дис. канд. юрид. наук. М., 2006:

выделяется множество, каждый из которых по-своему раскрывает те или иные качественные характеристики права. Позицией автора статьи является судебная практика, согласно которой право рассматривается исключительно с юридической точки зрения, а не с социологической или моральной точки зрения. По результатам экспертного анализа в статье выделяются следующие виды современного правопонимания: нормативный, социологический, легалистический, естественно-правовой, либерально-правовой интегративный.

Բանալի բառեր - իրավունք, իրավահասկացում, նորմատիվ-պոզիտիվիստական, լեգիստական, բնաիրավական, ազատական-իրավաբանական, ինտեգրատիվ:

Keywords: law, legal understanding, normative-positivist, legist, natural law, liberal-legal, integrative.

Ключевые слова: право, правопонимание, нормативно-позитивистское право, легистское право, естественно-правое право, либерально-правовое право, интегративное право.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ստեփանյան Հ., Հեգելի իրավունքի փիլիսոփայությունը, Երևան, 2020:
2. Нерсесянц В. С., Философия прав Гегеля. М., 1998.
3. Лившиц Р. З., Теория права. М., 1994.
4. Лейст О. Э., Сущность права. Проблемы теории и философии права. М., 2002.
5. Мартышин О. В., Совместимы ли основные типы понимания права//Гос. и право. 1990. № 10, с. 3-11.
6. Михайлов А. М., Идея естественного права. история и теория. М., 2010.
7. Лапаева В. В., Различные типы правопонимания: анализ научно-практического потенциала. М., 2006.
8. Нерсесянц В. С., Философия права. М., 2006.
9. Четвертин, Современные концепции естественного права. М., 2001.
10. Кравец И. А., Становления российского конституционализма: дисс...д-ра юрид. наук, М., 2006.
11. Полякова Т. М., К вопросу о политика-правовой доктрине России// История государства и правв. 2006.№ 1, с. 24-32.
12. Андрейченко А. С., Консервативное правопонимание в Росии XIX-XX вв.: Дисс... канд. юрид. наук. М., 2006.

Համբարձումյան Գ. – ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ, էլիաս-ցե՝ gagik.hambardzumyan1@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 18.10.2024 թ., տրվել է գրախոսության 18.10.2024 թթ., երաշխավորվել է իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ. Սաֆարյանի կողմից, ընդունվել է տպագրության 20.01.2025 թ.:

<https://doi.org/10.59546/18290744-2024.10-12-10>

ԼԻԼԻԹ ՖԱՆԱՐՋՅԱՆ
«Երզրաղլույս» ՓԲԸ,
տնօրենի խորհրդական, փաստաբան

LILIT FANARJYAN
“Yerqaghluys” CJSC,
Advisor to the Director, Advocate

ЛИЛИТ ФАНАРДЖЯН
ЗАО «ЕРГОРСВЕТ»,
Советник директора, адвокат

ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԱՍՏԵՂԾ ԿԱՊԵՐԸ

SYSTEM CREATING CONNECTIONS, CONCEPT AND STRUCTURE OF THE LEGAL SYSTEM

СИСТЕМООБРАЗУЮЩИЕ СВЯЗИ, КОНЦЕПЦИЯ И СТРУКТУРА ПРАВОВОЙ СИСТЕМЫ

Ներածություն

Իրավական համակարգը հասարակական կյանքի կարևորագույն բաղադրիչներից մեկն է, որը ձևավորվում և զարգանում է սոցիալական, տնտեսական, քաղաքական ու մշակութային տարբեր գործոնների ազդեցությամբ: Այն կազմված է մի շարք փոխկապակցված տարրերից, որոնք գործում են որպես ամբողջություն՝ ապահովելով իրավունքի կարգավորման և հասարակական հարաբերությունների կազմակերպման գործառույթները: Իրավական համակարգը ոչ միայն ներառում է դրական իրավունքը և դրա կիրառման մեխանիզմները, այլև արտացոլում է հասարակության մեջ առկա բացասական երևույթները, ինչպես նաև իր փոխազդեցությունն արտաքին միջավայրի հետ:

Իրավական համակարգը մշտապես դինամիկ է, ենթարկվում է փոփոխությունների, որոնք պայմանավորված են թե ներքին հարաբերությունների, թե արտաքին միջավայրի ազդեցությամբ: Անցումային ժամանակաշրջաններում համակարգը հատկապես դինամիկ կերպով արձագանքում է նոր սոցիալական և քաղաքական պահանջներին, որտեղ դրա բաղադրիչների միջև կապերն ու փոխազդեցությունը կարող են հանգեցնել համակարգի փոփոխությունների: Այս հոդվածում քննարկվում է իրավական համակարգի կառուցվածքի բարդությունը, դրա աշխատանքը և արտաքին միջավայրի հետ փոխհարաբերությունների դերը, ինչպես նաև այն, որ իրավական համակարգը չի կարող արդյունավետ գործել առանց սերտ փոխազդեցությունների բոլոր իր բաղադրիչների միջև:

Հիմնական հետազոտություն

Իրավական համակարգի դինամիկ զարգացումը և դրա ազդեցությունը.

Օրենքը բարդ, բազմակառուցվածքային, համակարգային գոյացություն է, որն ունի բոլոր հիմնական հատկությունները, որոնք բնորոշ են ընդհանրապես համակարգերին: Օրենքի բոլոր համակարգային հատկանիշները ներկայացվում են դրա սկզբունքների, աղբյուրների, կառուցվածքային մասերի և իրավաբանական տերմինաբանության միջոցով, ինչը նպաստում է օրենքի ամբողջական ընկալմանը և կիրառմանը:

Այսպիսով, օրենքը ոչ միայն սահմանում է իրավական կանոններ, այլև ապահովում է համակարգի ներդաշնակությունը՝ գործելով որպես ոչ միայն առանձին իրավական նորմ, այլև որպես համակարգ, որը, ամրապնդելով օրենքը, ունի ընդհանրական ու համապարփակ մոտեցում՝ նպաստելով իրավական կարգի ստեղծմանը և պահպանմանը:

Անժխտելի է, որ «իրավական համակարգ» հասկացության կիրառումը պետք է լինի ամբողջ իրավական իրականությանը որպես մեկ օբյեկտ, համակարգված մոտեցման արդյունք: Մեր օրերում ազգային իրավական համակարգերի թիվը մոտ 200 է: Իրավական գրականության մեջ կան «իրավական համակարգ» հասկացության 10-ից մի փոքր ավելի սահմանումներ: Արտասահմանյան իրավագիտության մեջ (հատկապես անգլո-սաքսոնական) «իրավական համակարգ» տերմինը պատշաճ զարգացում չի ստացել, ինչպես իրավունքի այլ ընդհանուր տեսական կատեգորիաները: Այսպես, ամերիկյան իրավագիտության ներկայացուցիչ Վ. Վայդլիխը գրում է. «Իրավական համակարգ» տերմինն օգտագործվում է պարզապես տարբեր ժողովուրդների իրավական համակարգի պատմական, իրավական և էթնոմշակութային տարբերությունները բնութագրելու համար»: «Իրավական համակարգերի նույնականացումն առաջին հերթին պատմական նշանակություն ունի»¹:

Նկատի ունենալով իրավական համակարգի սահմանման հարցում կարծիքների բևեռականությունը՝ ուշադրություն դարձնենք այն փաստին, որ հեղինակներն առանձնացնում են իրավական համակարգի բաղադրիչների ամենատարբեր խմբերը, և դրանց ընտրության չափանիշները դեռևս չկան: Այս բացը բացասաբար է անդրադառնում համակարգի բաղադրիչ կազմի հստակության վրա, որն ավանդաբար չի նկարագրվում գիտական գրականության մեջ: Իրավական համակարգում միավորվեցին հասարակության իրավական ներկայացուցչությունները, նրա մշակույթը և հոգեբանությունը: Դրանով է բացատրվում իրավական համակարգում տարբեր իրավական երևույթների համադրման հնարավորությունը, այս կատեգորիայի բազմաչափ լինելը, ինչպես նաև համակարգի բաղադրիչները ճանաչելու և դասակարգելու դժվարությունը: Ուստի կարելի է ասել, որ իրավական համակարգի կառուցվածքի բարդությունն այն պայմանավորող սոցիալական հարաբերությունների բարդության արտացոլումն է: Հեղինակներից շատերը (Ն. Ի. Մատուզով, Ա. Ֆ. Չերդանցև, Ն. Ա. Բոգդանովա, Ս. Յու. Մարոսկին և ուրիշներ) իրավական համակարգը ներկայացնում են որպես սինթետիկ հայեցակարգ, որն արտացոլում է հասարակության մեջ տեղի ունեցող իրավական երևույթների ողջ շրջանակը²:

Իրավական համակարգի նկատմամբ մոտեցումը՝ այն որպես «ամեն ինչ օրինական» որակելու միջոցով, կարող է գերիշխող ճանաչվել իրավական գիտության մեջ: Խորհրդային

¹ Weidlich W., Stability and Cyclicity in Law System. New York, 1995. P. 241.

² Տե՛ս, օրինակ՝ Матузов Н.И., Правовая система развитого социализма // Советское государство и право. 1983. №1. С. 20; Богданова Н.А., Новые подходы к характеристике науки конституционного права на современном этапе // Актуальные проблемы юридической науки. Курск, 1998. С. 5-6; Судебная практика в советской правовой системе. М., 1975:

շրջանում, թերեւս, միայն Լ. Ս. Յավիչը դեմ է արտահայտվել բոլոր իրավական երևույթները, առանց բացառության, «իրավական համակարգ» հասկացության մեջ ներառելուն: Այն ամենը, ինչ գտնվում է օբյեկտի ներսում և սերտորեն կապված է դրա հետ, դրա տարրը չէ: Տարրը համակարգի անհրաժեշտ, ֆունկցիոնալ միավորն է: Իսկ համակարգի տարրերի անհրաժեշտ և բավարար հավաքածուն կոչվում է նրա կազմը: Իրավական բոլոր երևույթների առատությունից առավել նպատակահարմար է իրավական համակարգի տարրերին վերագրել այն, ինչ անհրաժեշտ է հասարակական կյանքի վրա իրավական ազդեցության արդյունավետ գործընթացի, իրավունքի սուբյեկտների գիտակցության և վարքագծի վրա նպատակային շահավետ ազդեցության համար: Իրավական համակարգում երևույթների ընտրության նման չափանիշը պայմանավորված է մի շարք գործոններով՝ քաղաքակիրթ իրավական համակարգի նպատակներով, նրա գենետիկ և ֆունկցիոնալ ասպեկտներով և վերջապես՝ իրավունքի բուն հայեցակարգով, որն արտահայտում է համամարդկային արժեքները: Անցումային շրջանում իրավական համակարգի տարրերը ճգնաժամ են ապրում իրենց կազմակերպչական, գործառական և այլ առումներով: Իրավական համակարգի յուրաքանչյուր տարր նման պայմաններում կլանում է բազմաթիվ բացասական հատկանիշներ՝ պայմանավորված համակարգային ճգնաժամով:

Իրավական համակարգի կառուցվածքը և բաղադրիչները.

Իրավական համակարգի տարրերի վիճակը բնութագրող բացասական երևույթները ներառում են իրավունքի բացերը, իրավական նիհիլիզմը, իրավունքի աղբյուրների բազմակարծությունն ու անհամապատասխանությունը և այլն: Վերլուծելով իրավական համակարգի կառուցվածքը՝ կարևոր է հաշվի առնել, որ հետազոտությունը պետք է ներառի ոչ միայն այն, թե ինչ տարրերից է բաղկացած համակարգը, այլև այն, թե ինչպես են դրա տարրերը փոխկապակցված: «Կառուցվածք» հասկացությունը նեղ իմաստով չի կարող ընկալվել որպես մի ամբողջություն կազմող տարրերի ամբողջություն: Համակարգի կառուցվածքը նաև նրա ֆունկցիոնալ բաղադրիչների միջև ուղիղ և հետադարձ կապերի ամբողջությունն է: Իրավական համակարգի վերաբերյալ գրականության մեջ համակարգի բաղադրիչների միջև կապերը դեռևս ուսումնասիրված չեն: «Կառուցվածք» հասկացությունը սերտորեն կապված է «համակարգ» հասկացության հետ, սակայն դրանց միջև կա տարբերություն՝ կառուցվածքը, այսպես ասած, «ներկայացնում է» համակարգը, կազմում է այն, արտահայտում է համակարգի տարրերի գոյության և կապի եղանակը, «կառուցվածք» հասկացությունն այսպիսով օգնում է բացահայտելու նյութի ավելի խորը բովանդակությունը: Այն թույլ է տալիս հասկանալ, թե ինչու է համակարգի որակը որպես ամբողջություն տարբերվում դրա բաղկացուցիչ տարրերի որակների հանրագումարից: Կառույցի էական առանձնահատկությունը նրա ամբողջական բնույթն է: Իրավական համակարգի կառուցվածքն ուսումնասիրելիս հետազոտողը ստիպված է կենտրոնանալ հասարակության իրավական ոլորտի կառուցվածքի վրա: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ իրավական համակարգի կառուցվածքը հանրային կյանքի իրավական ոլորտի փաստացի գոյություն ունեցող կառուցվածքի որոշակի մասն է: Իրավական համակարգը գործում է որպես օրենք կամ դրա առանձին մաս: Օրենքի կառուցվածքը հավասարապես արտահայտում է կայունությունն և դրա զարգացումը: Այս մոտեցմամբ Իրավական համակարգի կառուցվածքը թույլ է տալիս ստանալ ոչ միայն ստատիկ, այլև դինամիկ օբյեկտ: Կառուցվածքն իրավական համակարգի հիմնական կայունացնող գործոնն է, որը թույլ է տալիս պահպանել դրական փորձն՝ իր նպատակներին հասնելու համար: Մյուս կողմից, կառուցվածքը, ցույց տալով տարրերի փոխազդեցությունը իրենց և արտաքին միջավայրի միջև, պատասխանում է այն հարցին, թե ինչ պայմաններում որակապես սահմանված իրավական համակարգը կփո-

խարինվի մյուսով: Շատ հեղինակներ նշում են սերտ հարաբերություններ օբյեկտի կառուցվածքի և որակի միջև: Կառուցվածքի էական փոփոխությունն, անշուշտ, կրեթի իրավական համակարգի որակի փոփոխություն, դրա անցում որակական այլ վիճակի: Դա պայմանավորված է նրանով, որ համակարգի կառուցվածքում տարրերի միջև կապի մեկ տիպիկ եղանակը փոխարինվում է մյուսով: Ուստի օբյեկտի կառուցվածքային բնույթի ճանաչումը նրա ինքնաշարժման աղբյուրը հասկանալու պայմաններից մեկն է: Ավանդաբար իրավական գրականությունը չի տարբերում համակարգերի տարրերն ու բաղադրիչները: Այնուամենայնիվ, դրանք նույնական կատեգորիաներ չեն: Փիլիսոփայական գրականության տարրերը կոչվում են համակարգի այնպիսի բաղադրիչներ, որոնք ներկայացնում են դրա բաժանման սահմանը: Ըստ Վ.Գ. Աֆանասև, տարրը հենց այս որակի անբաժանելի, վերջին կրողն է: Համակարգի բաղադրիչները պետք է տարբերվեն համակարգի մասերից: Ցանկացած կամայականորեն ընտրված տարրերի խումբ կարող է լինել համակարգի մաս: Բաղադրիչը (տարրը, ենթահամակարգը) համակարգում ունի որոշակի նպատակ՝ կատարելով որոշակի գործառնություններ այլ բաղադրիչների նկատմամբ և, հետևաբար, սերտորեն կապված է դրանց հետ: Հետևաբար, երբ որևէ բաղադրիչ դուրս է մնում իրավական համակարգի կազմից կամ դրա արմատական փոփոխությունից հետո, առաջանում է որակապես նոր համակարգ: Համակարգի «վիճակը» կարելի է համարել հատկանիշ, այսինքն՝ նրա անփոխարինելի մասը: Ըստ Ս. Ս. Ալեքսեևի՝ իրավունքի սկզբունքները չեն կարող առանձնացվել որպես իրավական համակարգի անկախ տարր³: Դժվար է համաձայնել Յու. Ա. Տիխոմիրովի հետ, ով ողնաշարային կապերն անվանում է իրավական համակարգի անկախ տարր⁴: Ելնելով կառուցվածքի ըմբռնումից՝ որպես այն կազմող բաղադրիչների փոխազդեցության միջոց, կարող ենք եզրակացնել, որ կապերը հենց կառուցվածքն են, այլ ոչ թե նրա առանձին տարրը:

Իրավական համակարգի բաղադրիչ կազմը որոշելիս անհրաժեշտ է առնվազն մի քանի հանգամանք հաշվի առնել՝ նախ, այն փաստը, որ իրավական համակարգը ներառում է բոլոր այն իրավական երևույթները, որոնք անհրաժեշտ և բավարար ֆունկցիոնալ միավորներ են, որոնք նախատեսված են հասարակական կյանքի վրա իրավական ազդեցության համար և կազմում են դրա ուղղակի բովանդակությունը: Երկրորդ, իրավական համակարգն իր շրջանակում ներառում է ձևավորման, համակարգման գործընթացները, գաղափարական հիմնավորումը և օրենքի կիրառումը: Ի վերջո, կարևոր է հաշվի առնել տարբերությունը իրավական համակարգի բաղադրիչների և տարրերի միջև: Իրավական համակարգի անկախ բաղադրիչներն են՝ ա) դրական իրավունք, բ) իրավունքի ձևավորում, գ) իրավունքի իրականացում, դ) իրավագիտակցություն: Իրավական պրակտիկան, ըստ ռուս իրավագետների, պետք է հասկանալ որպես հասարակական գործունեություն՝ հիմնված հասարակության մտավոր հոգևոր հիմքի վրա⁵: Հետևաբար, իրավական պրակտիկան ներառում է բոլոր գործողությունների համար օրենքի վերարտադրում:

Իրավական համակարգի ներքին և արտաքին միջավայրի հետ կապերը.

Օրինական ցանկացած հասարակության համակարգ ակտիվորեն փոխազդում է արտաքին միջազգային իրավական համակարգի հետ: Ազգային իրավական համակարգում փոխգործակցության և փոխներթափանցման արդյունքում ձևավորվում են համեմատաբար

³ Алексеев С.С., Общая теория права. М., 1981. Т. 1. С. 98.

⁴ Тихомиров Ю.А., Правовая система развитого социалистического общества // Советское государство и право. 1979. №7. С. 33.

⁵ Леушин В.И., Юридическая практика в системе социалистических общественных отношений. Красноярск, 1987. С. 192.

անկախ իրավական զանգվածներ: Որպես իրավական ենթահամակարգ կարող է ճանաչվել որոշակի երկրի տարածքում գործող միջազգային իրավական նորմերի ամբողջությունը: Հասարակության իրավական համակարգի բազմաթիվ ենթահամակարգերի բացահայտումից բացի, հնարավոր է դասակարգել դրա տարրերը: Այնուամենայնիվ, հնարավոր չէ տալ այս տարրական միավորների սպառիչ ցուցակը: Միևնույն ժամանակ, չի կարելի անտեսել այն փաստը, որ անցումային ժամանակաշրջաններում իրավական համակարգի տարբեր բաղադրիչներ կորցնում են իրենց հնացած տարրերը՝ ինտեգրվելով նորերին և ենթարկվելով հետագա տարբերակման: Բացահայտելով իրավական համակարգի բաղադրիչ կազմը՝ անհրաժեշտ է սահմանել հարաբերակցությունը դրա և դրական իրավունքի միջև: Իրավաբանների մի մեծ խումբ մեկնաբանում է իրավական համակարգը իրավունքի լայն իմաստով: Ս.Ս. Ալեքսեևը կարծում է. «... որ օրենքը ընդունվում է իր հետ միասնության դրսևորումներով՝ իր իրավական իրականության «ուղեկցող» բաղադրիչներով»⁶: Այնուամենայնիվ, իրավունք հասկացությունը չի համապատասխանում իրավականի մյուս բոլոր բաղադրիչներին՝ իրավաձևավորում, իրավակիրառություն, իրավագիտակցություն:

Իրավական համակարգի կառուցվածքում ավելի խորը «ընկղմվելը» իր բաղադրիչ կազմի առումով հանգեցնում է իրավական համակարգի ասպեկտների բացահայտման անհրաժեշտությանը: Վ. Դ. Պերևալովը և Ա. Ա. Յուգովն ընդգծում են իրավական համակարգի հետևյալ ասպեկտները. առարկայական՝ ընդգծելով իրավական համակարգի համակարգ ձևավորող նյութական գործոնների իրավունքի սուբյեկտների կարգավիճակը՝ որպես ինտելեկտուալ և հոգեբանական, ընդգրկելով իրավական հասկացողություն և իրավական գիտակցություն (անհատական և հասարակական), նորմատիվ-կարգավորիչ (իրավական նորմեր, որոնք միասին կազմում են դրական իրավունք), կազմակերպչական և գործունեության, որն ընդգրկում է իրավաբանորեն ֆորմալացված կապերն ու հարաբերությունները, իրավունքի իրականացման ձևերը, մարդկանց օրինական վարքագծի տարբեր տեսակները, պետության և հասարակության օրինաստեղծ և իրավապահ գործունեությունը և, վերջապես, սոցիալական արտադրողական կողմը, որն արտացոլում է որոշակի սոցիալական. հասարակական կյանքի վրա իրավական ազդեցության արդյունքները⁷: Իրավական համակարգի ասպեկտների այս բնութագիրը, կարելի է համարել համապարփակ՝ որոշ պարզաբանումներով: Իրավունքի ձևավորման բազմազան գործընթացները ցուցադրելու համար կարելի է առանձնացնել իրավական համակարգի գենետիկական կողմը: Հեղինակները նշում են ստատիկ ասպեկտը որպես իրավական նորմերի մի շարք, առանձնացվում են տվյալ հասարակությանը բնորոշ սկզբունքները, ինստիտուտները և տեսակետները, ինչպես նաև իրավական համակարգի դինամիկայի, օրենսդրության, իրավունքի կիրառման, ներառյալ իրավահարաբերությունների առաջացումը, փոփոխությունը և դադարեցումը⁸: Այնուամենայնիվ, անցումային իրավական համակարգի երևույթը կասկածի տակ է դնում այս կայացած գաղափարները: Անցումային շրջանում իրավական համակարգի բոլոր բաղադրիչները չափազանց շարժունակ և փոփոխական են դինամիկ զարգացող արտաքին միջավայրի ազդեցության տակ: Նույնիսկ եթե իրավական համակարգի տարածական կառուցվածքը դիտարկենք այսպես կոչված ստատիկ, իսկ ժամանակային կառուցվածքը՝ «դինամիկ» առումով, ապա դինամիզմն ինքն իրեն բացահայտում է և՛ այնտեղ, և՛ այնտեղ: Իրավական տարածքն անցումային պայմաններում

⁶ Алексеев С.С., Право и правовая система // Правоведение. 1980. №1. С.32.

⁷ Перевалов В.Д., Югов А.А., Проблемы формирования правовой системы в свете Конституции РФ 1993 г. // Российский юридический журнал. 1998. №1. С. 9.

⁸ Правовая система социализма: Понятие, структура, социальные связи. Кн. 1. М., 1986. С. 39.

մշտական փոփոխության մեջ է: Գործող կարգավորող իրավական ակտերում կատարվում են բազմաթիվ, կրկնվող փոփոխություններ ու լրացումներ, փոխվում է օրինաստեղծ մարմինների իրավասությունը, անկայուն է նաև իրավակարգավորման առարկան: Այնուամենայնիվ, կայուն իրավական համակարգի առնչությամբ ստատիկ և դինամիկ ասպեկտների բաշխումը նույնպես խնդրահարույց է թվում: Իրավական համակարգը որպես ամբողջություն գործում է, որպես ոչ միայն իրավական համակարգ, այլև դրա յուրաքանչյուր բաղադրիչ: Իրավական համակարգում չեն կարող լինել ոչ ակտիվ բաղադրիչներ: Համակարգի համար ցանկացած մասերի անգործությունը կասեցնում է ամբողջ համակարգի աշխատանքը կամ նույնիսկ ոչնչացնում վերջինիս, քանի որ պարզ ամբողջականությունը պահպանելով՝ կորցնում է համակարգայինության որակը: Խոսքը ներկա իրավական համակարգի մասին է ոչ թե որպես այս պահին սառեցված բաղադրիչների համակարգի, այլ որպես դինամիկ համակարգի, որը գտնվում է մշտական զարգացման փուլում: Այդ իսկ պատճառով դինամիկայի մեջ արժե դիտարկել ինչպես ամբողջ իրավական համակարգը որպես ամբողջություն, այնպես էլ դրա յուրաքանչյուր բաղադրիչ առանձին-առանձին: Բաղադրիչների միացման մեթոդի միջոցով կառուցվածքի սահմանումը թույլ է տալիս ցանկացած համակարգում հաստատել ներքին ընդհանրություն, ինտեգրատիվ, ամբողջական, որակական բնութագրեր: Սերտ կապերի և հարաբերությունների շնորհիվ համակարգի բաղադրիչների ամբողջությունը վերածվում է համահունչ ամբողջության, որտեղ յուրաքանչյուր բաղադրիչ, ի վերջո, կապված է բոլոր մյուս բաղադրիչների հետ, և դրա հատկությունները հնարավոր չէ հասկանալ առանց այս կապը հաշվի առնելու: Համակարգ ձևավորող կապերը կարող են սահմանվել որպես մշտական, սերտ հարաբերություններ մեկ համակարգի բաղադրիչների և այս համակարգի և նրա արտաքին միջավայրի միջև, որոնք ապահովում են համակարգի ամբողջականության հատկությունը: Հնարավոր է համակարգի ներսում առկա բոլոր կապերը և արտաքին աշխարհի հետ բոլոր հարաբերությունները որպես համակարգ ձևավորող ճանաչել: Վ. Գ. Աֆանասիևը, Վ. Ն. Սադովսկին, Ա. Մ. Վասիլևը և մի շարք այլ հեղինակներ կարծում են, որ համակարգի միայն ներքին կապերն են համակարգ ձևավորող⁹: Նրանց կարծիքով՝ արտաքին կապերն ապահովում են միայն համակարգի հաղորդակցությունը արտաքին պայմանների հետ, էներգիայի և դրա գործարկման համար անհրաժեշտ տեղեկատվության հոսքը համակարգ: Ս. Վ. Պոլենինան, ընդհակառակը, անվանում է միայն գենետիկ (արտաքին) կապերը որպես համակարգ ձևավորողներ, նրանց կողմից հասկանալով այն կապերը, որոնք առաջանում են իրավական համակարգի ձևավորման և արտաքին միջավայրի հետ դրա հետագա փոխազդեցության գործընթացում¹⁰: Երկու դիրքորոշումներն էլ միակողմանի են թվում, քանի որ համակարգի ձևավորման աղբյուրը տեսնում են կամ համակարգի ներսում, կամ արտաքին միջավայրում: Համակարգի ներսում բաղադրիչների փոխազդեցությունը առաջացնում է դրա ինտեգրացիոն հատկությունները, իսկ համակարգի փոխազդեցությունն արտաքին միջավայրի հետ՝ որպես ամբողջություն, ապահովում է համակարգի առանձին գոյությունը, գործունեությունը և զարգացումը: Ռ. Իերինգը գրել է, որ իրավունքն առանց դրա համակարգված կապի չի կարող ընկալվել, սակայն «համակարգը, ինչպես իրավունքի, այնպես էլ ցանկացած այլ առարկայի մեջ, չպետք է դրսից ներմուծվի դրա մեջ, այլ պետք է վերցվի հենց սուբյեկտից»¹¹: Չհամաձայնվելով այն փաստի հետ, որ առարկայի համակարգային բնույթը պայմանավորված չէ

⁹ *Афанасьев В.Г.*, Системность и общество... с. 122; *Садовский В.Н.*, Основания общей теории систем. М., 1974. с. 84; *Правовая система социализма*. Кн. 1. М., 1986. с. 10.

¹⁰ *Поленина С.В.*, Система советского законодательства // Советское государство и право. 1975. №11. С. 22.

¹¹ *Иеринг Р.*, Дух римского права на различных ступенях его развития. СПб., 1875. С. 31.

արտաքին գործոններով, մենք նշում ենք համակարգի բաղադրիչների միջև ներքին կապերի ավելի մեծ կայունությունը՝ համակարգի բաղադրիչների միջև ներքին կապերն ավելի կարևոր են ինտեգրալ համակարգի գործարկման համար, քան համակարգի միացումները շրջակա օբյեկտների հետ, ինչը չի նվազեցնում ինչպես այդ, այնպես էլ այլ կապերի համակարգային նշանակությունը: Համակարգի ներքին կապերը միասին առաջացնում են իրավական համակարգի ինքնորոշումը նրա զարգացման յուրաքանչյուր կոնկրետ ժամանակահատվածում:

Իրավական համակարգի ընդհանուր կառուցվածքը բաժանված է առանձին կառուցվածքային մակարդակների: Իրավական համակարգում յուրաքանչյուր բաղադրիչ դրսևորում է իր ֆունկցիոնալ հատկությունները ոչ միայն իր կառուցվածքի միջոցով, այլև փոխազդելով այլ մակարդակների բաղադրիչների հետ հարակից կառույցների միջոցով, համակարգի ողջ հիերարխիայի միջոցով: Իրավական ոլորտում ենթակայության ասպեկտները բազմազան են. դրանք հանգում են իրավական գործունեության սուբյեկտների ենթակայությանը, իրավունքի ճյուղերի հիերարխիային, նորմատիվ ակտերում իրավական նորմերի տեղաբաշխման հաջորդականությանը և այլն: Սուբորդինացիայի կապն ամրապնդում և ամրացնում է իրավական համակարգի բաղադրիչների շարունակական տարբերակումը: Համակարգի ցանկացած բաղադրիչ որոշվում է ոչ միայն նրա հետ անմիջականորեն կապված բաղադրիչներով, այլ նաև մյուսների հետ, որոնց հետ կապերն անուղղակի են, առաջին հայացքից՝ պատահական: Իրավական համակարգը, իրեն բնորոշ ներքին կապերի շարքի հետ միասին, ունի արտաքին կապերի մի շարք: Իրավական համակարգի արտաքին համակարգ ձևավորող հարաբերությունների ներքո կարելի է հասկանալ արտաքին միջավայրի հետ այնպիսի հարաբերություններ, որոնք նպաստում են իրավական համակարգի առաջացմանն ու զարգացմանը: Համակարգային տեսության տերմինաբանության համաձայն՝ իրավական համակարգը «բաց» համակարգ է, քանի որ այն որոշվում է արտաքին միջավայրով, կախված է դրանից և զարգանում է դրան զուգահեռ: Իրավական համակարգի գործունեությունը ենթադրում է ակտիվ փոխազդեցություն արտաքին միջավայրի հետ: Ուստի իրավական համակարգը ուսումնասիրելիս անհրաժեշտ է հասկանալ դրա տեղը, դերն ու նշանակությունը տնտեսական, սոցիալական, քաղաքական և մշակութային պայմանների ամբողջության մեջ: Ինչպես նշել է Վ. Ն. Կուդրյապցևը, «նյութի զարգացման տարբեր մակարդակների հետ կապված սոցիալական երևույթների պատճառահետևանքային փոխազդեցությունների ավելի ամբողջական վերլուծության համար պետք է անցնել բարդ սոցիալական համակարգերի վերլուծությանը: Իսկ հասարակական կյանքում բացասական երևույթները, այդ թվում՝ սոցիալական դեֆորմացիաները, ի վերջո բացատրվում են սոցիալական զարգացման ընդհանուր գործընթացներով, մարդկային կյանքի լայնածավալ փոփոխություններով»¹²:

Իրավական համակարգը կոչված է ազդելու հասարակական կյանքի վրա և ստիպված է հաշվի նստել իր պետության հետ: Ուստի իրավունքն ինքնին հասկանալի չէ, ինքնաբավ չէ: Իրավական համակարգն արտացոլում է սոցիալական զարգացման խորը տրամաբանությունը: Իրավական ոլորտում տեղի ունեցող գործընթացների վերլուծությունը մեթոդաբանորեն կապված է իրավական ոլորտում սոցիալական անհրաժեշտության կրող սոցիալական հարաբերությունների ամբողջության առանձնահատկությունների ուսումնասիրության հետ¹³: Այստեղից բխում է, որ իրավական համակարգի համակարգային բնույթը որոշվում է այդ սոցիալական երևույթի համակարգային բնույթի միջոցով: Արտաքին միջավայրը և խթանող, և

¹² Кудрявцев В.Н., Социальные деформации, М., 1992. с. 361.

¹³ Копейчиков В.В., О предмете юридической науки и науки общей теории государства и права // Актуальные проблемы теории государства и права. М., 1974. с. 41- 42.

ճնշող ազդեցություն ունի իրավական համակարգի վրա՝ և ամրապնդելով, և քայքայելով այն: Արտաքին միջավայրը կարող է արագացնել կամ դանդաղեցնել իրավական համակարգում գործընթացների ընթացքը, նրանց տալ տարբեր ձևեր ու հատկություններ կամ նույնիսկ ընդհանրապես կասեցնել դրանք: Եթե իրավական համակարգի արտաքին միջավայրում գործեն բավականաչափ կայուն սոցիալական գործոններ, ապա համակարգի վարքագիծը նույնպես երկար ժամանակ կայուն կմնա: Իրավական համակարգը, հետադարձ կապի միջոցով ակտիվորեն ազդելով արտաքին միջավայրի վրա, կարողանում է հարթեցնել իր համար վտանգավոր գործոնները՝ մեղմելով սոցիալական հակասությունները: Մյուս կողմից, նույնիսկ նոր պայմաններին ոչ պիտանի իրավական համակարգը կարող է որոշ ժամանակ գոյատևել՝ պայմանավորված զարգացման պահպանողական միտումների վերարտադրմամբ: Արտաքին համակարգ ձևավորող հարաբերությունների շնորհիվ իրավական համակարգի բաղադրիչները ստանում են որոշակի ընդհանուր գեներտիկ հիմք: Արտաքին միջավայրի բազմաթիվ գործոններ ձեռք են բերում օրինաստեղծի նշանակություն, քանի որ դրանցում է ծնվում և բացահայտվում ապագա իրավակարգավորման օբյեկտը: Իրավական համակարգը շատ ցավոտ է արձագանքում արտաքին միջավայրում սոցիալական նոր գործոնների ի հայտ գալուն, քանի որ իրավական համակարգը ոչ միայն ձևավորվում և զարգանում է արտաքին միջավայրի ազդեցության տակ, այլ, իր հերթին, կարգավորում և պաշտպանում է արտաքին միջավայրը: Հետադարձ կապը կառավարման հիմնական սկզբունքն է, որի դեպքում համակարգում տեղի ունեցող փոփոխությունների հակադարձ ազդեցությունն իրականացվում է դրանք առաջացնող պատճառների վրա: Իրավական համակարգն ինքնին հանդես է գալիս որպես հասարակական կյանքի համար որոշակի հետևանքներ առաջացնող գործոններից մեկը:

Արդյունավետ իրավական համակարգն ի վիճակի է ճնշող ազդեցություն ունենալ սոցիալական բացասական երևույթների վրա, խթանել ցանկալի հարաբերությունների առաջացումը և կայունացնել սոցիալական գործընթացները: Այս առումով իրավական համակարգն իրեն հարմարեցնում է միջավայրը: Բացի դրանից՝ համակարգը, ազդելով արտաքին միջավայրի վրա, ստանում է հետադարձ տեղեկատվություն այս ազդեցության արդյունքների վերաբերյալ: Իրավական համակարգի և արտաքին միջավայրի միջև ուղղակի և հետադարձ կապերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ անցումային շրջանում հասարակության բարեփոխման խնդիրը չի կարող հաջողությամբ լուծվել առանց վերափոխումների հասարակության բոլոր ոլորտներում: Իրավական համակարգի կառուցվածքը խիստ կարգավորված է, եթե բոլոր բաղադրիչները միմյանց հետ կապված են կոշտ կախվածությամբ, առկա է ենթահամակարգերի գործառույթների խիստ ենթակայություն, և ամբողջ համակարգը գործում է խիստ դետերմինիստական այգորիթմի համաձայն: Նման համակարգում իրավական ենթահամակարգերը վարքագծի մեջ ընտրություն չունեն, դրանց գործառույթները սահմանված են, և ցանկացած ինքնավարություն բացառված է: Իրավական համակարգի կապերն ու հարաբերությունները պետք է լինեն ոչ միայն կայուն, այլև նպատակահարմար, օպտիմալ: Քանի որ, եթե համակարգ ձևավորող կապերը թուլանան, իրավական համակարգը կկորցնի ամբողջականության որակը, ինչը հնարավորություն կտա դրա առանձին մասերը համարել անարդյունավետ և ամբողջից անկախ:

Իրավական համակարգի սահմանումը.

На основании всего анализа, проведенного в рамках данного исследования, считаем, что, с целью обеспечения надлежащей реализации прав и свобод налогоплательщиков, одним из возможных механизмов, направленных на разрешение существующей проблемы (т.е. без неизбежного проведения повторного администрирования) может быть законодательное предусмотрение проведения процедуры взыскания без проведения текущего этапа административного производства, т.е. без проведения слушаний (исключительно для взимания налоговых обязательств, возникших в силу закона), как, например, в случае с делами о нарушении правил дорожного движения, во время которых, согласно части 1 статьи 5 («Этапы административного производства») закона РА «Об особенностях административного производства по делам о нарушениях правил дорожного движения, выявленных с помощью видео- или фотосъемки» административное производство состоит из этапов установления признаков правонарушения и принятия административного акта. Из сказанного следует, что, с точки зрения наличия действенных механизмов обеспечения конституционного права

¹³ Например, из пункта 14 статьи 101 Налогового Кодекса РФ следует, что нарушение существенных условий процедуры рассмотрения материалов налоговой проверки является основанием для отмены вышестоящим налоговым органом или судом решения налогового органа о привлечении к ответственности за совершение налогового правонарушения или решения об отказе в привлечении к ответственности за совершение налогового правонарушения. К таким существенным условиям относится обеспечение возможности лица, в отношении которого проводилась проверка, участвовать в процессе рассмотрения материалов налоговой проверки лично и (или) через своего представителя и обеспечение возможности налогоплательщика представить объяснения. Кроме того, основаниями для отмены указанного решения налогового органа вышестоящим налоговым органом или судом могут являться иные нарушения процедуры рассмотрения материалов налоговой проверки, если только такие нарушения привели или могли привести к принятию руководителем (заместителем руководителя) налогового органа неправомерного решения.

URL: https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_19671/57a56875a8d21ff9e1f5af7ca590433c573150f4/

лица быть выслушанным, законодатель считает возможным проведение административного производства без проведения текущего этапа, ибо необходимость последней, как-таковая, отсутствует. Более того, учитывая важность гарантирования конституционно-правового требования обеспечения права лица быть выслушанным, проведение текущего этапа может быть обеспечено в рамках обжалования акта в порядке надзора, ибо практическая реализация права участников административного производства быть выслушанными может иметь место только на текущем этапе производства, когда административный орган проводит изучение фактов дела и устанавливает правовые акты, подлежащие применению; на данном этапе осуществляются основные действия, направленные на принятие административного акта, в частности, выявление обстоятельств, имеющих в пользу всех участников административного дела, в том числе участников производства, получение и оценка необходимых доказательств, всестороннее, полное и объективное обсуждение дела. Кроме того, слушания на текущем этапе административного производства должны проводиться с учетом того, чтобы участники производства имели бы возможность воздействия на решение административного органа.

Так, часть 2 статьи 287 КоАП РА («Порядок обжалования (опротестования) решения об административном правонарушении») устанавливает категории административных правонарушений, административные акты вмешательства по которым могут быть оспорены в судебном порядке только после обжалования (опротестования) в административном порядке. А, согласно части 2 статьи 70 («Порядок опротестования») Закона, протест в административном порядке может быть принесен в принявший акт: а) административный орган; б) вышестоящий административный орган административного органа.

В контексте вышесказанного считаем, что предусмотрение обязательного порядка досудебного обжалования по делам об оспаривании актов взыскания налогового органа по налоговым обязательствам, возникшим в силу закона, может послужить, в первую очередь, действенным механизмом обеспечения права лица быть выслушанным во время административного производства, а, во-вторых, разгрузит суды РА. Подобное законодательное изменение послужит эффективным методом предотвращения повторного производства, ибо исчезнет сама первопричина для признания большинства актов налогового органа недействительными.

Способом разрешения вопроса невозможности взыскания налогового обязательства, возникшего в результате налогового администрирования, может быть предусмотрено в части 1 статьи 45 Кодекса, устанавливающей основания прекращения налогового обязательства, нового основания прекращения налогового обязательства – когда выдвигающий налоговое обязательство административный акт вступившим в законную силу решением суда был признан недействительным¹⁴. Или же, невозможные к взысканию налоговые обязательства в силу наличия вступившего в законную силу решения суда о признании акта налогового органа недействительным могут быть признаны безнадежными к взысканию. В данных условиях налоговый орган сможет снять с учета непогашенное налоговое обязательство и на личном (лицевом) счету налогоплательщика данное обязательство не будет висеть как неисполненное и не повлечет дополнительных трудностей¹⁵. О необходимости развития законодательства в

¹⁴ При внесении изменений и (или) дополнений с указанным содержанием будет прекращено лишь то налоговое обязательство, которое было выдвинуто в результате проведения налогового контроля.

¹⁵ В некоторой степени аналогичное предлагаемой нами регулированию положение имеется в Налоговом Кодексе РФ, где согласно пункту 4 части 1 статьи 59 («Признание задолженности безнадежной к взысканию и ее списание»),

указанном русле свидетельствует также закрепившаяся в РА правоприменительная практика, в соответствии с которой со вступлением в законную силу решения суда о признании акта налогового органа недействительным налоговый орган утрачивает возможность «преодоления» данного судебного акта и произведения повторного администрирования с целью взыскания непогашенного налогового обязательства и привлечения лица к повторной налоговой ответственности.

Аннотация. Актуальность поднятого вопроса обусловлена «беспорядочным» поведением Комитета государственных доходов РА, в частности, несмотря на наличие уже вступившего в законную силу решения Административного суда о признании недействительным акта налогового органа на основании нарушения процессуальных правовых норм, последний «дублирует» обстоятельства дела и инициирует новое (двойное) администрирование с целью «исправления» допущенных в первичном производстве ошибок. Несмотря на то, что после признания акта налогового органа недействительным на основании нарушения процессуальной правовой нормы налоговое обязательство в объективной действительности продолжает существовать, на законодательном уровне отсутствуют механизмы взыскания непогашенного налогового обязательства без осуществления двойного администрирования, т.е. без неизбежного нарушения принципа *non bis in idem*.

Автор уделяет особое внимание проблемам, связанным с невозможностью взыскания налоговых обязательств, возникших как в силу закона, так и в результате налогового администрирования, в результате признания акта налогового органа недействительным на основании нарушения конституционного права лица быть выслушанным и вытекающими из этого правовыми последствиями, а также предлагает возможные варианты законодательных решений, направленных на разрешение поднятой проблемы.

Ամփոփագիր: Սույն հոդվածը նվիրված է հարկային մարմնի ակտն անվավեր ճանաչելու և կրկնակի վարչարարություն իրականացնելու արդյունքում առաջացած իրավական հետևանքների ուսումնասիրությանը: Բարձրացված խնդրի արդիականությունը պայմանավորված է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի «անկարգ» վարքագծով, մասնավորապես՝ չնայած ընթացակարգային իրավական նորմերի խախտման հիմքով հարկային մարմնի ակտն անվավեր ճանաչելու վերաբերյալ Վարչական դատարանի արդեն օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության՝ վերջինս «կրկնօրինակում է» գործի հանգամանքները և նախաձեռնում նոր (կրկնակի) վարչարարություն՝ առաջնային վարույթում թույլ տրված սխալները «շտկելու» նպատակով: Չնայած ընթացակարգային իրավական նորմի խախտման հիմքով հարկային մարմնի ակտն անվավեր ճանաչելուց հետո՝ հարկային պարտավորությունն օբյեկտիվ իրականության մեջ շարունակում է գոյություն ունենալ, բայց օրենսդրական մակարդակում բացակայում են չմարված հարկային պարտավորության գանձման մեխանիզմները՝ առանց կրկնակի վարչարարության իրականացման, այսինքն՝ առանց «*non bis in idem*» սկզբունքի անխուսափելի խախտման:

Հեղինակն առանձնակի ուշադրություն է դարձնում լավագույն լինելու սահմանադրական իրավունքի խախտման

безнадежной к взысканию признается задолженность, числящаяся за налогоплательщиком, плательщиком сборов, плательщиком страховых взносов или налоговым агентом и повлекшая формирование отрицательного сальдо единого налогового счета такого лица, погашение и (или) взыскание которой оказались невозможными, в случаях принятия судом акта, в соответствии с которым налоговый орган утрачивает возможность взыскания задолженности в связи с истечением установленного срока ее взыскания, в том числе вынесения им определения об отказе в восстановлении пропущенного срока подачи заявления в суд о взыскании задолженности. Несмотря на то, что и в данном случае законодательное регулирование касается лишь такого процессуального нарушения, как упущение установленного срока взыскания подлежащего выплате налога, тем не менее законодатель считает возможным признание налоговой задолженности лица безнадежной к взысканию в случае наличия вступившего в законную силу решения суда, в соответствии с которым налоговый орган утрачивает возможность взыскания задолженности.

հիմքով հարկային մարմնի ակտն անվավեր ճանաչելու հետևանքով ինչպես օրենքով առաջադրված հարկային պարտավորությունների գանձման անհնարինության, այնպես էլ հարկային վարչարարության արդյունքում առաջադրված հարկային պարտավորության գանձման անհնարինության և դրանցի բխող իրավական հետևանքների հիմնահարցերին, առաջարկում բարձրացված խնդրին ուղղված օրենսդրական լուծումների հնարավոր տարբերակներ:

Anotation. The relevance of the issue raised is due to the “disorderly” behavior of the RA State Revenue Committee, in particular, despite the existence of an Administrative Court decision that has already entered into force to invalidate an act of a tax authority on the basis of a violation of procedural legal norms, the latter “duplicates” the circumstances of the case and initiates a new (double) administration in order to “correct” the mistakes made in the primary production of errors. Despite the fact that after the recognition of an act of a tax authority as invalid on the basis of a violation of a procedural legal norm, the tax obligation continues to exist in objective reality, there are no mechanisms at the legislative level for collecting an outstanding tax obligation without double administration, that is, without an inevitable violation of the principle of *non bis in idem*.

The author pays special attention to the problems related to the impossibility of collecting tax obligations that arose both by virtue of the law and as a result of tax administration, as a result of the recognition of an act of a tax authority as invalid on the basis of violation of the constitutional right of a person to be heard and the legal consequences resulting from this, suggests possible legislative solutions aimed at resolving the raised problem.

Ключевые слова: административный акт, двойное администрирование, надлежащее администрирование, налоговое обязательство, конкуренция принципов, принцип законности, *non bis in idem*, вступивший в законную силу судебный акт.

Բանալի բառեր - վարչական ակտ, կրկնակի վարչարարություն, պարզաճ վարչարարություն, հարկային պարտավորություն, սկզբունքների մրցակցություն, օրինականության սկզբունք, «*non bis in idem*», օրինական ուժի մեջ մտած դատական ակտ:

Keywords: *administrative act, double administrative action, proper administrative action, tax obligation, competition of principles, principle of legality, non bis in idem, judicial act that has entered into force.*

СПИСОК ИСПОЛЬЗОВАННОЙ ЛИТЕРАТУРЫ

Нормативно-правовые акты

1. Конституция Республики Армения 2005 (с изменениями 2015 г.)
2. Закон Республики Армения «Об основах администрирования и административном процессе» ЗР-41-Н от 18.02.2004г. (первоисточник: ՀՀՊՏ 2004.04.14/21(320) Հոդ.413).
3. Налоговый Кодекс Республики Армения ЗР-165-Н от 04.10.2016г. (первоисточник: ՀՀՊՏ 2016.11.04/79(1259) Հոդ.1038).
4. Кодекс об административных правонарушениях Республики Армения от 06.12.1985г. (первоисточник: ՀՍՍՀԳՍ 1985/23).
5. Закон Республики Армения «Об особенностях административного производства по делам о нарушениях правил дорожного движения, выявленных с помощью видео- или фотосъемки» ЗР-238-Н от 26.12.2008г. (первоисточник: ՀՀՊՏ 2008.12.30/76(666) Հոդ.1421).
6. Налоговый Кодекс Российской Федерации от 31.07.1998г. № 46-ФЗ.
7. Սահմանադրական դատարանի 12.05.2020թ. ՍԴՈ-1529 որոշումը ՀՀ Վարչական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ Հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 66-րդ կետի՝ Սահմանադրությանը

համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով:

8. Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/6781/05/12 վարչական գործով 30.04.2015թ. որոշումը Գիրթա Հեյդարիմարանջեհն ընդդեմ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության:

9. Определение СКЭС ВС РФ от 23.05.2022 по делу № А55-12839/2020 ООО «СВТК».

10. Постановление Президиума ВАС РФ от 12.02.2008г. № 12566/07.

Научная и учебная литература

1. Демин А.В. Налоговое право России: Учеб. пособие / А.В. Демин; Федер. агентство по образованию; Краснояр. гос. ун-т; Юрид. ин-т. – Красноярск: РУМЦ ЮО, 2006. 329 с.

2. Евстафьева А.Х. Теоретические основы налогового администрирования. Известия Казанского государственного архитектурно-строительного университета, №3 (25), 2013, С. 125-133.

Алексян Л. - Ведущий специалист Экспертно-аналитического отдела Правового консультативного управления Аппарата Конститутивного суда Республики Армения, аспирант первого года обучения Российско-Армянского университета, эл. почта: l.aleksanyan@conpcourt.am.

Статья представлена в редакцию 28.10.2024 г., отправлена на рецензию 28.10.2024 г., рецензенты: Старший преподаватель кафедры теории права и конституционного права Российско-Армянского университета, судья Административного апелляционного суда РА, кандидат юридических наук, доцент, докторант Российско-Армянского университета Рафик Ханданян, принята к публикации: 20.01.2025.

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CRIMINAL LAW/УГОЛОВНОЕ ПРАВО

<https://doi.org/10.59546/18290744-2024.10-12-38>

ԱՐՄԱՆ ԲԱԲԱԽԱՆՅԱՆ

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորի օգնական,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի դասախոս

ARMAN BABAKHANYAN

Assistant to the Judge of the Criminal Chamber of the RA Cassation Court,
Lecturer at YSU Chair of Criminal Law

АРМАН БАБАХАНИЯН

Помощник судьи Уголовной палаты Кассационного суда РА,
Преподаватель кафедры уголовного права ЕГУ

**ՔՐԵԱԿԱՆ ԵՆԹԱՄՇԱԿՈՒՅԹԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ
ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ**

**SOME KEY ISSUES FOR THE LEGISLATIVE ENACTMENT OF TERMS
CHARACTERIZING CRIMINAL SUBCULTURE**

**НЕКОТОРЫЕ КЛЮЧЕВЫЕ ВОПРОСЫ ЗАКОНОДАТЕЛЬНОГО
ЗАКРЕПЛЕНИЯ ТЕРМИНОВ, ХАРАКТЕРИЗУЮЩИХ КРИМИНАЛЬНУЮ
СУБКУЛЬТУРУ**

Ներածություն

Քրեական ենթամշակույթի դեմ պայքար մղելու համար անհրաժեշտ քրեաիրավական նորմերին վերաբերող հիմնախնդիրների ուսումնասիրության ընթացքում, ի թիվս այլնի, էական նշանակություն ունի նաև նշված ենթամշակույթը բնութագրող եզրույթների օրենսդրական ամրագրման հիմնախնդիրները քննարկման առարկա դարձնելը:

Սույն հոդվածում անդրադարձ է կատարվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում¹ (այսուհետ նաև՝ գործող Օրենսգիրք) կիրառված հանցավոր ենթամշակույթ և քրեական ենթամշակույթ եզրույթներին ու դրանց հարաբերակցության հարցին: Բացի դրանից՝ փորձ է կատարվել հստակեցնել գողական խոսվածքի՝ գողական աշխարհում կիրառվող եզրույթների օրենսդրական մակարդակում օգտագործման թույլատրելիության սահմանները:

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, ընդունվել է 2021 թվականի մայիսի 5-ին, ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին, Միասնական կայք 2021.05.17-2021.05.30, Պաշտոնական հրապարակման օրը՝ 27.05.2021:

Հիմնական հետազոտություն

Քրեական ենթամշակույթը բնութագրող եզրույթների օրենսդրական ամրագրման հիմնահարցերի քննարկման շրջանակում, առաջին հերթին, հարկ է անդրադառնալ հանցավոր ենթամշակույթ և քրեական ենթամշակույթ եզրույթներին ու դրանց հարաբերակցությանը:

Ենթամշակույթը վարքագծի նորմերի և կանոնների, ավանդույթների, սովորույթների և արտաքին հատկանիշների համակցություն է, որոնք գոյություն ունեն մարդկանց որոշակի սոցիալական միկրոխմբում, որոնք միավորված են ինչ-որ ընդհանուր շահերով (մասնագիտական կամ այլ), պաշտպանվում են այս խմբի բոլոր անդամների կողմից և տարբերվում են հասարակությունում, ընդհանուր առմամբ, ընդունված շահերից: Ենթամշակույթը սովորաբար սահմանվում է որպես ընդհանուր համոզմունքների, հարաբերությունների և խորհրդանիշների համակարգ, որը տարբերակում է որոշակի միկրոխմբին մշակութային մեծ համայնքի շրջանակում²: Ենթամշակույթների, այսինքն՝ վարքագծի նորմերի, լեզվական կարգավորումների, ատրիբուտների, որոշակի բարոյական և նյութական արժեքների առկայությունը հանդիսանում են բնակչության՝ տարբեր սոցիալական և մասնագիտական խմբերի ու շերտերի գործունեության սոցիալ-հոգեբանական օրինաչափություններից մեկը³:

Այսպես, հանցավոր ենթամշակույթ եզրույթը գործող Օրենսգրքում օգտագործվում է միայն 238-րդ հոդվածում նախատեսված հանցակազմում (անչափահասին հանցանքի կատարմանը հակելը կամ դրան մասնակից դարձնելը), որով քրեական պատասխանատվություն է նախատեսված 18 տարին լրացած անձի կողմից անչափահասին հանցագործության հմտություններ սովորեցնելու, անչափահասի մեջ հանցավոր գաղափարախոսություն, հանցավոր ենթամշակույթի ավանդույթներ, հանցավոր վարքագծի կանոններ կամ սովորույթներ սերմանելու կամ հանցանքներ կատարելու քարոզի, ինչպես նաև անչափահասի նախաձեռնությամբ իր կամ այլ անձի կողմից կատարվող հանցանքին մասնակից դարձնելու համար:

Անչափահասի մեջ հանցավոր գաղափարախոսություն, հանցավոր ենթամշակույթի ավանդույթներ, հանցավոր վարքագծի կանոններ կամ սովորույթներ սերմանելը գործունեություն է, որն ուղղված է անչափահասի մոտ այնպիսի հատկանիշների ձևավորմանը կամ ամրապնդմանը, որոնք կհանգեցնեն նրա մոտ հանցավոր գաղափարախոսության, հանցավոր ենթամշակույթի ավանդույթների, հանցավոր վարքագծի կանոնների կամ սովորույթների ընդունմանը կամ նրան կդարձնեն այդ հանցավոր գաղափարախոսության, հանցավոր ենթամշակույթի ավանդույթների, հանցավոր վարքագծի կանոնների կամ սովորույթների կրող⁴:

Մինչնայն ժամանակ, գործող Օրենսգրքում քրեական ենթամշակույթ եզրույթը օգտագործվում է 16 անգամ: Մասնավորապես՝ գործող Օրենսգրքի 85-րդ հոդվածում (պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը) որպես դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատելիս հաշվի առնվող հանգամանք օրենսդիրը դիտարկում է քրեական ենթամշակույթի նկատմամբ ունեցած վերաբերմունքը, իսկ մնացած դեպքերում քրեական ենթամշակույթ եզրույթը կիրառվում է քրեական ենթամշակույթին առնչվող հանցակազմեր նախատեսող, գործող Օրենսգրքի 322-325-րդ հոդվածներում:

² Տե՛ս *Малинин В. Б., Трапидзе К. З.*, Культура и субкультура, Царскосельские чтения, 2014, №XVIII, էջ 150, (հասանելի է <https://cyberleninka.ru/article/n/kultura-i-subkultura> հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

³ Տե՛ս *Малинин В. Б., Измалков В. А.*, Социология культуры и субкультуры, Здоровье и образование в XXI веке, 2017, №10, էջ 390, (հասանելի է <https://cyberleninka.ru/article/n/sotsiologiya-kultury-i-subkultury> հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

⁴ Տե՛ս *Թումայան Դ. Ա., Հովհաննիսյան Կ. Հ.*, Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս: Ոստիմական ձեռնարկ, Երևան, ՀՀ ոստիկանության կրթահամալիր, Լիմուշ հրատ., 2022, էջ 365:

Նմանօրինակ պայմաններում, հարց է առաջանում, արդյո՞ք օրենսդիրը, հանցավոր ենթամշակույթ և քրեական ենթամշակույթ եզրույթները կիրառելով, նկատի է ունեցել տարբեր երևույթներ, թե վերը նշված երկու եզրույթները գործող Օրենսգրքում միաժամանակ կիրառելով՝ թույլ է տրվել օրենսդրական տեխնիկայի կանոնների խախտում՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի⁵ (այսուհետ նաև՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք) 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջն առ այն, որ նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:

Կարծում ենք, հանցավոր ենթամշակույթ և քրեական ենթամշակույթ եզրույթները համարժեք չեն: Հանցավոր ենթամշակույթը շատ ավելի լայն երևույթ է և իր մեջ, ի թիվս այլնի, ներառում է նաև քրեական ենթամշակույթը, այլ կերպ՝ հանցավոր ենթամշակույթը և քրեական ենթամշակույթը հարաբերակցվում են որպես ամբողջ և մաս:

Այսինքն, քրեական ենթամշակույթն առավել համընդգրկուն երևույթի՝ հանցավոր ենթամշակույթի բաղկացուցիչ մասն է միայն, դրա տարրերից մեկը:

Այսպես, քրեական ենթամշակույթը վերաբերելի է գողական աշխարհի ներկայացուցիչներին կամ վերջիններիս գաղափարներին հարողներին, որոնք ղեկավարվում են «գողական օրենքով» («պռագոնով»)⁶, և հանդիսանում է հանցավոր ենթամշակույթի տեսակներից մեկը: Մինչդեռ, իրենց ենթամշակույթն ունեն նաև այլ հանցանքներ կատարող անձինք (օրինակ՝ «հաքերները»⁷, «կոռուպցիոներները»⁸), այդ թվում նաև՝ այնպիսիք (օրինակ՝ «նարկոբիզնեսում» ընդգրկվածները⁹), որոնց կողմից կատարված հանցանքներն ընդունելի չեն համարվում գողական աշխարհի ներկայացուցիչների կողմից¹⁰:

Նմանօրինակ պայմաններում, գտնում ենք, որ գործող Օրենսգրքի 238-րդ հոդվածում նախատեսված հանցակազմով օրենսդիրը քրեական պատասխանատվություն է նախատեսել անչափահասի մեջ հանցավոր ենթամշակույթի ավանդույթներ սերմանելու համար՝ որպես

⁵ Տե՛ս «Նորմատիվ իրավական ակտերի մասին» թիվ ՀՕ-180-Ն Հայաստանի Հանրապետության օրենքը, ընդունվել է 2018 թվականի մարտի 21-ին, ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 7-ին, ՀՀՊՏ 2018.03.28/23(1381) Հոդ. 373:

⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Ashlarba v. Georgia գործով 2014 թվականի հուլիսի 15-ի վճռի 22-րդ կետը, գանգատ թիվ 45554/08, (հասանելի է <https://hudoc.echr.coe.int/?i=001-145572> հղումով 06.10.2024 թ. դրությամբ), ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի՝ 2020 թվականի գործունեության հաշվետվություն /ամենամյա/, Հայաստան, 2021, էջեր 80, 87 (հասանելի է <https://prisoninitiatives.am/reports/18277/> հղումով 06.10.2024 թ. դրությամբ), *Իսկանդարյան Ն. և այլ համահեղինակներ*, Ոչ ֆորմալ հարաբերությունները Հայաստանի ազատագրված վայրերում. Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկի օրինակով, Քաղաքացիական հասարակության ինստիտուտ ՀԿ, 2017, էջ 8, (հասանելի է http://www.csi.am/sites/default/files/library/report_prison_subculture%20Arm.pdf հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

⁷ Տե՛ս *Масленченко С. В.*, Субкультура хакеров как порождение информатизации общества, автореф. дисс. на соиск. учен. степени канд. культурологии, Санкт-Петербург, 2008, էջեր 11-16, (հասանելի է <https://www.twirpx.com/file/1703038/> հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

⁸ Տե՛ս *Катков И.*, Духовные концепты в исследовании коррупционных субкультур (социокультурный подход), Государственная служба, 2014, №2 (88), էջեր 115-118 (հասանելի է <https://cyberleninka.ru/article/n/duhovnyye-kontsepty-v-issledovanii-korrupsionnyh-subkultur-sotsiokulturnyy-podhod> հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

⁹ Տե՛ս *Голощанов Е. В., Голощанова Т. Г.*, Криминальная наркотическая субкультура (на примерах наименования лиц, занятых в наркобизнесе), Правосудие, 2019, №2, էջեր 188-200, (հասանելի է <https://cyberleninka.ru/article/n/kriminalnaya-narkoticheskaya-subkultura-na-primerah-naimenovaniya-lits-zanyatyh-v-narkobiznese> հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

¹⁰ Տե՛ս *Իսկանդարյան Ն. և այլ համահեղինակներ*, նշված աշխ., էջ 8:

այդպիսին դիտելով ոչ միայն քրեական ենթամշակույթը, այլ նաև հանցանք կատարողներին բնութագրող այլ ենթամշակույթները: Իսկ գործող Օրենսգրքի այլ կարգավորումներում, օգտագործելով քրեական ենթամշակույթ եզրույթը, օրենսդիրը նկատի է ունեցել հենց գողական աշխարհի ներկայացուցիչների և վերջիններիս գաղափարներին հարող անձանց կողմից ընդունված, «գողական օրենքի» («պռագոնի») վրա հիմնված ենթամշակույթը:

Հետևաբար, օրենսդիրը, գործող Օրենսգրքում հանցավոր ենթամշակույթ և քրեական ենթամշակույթ եզրույթները միաժամանակ կիրառելով, թույլ չի տվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի խախտում, այլ կերպ՝ օրենսդիրը վերը նշված երկու եզրույթները չի կիրառել միևնույն միտքն արտահայտելիս:

Քրեական ենթամշակույթի դեմ քրեաիրավական պայքար մղելու տեսանկյունից կարևոր է անդրադառնալ նաև այն հարցին, թե արդյո՞ք ընդունելի է օրենսդրական մակարդակում գողական խոսվածքի՝ գողական աշխարհում կիրառվող եզրույթների օգտագործումը:

Գողական խոսվածքում առանձնակի տեղ են գրավում բառերի ու հասկացությունների այն խմբերը, որոնք ձևակերպում են այդ աշխարհի կարգավիճակները և հիերարխիան, կարգավորում են տարբեր աստիճանակարգերում գտնվողների փոխհարաբերությունները, սահմանում դրանց մեջ թույլատրելի ու անթույլատրելի շատ խիստ ու հստակ տարանջատելով «ճիշտն» ու «սխալը», սահմանազատում են բանտային տարածքում գողական աշխարհի և մնացած բանտարկյալների կարգավիճակներն ու փոխհարաբերությունների ձևերը, սահմանում են՝ ըստ բանտարկյալների կարգավիճակների՝ նրանց տեղը բանտային տարածքում՝ սկսած բանտախցի տարածքից, վերջացրած բանտարկյալների համար ընդհանուր տարածքները, սահմանում են բանտարկյալների և բանտային վարչակազմի ու ծառայողների հետ բանտարկյալների փոխհարաբերման սկզբունքները, թույլատրելի ու արգելվածը, սահմանում են խրախուսելի և արգելված արարքները՝ հատուկ ուշադրություն դարձնելով հատկապես արգելվածներին, սահմանում են պատիժների ձևերը՝ սահմանված հասկացություններն ու վարվելակարգային նորմերն ու պրակտիկաները խախտելու դեպքում, սահմանում են գողական աշխարհի ներկայացուցիչների իրավունքներն ու պարտականությունները, սահմանում են գողական աշխարհի կարգուկանոնն ապահովող հիմնական ինստիտուտները, ներառյալ՝ ֆինանսատնտեսականը, ձևակերպում են մեխանիզմները, որոնք ապահովում են այդ ինստիտուտների գործունեությունը¹¹:

Այս հարցի առնչությամբ տեսության մեջ արտահայտվել են միմյանցից տարբերվող կարծիքներ: Մասնավորապես, կարծիքներ են արտահայտվել թե՛ գողական խոսվածքի՝ օրենսդրական մակարդակում կիրառման հնարավորության, և թե՛ դրա կիրառման անթույլատրելիության մասին:

Ըստ Յու. Գոլիկի՝ գողական հասկացություններին անցնելը հիմարություն է և վիրավորական ողջ ժողովրդի համար¹²:

Վերոնշյալից տարբերվող կարծիք է արտահայտել Վ. Բիչկովը, համաձայն որի՝ քանի դեռ օրենսդիրը չի տալիս ՌԴ քրեական օրենսգրքի¹³ 210-րդ հոդվածի (հանցավոր համագործակ-

¹¹ Տե՛ս *Թաղևոսյան Ա.*, Գողական խոսվածքը քրեական ու թաղային միջավայրերում. փոխակերպումներն ու ընդհանրությունները, Քրեական («գողական») խոսվածքի բացատրական բառարան, Երևան, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2023, էջեր 130-131, (հասանելի է <https://epfarmenia.am/hy/documents/dictionary-of-armenian-criminal-slang> հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

¹² Տե՛ս *Голык Ю. В.*, Коллизии в уголовном праве как реальность, Юридическая техника, 2017, №11, էջ 405, (հասանելի է <https://cyberleninka.ru/article/n/kollizii-v-ugolovnom-prave-kak-realnost> հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

¹³ Տե՛ս Уголовный кодекс Российской Федерации, (հասանելի է https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/ հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

ցություն (հանցավոր կազմակերպություն) կազմակերպելը կամ դրան մասնակցելը) չորրորդ մասի (արարքի կատարումը հանցավոր հիերարխիայում բարձրագույն կարգավիճակ զբաղեցնող անձի կողմից) հատուկ սուբյեկտի հստակ սահմանումը («օրենքով գող», «պոլիժենեց», «նայող» և այլն), այն «մեռած» կլինի¹⁴:

Իսկ ըստ Ա. Գրիշկոյի՝ հանցավոր աշխարհի առաջնորդներին բնութագրող հասկացությունների՝ օրենսդրական կամ այլ նորմատիվ-իրավական ամրագրումը կնպաստի միայն հանցավոր համագործակցություններ (հանցավոր կազմակերպություններ) կազմակերպելուն հակազդելու ոլորտում իրավակիրառ և դատական պրակտիկայի ակտիվացմանը¹⁵:

Ինչպես մեր կողմից արդեն նշվել է, օրենսդիրն իրավացիորեն ընդունելի է համարել օրենսդրական մակարդակում գողական աշխարհի անդամների կարգավիճակը բնութագրող տերմինոլոգիայի կիրառումը¹⁶: Ջարգացնելով նախկինում արտահայտված դիրքորոշումները՝ կարծում ենք, որ դրանք կիրառելի են ոչ միայն գողական աշխարհի անդամների կարգավիճակը բնութագրող եզրույթների, այլ նաև գողական աշխարհում կիրառվող այլ եզրույթների նկատմամբ ևս:

Այս տեսանկյունից ուշագրավ է հատկապես Իտալիայի քրեական օրենսգրքի 416-bis հոդվածի իրավակարգավորումը (մաֆիոզային տեսակի միություն), որում օգտագործվում են կոնկրետ հանցավոր խմբավորումների անունները և նշվում է, որ այդ հոդվածի դրույթները տարածվում են նաև կամորայի¹⁷ (իտալերեն՝ camorra), նդրանգետայի¹⁸ (իտալերեն՝ 'ndrangheta) վրա¹⁹:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է հստակեցնել գողական խոսվածքի՝ գողական աշխարհում կիրառվող եզրույթների օրենսդրական մակարդակում օգտագործման թույլատրելիության սահմանները:

Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք

¹⁴ Տե՛ս *Бычков В. В.*, *Несовершенство понятийного аппарата уголовного законодательства как следствие проблемности противодействия организованной преступности*, Правовое развитие России XXI века: актуальные задачи юридической науки и практики: Сборник статей всероссийской научно-практической конференции, посвященный 25-летию юбилею Института права Челябинского государственного университета, Челябинск, ООО «Полиграф-мастер», 2016, էջ 242, (հասանելի է <https://elibrary.ru/item.asp?id=29189892> հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

¹⁵ Տե՛ս *Гришко А. Я.*, *Реализация криминологических понятий в уголовном и уголовно-исполнительном праве*, Вестник Кузбасского института, 2017, № 4(33), էջ 33, (հասանելի է <https://elibrary.ru/item.asp?id=30736138> հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

¹⁶ Տե՛ս *Բարախանյան Ա.*, «Քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալը կամ ստանալը կամ պահպանելը» հանցակազմի որոշ հիմնահարցեր, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, 1(2) 2020, Երևան, ԵՊՀ իրատարակչություն, 2021, էջեր 67-74, (հասանելի է http://publishing.yu.am/files/lravagitutyan_aspirantner-2020.pdf հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

¹⁷ Տե՛ս *Мацкевич И. М.*, *Вспомнить все о транснациональных преступных организациях: криминологический очерк*, Союз криминалистов и криминологов, 2020, № 4, էջեր 78-81, (հասանելի է <https://crimescience.ru/wp-content/uploads/2015/11/105920-3.pdf#page=76> հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջեր 81-84:

¹⁹ Տե՛ս *Codice penale Italiano* (հասանելի է <https://www.altalex.com/documents/codici-altalex/2014/10/30/codice-penale> հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը²⁰:

Իրավական որոշակիության սկզբունքն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում²¹:

Այսպես, քրեական ենթամշակույթին վերաբերող որոշ երևույթներ (օրինակ՝ գողական աշխարհ, գողական օրենք) կամ կարգավիճակներ (օրինակ՝ օրենքով գող) չունեն իրենց էությունն ամբողջությամբ ընդգրկող հոմանիշները գրական խոսքում: Հետևաբար, օրենսդրական մակարդակում այդ երևույթները և կարգավիճակները գրական խոսքի եզրույթները կիրառելու միջոցով նկարագրելիս, կարող է առաջանալ խնդրահարույց իրավիճակ՝ իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից և համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի չլինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները:

Վերը նշվածը, սակայն, չպետք է մեկնաբանվի, որպես օրենսդրական մակարդակում գողական խոսվածքի կիրառման չարաշահման թողտվություն: Ինչպես գողական խոսվածքի՝ օրենսդրական մակարդակում կիրառման կատեգորիկ բացառումը, նույն կերպ մեր կողմից ընդունելի չէ նաև գողական խոսվածքի եզրույթների օրենսդրական մակարդակում համատարած կիրառումը: Քրեական ենթամշակույթին առնչվող քրեաիրավական նորմերում ցանկացած երևույթ և կարգավիճակ գողական խոսվածքի եզրույթներ կիրառելով նկարագրելը՝ նույնիսկ այդ նորմերն իրավական որոշակիության սկզբունքին առավելագույնս համապատասխանեցնելու նպատակով ևս խնդրահարույց է, քանի որ գողական խոսվածքի եզրույթներից որոշներն ունեն իրենց հոմանիշները գրական խոսքում, որոնք ամբողջությամբ բացահայտում են քրեական ենթամշակույթին վերաբերող երևույթների, կարգավիճակների էությունը, և որոնք էլ կարող են կիրառվել օրենսդրական մակարդակում՝ գողական խոսվածքի փոխարեն: Այսինքն, գողական խոսվածքի եզրույթների կիրառումն օրենսդրական մակարդակում պետք է լինի վերջին՝ բացառիկ միջոցը (ultima ratio) և կիրառվի այն դեպքերում, երբ գրական խոսքում առկա չեն քրեական ենթամշակույթին վերաբերող երևույթների և կարգավիճակների էությունը նույնությամբ արտահայտող եզրույթներ:

Բացի դրանից՝ գողական խոսվածքի որոշ եզրույթներ (մասնավորապես՝ գողական աշխարհի ներկայացուցիչ չհանդիսացող և վերջիններիս կողմից բացասական վերաբերմունքի արժանացող անձանց բնութագրող եզրույթներ²²) մարդու պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող բնույթ ունեն և դրանց կիրառումն օրենսդրական մակարդակում ևս ընդունելի չէ՝ նույնիսկ իրավական որոշակիության սկզբունքն ապահովելու նպատակով:

Այսպիսով, օրենսդրական մակարդակում գողական խոսվածքի՝ գողական աշխարհում

²⁰ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2008 թվականի մայիսի 13-ի թիվ ՍԴՈ-753 որոշման 9-րդ կետը (հասանելի է https://concourt.am/decision/decisions/633d5b8dc8cbe_sdv-753.pdf հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

²¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հունվարի 22-ի թիվ ՍԴՈ-1439 որոշման 4.5-րդ կետը (հասանելի է <https://concourt.am/decision/decisions/sdv-1439.pdf> հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

²² Տե՛ս *Իսկանդարյան Ն. և այլ համահեղինակներ* նշված աշխ., էջ 8, *Քիչարյան Կ. Ա.*, Քրեական ենթամշակույթին առնչվող արարքների քրեաիրավական բնութագիրը (գիտագործնական մեկնաբանություններ), գիտ. խմբ.՝ *Սոսքեյան Ս. Վ.*, Երևան, Արդարադատության ակադեմիա, 2020, էջեր 25-26, (հասանելի է <https://aoj.am/storage/library/academy-publications/cA1p3cXVvJQorU9WKQ9tqumypZNDI64fq9C5lzEu.pdf> հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

կիրառվող եզրույթների օգտագործումը թույլատրելի է միայն որպես վերջին՝ բացառիկ միջոց (ultima ratio), երբ գրական խոսքում առկա չեն քրեական ենթամշակույթին վերաբերող երևույթների և կարգավիճակների էությունը նույնությամբ արտահայտող եզրույթներ և միայն այն դեպքում, երբ այդ եզրույթները մարդու պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող բնույթ չունեն:

Եզրակացություն

Այսպիսով, գործող Օրենսգրքի 238-րդ հոդվածում նախատեսված հանցակազմով օրենսդիրը քրեական պատասխանատվություն է նախատեսել անչափահասի մեջ հանցավոր ենթամշակույթի ավանդույթներ սերմանելու համար՝ որպես այդպիսին դիտելով ոչ միայն քրեական ենթամշակույթը, այլ նաև հանցանք կատարողներին բնութագրող այլ ենթամշակույթները: Իսկ գործող Օրենսգրքի այլ կարգավորումներում, օգտագործելով քրեական ենթամշակույթ եզրույթը, օրենսդիրը նկատի է ունեցել հենց գողական աշխարհի ներկայացուցիչների և վերջիններիս գաղափարներին հարող անձանց կողմից ընդունված, «գողական օրենքի» («պռագոնի») վրա հիմնված ենթամշակույթը: Հետևաբար, օրենսդիրը, գործող Օրենսգրքում հանցավոր ենթամշակույթ և քրեական ենթամշակույթ եզրույթները միաժամանակ կիրառելով, թույլ չի տվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի խախտում, այլ կերպ՝ օրենսդիրը վերը նշված երկու եզրույթները չի կիրառել միևնույն միտքն արտահայտելիս:

Բացի դրանից՝ հարկ է նշել, որ օրենսդրական մակարդակում գողական խոսվածքի՝ գողական աշխարհում կիրառվող եզրույթների օգտագործումը թույլատրելի է միայն որպես վերջին՝ բացառիկ միջոց (ultima ratio), երբ գրական խոսքում առկա չեն քրեական ենթամշակույթին վերաբերող երևույթների և կարգավիճակների էությունը նույնությամբ արտահայտող եզրույթներ և միայն այն դեպքում, երբ այդ եզրույթները մարդու պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող բնույթ չունեն:

Ամփոփագիր: Հոդվածը նվիրված է քրեական ենթամշակույթը բնութագրող եզրույթների օրենսդրական ամրագրման որոշ հիմնահարցերին, որոնց անդրադարձ կատարելն էական նշանակություն ունի քրեական ենթամշակույթի դեմ պայքար մղելու համար անհրաժեշտ քրեաիրավական նորմերին վերաբերող հիմնախնդիրների ուսումնասիրության ընթացքում:

Մասնավորապես, հոդվածում հեղինակն անդրադարձ է կատարել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածում նկարագրված ենթամշակույթի և քրեական ենթամշակույթի հարաբերակցության հարցին: Արդյունքում, հեղինակը հանգել է հետևության, որ այդ եզրույթները համարժեք չեն և այդ ենթամշակույթները հարաբերակցվում են որպես ամբողջ և մաս:

Բացի դրանից՝ հեղինակը, զարգացնելով նախկինում արտահայտված դիրքորոշումները, գտել է, որ օրենսդրական մակարդակում թույլատրելի է ոչ միայն գողական աշխարհի անդամների կարգավիճակը բնութագրող եզրույթների, այլ նաև գողական աշխարհում կիրառվող այլ եզրույթների կիրառումը: Միևնույն ժամանակ, հեղինակը փորձ է կատարել հստակեցնել գողական խոսվածքի՝ գողական աշխարհում կիրառվող եզրույթների օրենսդրական մակարդակում օգտագործման թույլատրելիության սահմանները՝ գտնելով, որ դրանց օգտագործումը թույլատրելի է միայն որպես վերջին՝ բացառիկ միջոց (ultima ratio), երբ գրական խոսքում առկա չեն քրեական ենթամշակույթին վերաբերող երևույթների և կարգավիճակների էությունը նույնությամբ արտահայտող եզրույթներ և միայն այն դեպքում, երբ այդ եզրույթները մարդու պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող բնույթ չունեն:

Annotation. The article is dedicated to some issues of legislative fixation of the terms characterizing the criminal subculture, the reference to which is of essential importance during the study of the issues related to the criminal legal

norms necessary to fight against the criminal subculture.

In particular, in the article, the author referred to the question of the relationship between the subculture described in Article 238 of the Criminal Code of the Republic of Armenia and the criminal subculture. As a result, the author came to the conclusion that these terms are not equivalent and these subcultures are related as whole and part.

In addition, the author, developing the previously expressed positions, found that at the legislative level, it is permissible not only to use terms characterizing the status of members of the thieves' world but also to use other terms used in the thieves' world. At the same time, the author has made an attempt to clarify the limits of the admissibility of the use of thieves' speech, the terms used in the thief's world, at the legislative level, finding that their use is permissible only as the last, exceptional measure (*ultima ratio*), when there are no terms expressing the essence of the phenomena and statuses related to the criminal subculture in the literary speech, and only in the case when these terms do not demean the honor and dignity of a person.

Аннотация. Статья посвящена некоторым вопросам законодательного закрепления терминов, характеризующих криминальную субкультуру, обращение к которым имеет существенное значение при исследовании вопросов, связанных с уголовно-правовыми нормами, необходимыми для борьбы с криминальной субкультурой.

В частности, в статье автор обратился к вопросу о соотношении субкультуры, описанной в ст. 238 УК РА, и криминальной субкультуры. В результате автор пришел к выводу, что данные термины не являются равнозначными, и эти субкультуры соотносятся как целое и часть.

Кроме того, автор, развивая ранее высказанные позиции, пришел к выводу, что на законодательном уровне допустимо не только использование терминов, характеризующих статус членов воровского мира, но и употребление других терминов, используемых в воровском мире. Вместе с тем автор предпринял попытку уточнить пределы допустимости использования воровской речи, терминов, используемых в воровском мире, на законодательном уровне, придя к выводу, что их использование допустимо лишь в качестве последней, исключительной меры (*ultima ratio*), когда в литературной речи нет терминов, выражающих суть явлений и статусов, связанных с криминальной субкультурой, и только в том случае, когда эти термины не унижают честь и достоинство человека.

Բանալի բառեր – քրեական ենթամշակույթ, գողական աշխարհ, գողական օրենք, օրենքով գող, գողական խոսվածք:

Keywords: *criminal subculture, thieves' world, thieves' code, thief in law, thieves' speech.*

Ключевые слова: *криминальная субкультура, воровской мир, воровской закон, вор в законе, воровская речь.*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, ընդունվել է 2021 թվականի մայիսի 5-ին, ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին, Միասնական կայք 2021.05.17-2021.05.30, Պաշտոնական հրապարակման օրը 27.05.2021:

2. Малинин В. Б., Трапаидзе К. З., Культура и субкультура, Царскосельские чтения, 2014, №XVIII, էջեր 144-150, (հասանելի է <https://cyberleninka.ru/article/n/kultura-i-subkultura> հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

3. Малинин В. Б., Измалков В. А., Социология культуры и субкультуры, Здоровье и образование в XXI веке, 2017, №10, էջեր 389-392, (հասանելի է <https://cyberleninka.ru/article/n/sotsiologiya-kultury-i-subkultury> հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

4. Թումասյան Դ. Ա., Հովհաննիսյան Կ. Հ., Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս: Ոստանական ձեռնարկ, Երևան, ՀՀ ոստիկանության կրթահամալիր, Լիմուշ հրատ., 2022, 914 էջ:

5. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» թիվ ՀՕ-180-Ն Հայաստանի Հանրապետության օրենք, ըն-

դունվել է 2018 թվականի մարտի 21-ին, ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 7-ին, ՀՀՊՏ 2018.03.28/23(1381) Հոդ.373:

6. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Ashlarba v. Georgia գործով 2014 թվականի հուլիսի 15-ի վճիռ, գանգատ թիվ 45554/08, (հասանելի է <https://hudoc.echr.coe.int/?i=001-145572> հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

7. ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի՝ 2020 թվականի գործունեության հաշվետվություն /ամենամյա/, Հայաստան, 2021, 165 էջ, (հասանելի է <https://prisoninitiatives.am/reports/18277/> հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

8. Իսկանդարյան Ն. և այլ համահեղինակներ, Ոչ ֆորմալ հարաբերությունները Հայաստանի ազատագրված վայրերում. Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկի օրինակով, Քաղաքացիական հասարակության ինստիտուտ ՀԿ, 2017, 18 էջ, (հասանելի է http://www.csi.am/sites/default/files/library/report_prison_subculture%20Arm.pdf հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

9. Масленченко С. В., Субкультура хакеров как порождение информатизации общества, автореф. дисс. на соиск. учен. степени канд. культурологии, Санкт-Петербург, 2008, 20 էջ, (հասանելի է <https://www.twirpx.com/file/1703038/> հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

10. Катков И., Духовные концепты в исследовании коррупционных субкультур (социокультурный подход), Государственная служба, 2014, №2 (88), էջեր 115-119, (հասանելի է <https://cyberleninka.ru/article/n/duhovnye-kontsepty-v-issledovanii-korrupsionnyh-subkultur-sotsiokulturnyy-podhod> հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

11. Голощапов Е. В., Голощапова Т. Г., Криминальная наркотическая субкультура (на примерах наименования лиц, занятых в наркобизнесе), Правосудие, 2019, №2, էջեր 188-205, (հասանելի է <https://cyberleninka.ru/article/n/kriminalnaya-narkoticheskaya-subkultura-na-primerah-naimenovaniya-lits-zanyatyh-v-narkobiznese> հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

12. Թադևոսյան Ա., Գողական խոսվածքը քրեական ու թաղային միջավայրերում. փոխակերպումներն ու ընդհանրությունները, Քրեական («գողական») խոսվածքի բացատրական բառարան, Երևան, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2023, էջեր 118-151, (հասանելի է <https://epfarmeria.am/hy/documents/dictionary-of-armenian-criminal-slang> հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

13. Голик Ю. В., Коллизии в уголовном праве как реальность, Юридическая техника, 2017, №11, էջեր 404-406, (հասանելի է <https://cyberleninka.ru/article/n/kollizii-v-ugolovnom-prave-kak-realnost> հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

14. Уголовный кодекс Российской Федерации, (հասանելի է https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/ հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

15. Бычков В. В., Несовершенство понятийного аппарата уголовного законодательства как следствие проблемности противодействия организованной преступности, Правовое развитие России XXI века: актуальные задачи юридической науки и практики: Сборник статей всероссийской научно-практической конференции, посвященный 25-летию юбилею Института права Челябинского государственного университета, Челябинск, ООО «Полиграф-мастер», 2016, էջեր 239-244, (հասանելի է <https://elibrary.ru/item.asp?id=29189892> հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

16. Гришко А. Я., Реализация криминологических понятий в уголовном и уголовно-исполнительном праве, Вестник Кузбасского института, 2017, № 4(33), էջեր 29-33, (հասանելի է <https://elibrary.ru/item.asp?id=30736138> հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

17. Բաբախանյան Ա., «Քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալը կամ ստանալը կամ պահպանելը» հանցակազմի որոշ հիմնահարցեր, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, 1(2) 2020, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2021, էջեր 61-81, (հասանելի է http://publishing.y-su.am/files/lravagitutyan_aspirantner-2020.pdf հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

18. Мацкевич И. М., Вспомнить все о транснациональных преступных организациях: криминологический

очерк, Союз криминалистов и криминологов, 2020, №. 4, էջեր 76-102, (հասանելի է <https://crimescience.ru/wp-content/uploads/2015/11/105920-3.pdf#page=76> հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

19. Codice penale Italiano (հասանելի է <https://www.altalex.com/documents/codici-altalex/2014/10/30/codice-penale> հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

20. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2008 թվականի մայիսի 13-ի թիվ ՍԴՈ-753 որոշում, 19 էջ, (հասանելի է https://concourt.am/decision/decisions/633d5b8dc8cbe_sdv-753.pdf հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

21. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հունվարի 22-ի թիվ ՍԴՈ-1439 որոշում, 17 էջ, (հասանելի է <https://concourt.am/decision/decisions/sdv-1439.pdf> հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

22. Բիշարյան Կ. Ա., Քրեական ենթամշակույթին առնչվող արարքների քրեաիրավական բնութագիրը (գիտագործնական մեկնաբանություններ), գիտ. խմբ.՝ Առաքելյան Ս. Վ., Երևան, Արդարադատության ակադեմիա, 2020, 46 էջ, (հասանելի է <https://aoj.am/storage/library/academy-publications/cA1p3cXVvJQorU9WKQ9tqumypZNDI64fq9C5IzEu.pdf> հղումով 06.10.2024 թ. դրությամբ):

Բաբախանյան Ա. - ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորի օգնական, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի դասախոս, էլիասցե՝ arman.babakhanyan@ysu.am:

Ներկայացվել է խմբագրություն 05.10.2024 թ., տրվել է գրախոսության 05.10.2024 թ., երաշխավորվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Հ. Ասատրյանի և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ, ի.գ.թ. Ս. Սիմոնյանի կողմից, ընդունվել է տպագրության 20.01.2025 թ.:

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CRIMINAL PROCEDURE/УГОЛОВНЫЙ ПРОЦЕСС

<https://doi.org/10.59546/18290744-2024.10-12-48>

ԻՆԳԱ ԱՎԱԳՅԱՆ

*«Մասնավոր իրավական կենտրոն» փաստաբանական
գրասենյակի հիմնադիր-տնօրեն, փաստաբան,
«Գլաձոր» համալսարանի հայցորդ*

INGA AVAGYAN

*“Private Legal Center” Law Firm, Founding Director, Advocate,
Applicant at “Gladzor” University*

ИНГА АВАГЯН

*Учредитель и директор юридической фирмы
«Частный юридический центр», адвокат,
Соискатель университета «Гладзор»*

**ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՊԱՑՈՒՑՄԱՆԸ**

**PARTICIPATION OF THE DEFENSE ATTORNEY IN THE EVIDENCE
CONDUCTED AT THE STAGE OF PRELIMINARY INVESTIGATION**

**УЧАСТИЕ ЗАЩИТНИКА В ДОКАЗЫВАНИИ, ПРОВОДИМОМ НА
СТАДИИ ПРЕДВАРИТЕЛЬНОГО СЛЕДСТВИЯ**

Ներածություն

Նախաքննությունը սկսվում է հանցագործության մասին հաղորդում ստանալու պահից և ավարտվում քրեական վարույթը դատարան ուղարկելով կամ այն կարճելով: Նախաքննության բովանդակությունը մինչդատական վարույթի նպատակներին հասնելու համար անհրաժեշտ գործողությունների կատարումն է և որոշումների ընդունումը:

Նախաքննություն կատարելու բացառիկ լիազորությունը պատկանում է քննիչին, որով նա իրականացնում է իր քննության գործառույթը, մինչդեռ քրեական վարույթով ներգրավված պաշտպանը նախաքննության փուլում իրականացվող ապացուցման գործառույթին ունի մասնակցության իրավունք, որը սահմանվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 45-րդ հոդվածով, այն է՝ փաստաբանը մեղադրյալի պաշտպանությունը ստանձնում է՝ 1) մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, մերձավոր ազգականի, ինչպես նաև այլ անձանց

հրավերով՝ մեղադրյալի հետագա գրավոր համաձայնությամբ, 2) ՀՀ փաստաբանների պալատի կողմից նշանակվելով՝ վարույթն իրականացնող մարմնի գրավոր պահանջի հիման վրա: Փաստաբանը քրեական վարույթով ստանձնելով՝ մեղադրյալի պաշտպանությունը ձեռք է բերում իրավունքներ և պարտականություններ, որով նպատակ է ունենում պարզելու մեղադրանքը հերքող, մեղադրյալի պատասխանատվությունը բացառող կամ պատիժը և դատավարական հարկադրանքի միջոցները մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև պաշտպանելու մեղադրյալի իրավունքները և իրավաչափ շահերը (ՔԴՕ, հոդված 49):

Քրեական դատավարության սկզբունքներից է կողմերի հավասարության և մրցակցության սկզբունքը (հոդված 21): Քրեական դատավարության մրցակցային բնույթը ենթադրում է նաև այդ սկզբունքի առանձին տարրերի ներմուծումն ու կիրառումը մինչդատական վարույթում՝ նախաքննության ընթացքում: Գործող իրավակիրառ համակարգը քրեադատավարական օրենսդրության զարգացման ներկայիս փուլում թույլ չի տալիս մինչդատական վարույթում լիարժեք մրցակցություն ապահովել, սակայն առկա անհավասարությունը կարող է էապես մեղմվել մեղադրյալի և պաշտպանի որոշ իրավունքներ ընդլայնելու միջոցով: Միաժամանակ այս փուլում մրցակցության լրացուցիչ տարրերի ներմուծումն արդարացված է այնքանով, որքանով դա բացասաբար չի անդրադառնա վարույթի արդարացի քննության վրա և չի հանգեցնի չարաշահումների:

Հոդվածում հեղինակը նոր քրեական դատավարության օրենսգրքի լույսի ներքո, գիտական աշխատությունների և ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի հիման վրա փորձ է արել համեմատական վերլուծության ենթարկել տեսության մեջ առկա իրավական հիմնավորումների և պրակտիկայում տարածված մոտեցումների միջև:

Հիմնական հետազոտություն

Քրեական վարույթում մեղադրյալի հայտնվելու պահից պաշտպանի պարտադիր մասնակցությունն է, ինչպես նաև պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքերի շրջանակի ընդլայնումը և այն ոչ սպառիչ դարձնելը: Քրեական վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, քանի դեռ մեղադրյալը նրանից չի հրաժարվել օրենքով սահմանված կարգով:

Օրենքով քրեական վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր դարձնող հիմքերից թեկուզև մեկի առկայության դեպքում պաշտպանից հրաժարումը չի ընդունվում և գործում է մեղադրյալի պաշտպանության սուբյեկտիվ իրավունքի իրականացման կանոնը:

На отсутствие четкого ранжирования мер уголовно-процессуального воздействия обратил внимание К.В. Муравьев. В своем исследовании он пришел к выводу о необходимости внесения кардинальных изменений в систему принудительных мер, определив в ней в качестве составляющих «основные ограничения, дополнительные ограничения и обязательства, способы обеспечения исполнения ограничений и соблюдения обязательств» [Муравьев К.В., Оптимизация законодательства о мерах пресечения // Вестник Восточно-Сибирского института МВД. 2017. No 2. С.139-148.].

в преступной деятельности, связанной с финансовыми махинациями, отмыванием денег или другими незаконными действиями, целесообразно принятие таких мер обеспечения как запрет ликвидации, банкротства, реорганизации или приостановление процесса ликвидации, а, например, ограничение права на совершение отдельных сделок целесообразно принимать при наличии достаточных оснований, что юридическое лицо, совершив операции с ценными бумагами, такими как акции, облигации и другие финансовые инструменты, может уклоняться от уплаты долгов или сокрытия активов.

Неслучайно законодатель предусматривает определенные условия. При решении вопроса о применении обеспечительных мер или при выборе ее вида необходимо учитывать:

- 1) характер деятельности юридического лица и последствия, вызванные этой деятельностью;
- 2) финансовое состояние юридического лица;
- 3) статус физического лица в органе управления юридического лица, связанный с совершением деяния обвиняемым юридическим лицом;
- 4) меры, направленные на устранение последствий преступления юридическим лицом.

Кроме того, при выборе вида мер обеспечения необходимо учитывать возможные обстоятельства, препятствующие деятельности юридического лица.

Таким образом, при применении конкретной меры обеспечения законодатель устанавливает условие экономии мер процессуального принуждения в целях обеспечения должного уровня гарантированной защиты и предпринимательской свободы.

«Экономия процессуального принуждения» в уголовно-процессуальных отношениях широко используется при выборе мер пресечения, предполагая, что реализация более строгой меры пресечения допускается при невозможности применения более мягкой меры пресечения.

В постановлении Пленума Верховного Суда Российской Федерации № 41 также подчеркивается важность соблюдения требований «экономии процессуального принуждения». Здесь указывается, что при рассмотрении вопроса об избрании меры пресечения в виде заключения под стражу и о продлении срока ее действия, домашнего ареста, суд обязан в каждом случае обсуждать возможность применения в отношении лица иной, более мягкой меры пресечения вне зависимости от наличия ходатайства об этом сторон, а также стадии производства по уголовному делу. Кроме того, в п. 21 данного постановления указывается на необходимость реализации индивидуального подхода к выбору мер процессуального принуждения.¹²

Таким образом, применение конкретной меры обеспечения можно назвать эффективным только в том случае, если оно сопровождается наименьшим ограничением конституционных прав и свобод личности. Для того чтобы рассматриваемое условие успешно реализовалось в уголовном судопроизводстве, необходимо, чтобы каждый правоприменитель точно понимал строгость той или иной обеспечительной меры.

Соблюдение принципа экономии процессуальных принуждений особо важно учитывать уязвимость предпринимательского мира, владеющий экономической свободой.

Экономическая свобода предполагает возможность лица осуществлять хозяйственную деятельность независимо не только от недобросовестного воздействия иных участников

¹² О практике применения судами законодательства о мерах пресечения в виде заключения под стражу, домашнего ареста, залога и запрета определенных действий [Электронный ресурс]: Постановление Пленума Верховного Суда Рос. Федерации от 19 декабря 2013 г. No 41. Доступ из справ.-правовой системы «КонсультантПлюс».

указанной деятельности, но и от неправомерного вмешательства со стороны государственных органов и органов местного самоуправления. При этом, современные государства не только регулируют экономические отношения, но и сами являются их активными участниками. Государственные компании по сути монополизуют целые секторы отечественной экономики, причем нередко даже в тех сферах, где подобное доминирование не может быть оправдано теми или иными общественными интересами.

Осознавая значимость свободных экономических отношений, а также возникающие в данной связи риски и вызовы, государство формализует указанные отношения в четкие правовые рамки. В этой связи нельзя не согласиться с Т.И. Отческой в том, что «состояние законности в экономике является одним из важнейших факторов, определяющих экономическое и социальное развитие страны»¹³ [с. 71].

С одной стороны, нормы уголовного права обеспечивают охрану свободы экономических отношений от значительных по степени и характеру общественной опасности посягательств [с. 115]¹⁴. С другой стороны, реакция государства на указанные посягательства порождает новые социальные связи между совершившим преступление лицом и государственными органами, осуществляющими уголовное преследование [с. 135]¹⁵.

Думается, что, решая задачи общей и частной превенции, нормы уголовного права упорядочивают поставленные под их охрану общественные отношения. То есть понуждают их участников, как минимум, учитывать факт наличия угрозы уголовной ответственности при выборе алгоритмов своего экономического поведения. Так, в частности, Я.И. Тихонов называет этот эффект «опережающим правовым регулированием», понимая под ним «процесс влияния превентивных норм с помощью средств правового воздействия на поведение субъектов права до возникновения юридических фактов».¹⁶

Однако следует учитывать, что излишняя криминализация, выраженная во введении избыточных уголовно-правовых запретов, а также излишнее уголовно-процессуальное воздействие особо чувствительно именно для сферы экономической деятельности. Допущенные законодателем ограничения нормативного регулирования могут иметь негативные последствия, нивелирующие свободу экономической деятельности.

Неслучайно, эмпирические данные показывают, что в результате около 70% опрошенных предпринимателей полностью теряют свой бизнес после предпринятого в отношении них уголовного преследования.¹⁷

Таким образом, следует констатировать, что законодателем должны быть строго регламентированы меры процессуального обеспечения, которые с одной стороны могут осуществлять функцию превентивизации преступлений, с другой стороны, сбалансировать свободу экономических отношений, путем придания дополнительных процессуальных гарантий.

Следует заметить что, несмотря на то, что Уголовно-процессуальный закон не рассма-

¹³ Отческая Т.И., Обеспечение прокуратурой и судами свободы экономической деятельности // Законы России: опыт, анализ, практика. 2018. № 6. С. 70-74.

¹⁴ Жариков Ю.С., Уголовно-правовое регулирование и механизм его реализации. –М.: Юриспруденция, 2009. – 216 с.

¹⁵ Петрова Г.О., Уголовно-правовое регулирование и его средства: норма и правоотношение: Дис. ... докт. юрид. наук. – Нижний Новгород, 2003. – 304 с.

¹⁶ Тихонов Я.И., Юридическая превенция как фактор опережающего регулирования // Государственная власть и местное самоуправление. 2018. № 9. С. 3-5.

¹⁷ См.: Бажанов С.В., Состояние законности при возбуждении уголовных дел и расследовании преступлений, совершаемых предпринимателями // Право и экономика. 2017. No 8. С. 17-25.

тривает, что перечень мер обеспечения, установленных в ст. 445 УПК РА, не имеет строго установленную систему и что одни меры обеспечения являются более строгими по отношению к другим и конкретный вид выбора мер обеспечения должны преследовать конкретную преследуемую цель для нивелирования или пресечения последствий преступления, самым мягким по сравнению с мерами обеспечения принудительного характера являются залог и арест имущества.

Таким образом, законодатель не устанавливает классификацию мер обеспечения по строгости применения, что скорее всего связано с уголовно-процессуальными положениями статьи 445 УПК РА, в частности частями 4, 5, 11, которые предусматривают, что при применении мер обеспечения следует учитывать финансовое состояние юридического лица, и необходимость обеспечения нормального функционирования юридического лица. Неслучайно, что часть 11 ст. 455 предусматривает положение о том, что на основании ходатайства законного представителя или уполномоченного представителя юридического лица орган, осуществляющий процедуру, может разрешить совершение отдельных сделок, если это необходимо **для обеспечения нормальной деятельности юридического лица**.¹⁸

Таким образом, можно презюмировать, что при применении мер обеспечения необходимо придерживаться политики «экономии процессуального принуждения», принимая во внимание такие критерии, как «необходимость».

С другой стороны, законодатель в отличие от мер пресечения не предусматривает конкретные временные сроки действия обеспечительных мер и возможность продления действия сроков, что значительно ограничивает нормальную деятельность юридического лица. Такие меры пресечения как содержание под стражей (арест), домашний арест, административный контроль в силу своей степени ограничения свобод лица предусматривают обязательный судебный контроль и принимаются на определенный срок с возможностью продления сроков действия (ст. 119 УПК). В то же время следует заметить, что меры обеспечения, определенные пунктами 3-6 части 2 статьи 445 УПК РА, применяются в ходе предварительного расследования на основании постановления следователя и передаются на утверждение компетентному суду в течение трех дней.

Такое законодательное закрепление вызывает ряд теоретических и практических вопросов, например, законодатель четко не устанавливает пределы судебного контроля обеспечительных мер: являются ли они предметами судебного контроля за досудебным производством¹⁹, какие решения принимаются в процессе утверждения судом, в какие сроки принимаются меры обеспечения, определенные пунктами 3-6 части 2 статьи 445 УПК РА, имеются ли механизмы продления сроков действия обеспечительных мер, может ли решение суда обжаловаться, в каком порядке Суд принимает решения очно или заочно, обязательно ли присутствие законного или доверительного представителя обвиняемого юридического лица, могут ли приниматься одновременно несколько видов обеспечительных мер в совокупности, подлежит ли изменению выбранная обеспечительная мера другим видом.

Законодатель упустил вопрос о возможности обжалования принятой меры обеспечения

¹⁸ Аналогичное положение закреплено также в статье 128 (часть 2) УК РА: «Сумма штрафа не может привести к непосредственному банкротству или ликвидации юридического лица».

¹⁹ Статья 299 УПК РА, где законодатель рассматривает объемы и пределы судебных гарантий законности досудебных актов, четко перечисляет досудебные акты, которые подлежат судебному обжалованию, в перечне не упоминается их возможность обжалования.

через судебную инстанцию, в частности, в статье 299 УПК, где законодатель устанавливает объем судебных гарантий, в силу которой обжалуются виды досудебных актов, не упоминается возможность обжалования обеспечительных мер, в то время как в статье упоминается возможность обжалования мер пресечения.

Считаем, что отсутствие такого упоминания является препятствием для защиты правомерных гарантий юридических лиц, и может стать поводом злоупотребления органов расследования.

Для нивелирования таких рисков считаем, что в перечень досудебных актов подлежащих к обжалованию следует включить еще меры обеспечения, применяемые в отношении юридического лиц.

С другой стороны, в части 2 статьи 299 УПК законодатель устанавливает возможность обжалования и иных досудебных актов, согласно которой «Судебному обжалованию подлежат также те досудебные действия (акты), которые будет невозможно оспорить в ходе судебного разбирательства или заведомо лишают заявителя реальной возможности эффективно защищать свои законные интересы».

Следует констатировать, что при широком толковании части 2 статьи 299 УПК, не подлежат сомнению, что меры обеспечения должны является предметом обжалования, входящих в объем судебных гарантий, в противном случае, права и свободы юридических лиц могут необоснованно ограничиваться и стать объектом злоупотребления со стороны властных органов.

Меры обеспечения, применяемые в отношении юридических лиц, являются новизной армянского уголовно-процессуального законодательства, в то же время законодатель оставил вне поля зрения ряд проблемных вопросов, имеющих существенное значение, поскольку меры вмешательства, являясь мерами по предупреждению преступлений, могут неоправданно ограничивать или создавать возможности для злоупотреблений защиты правовых норм, интересов и прав юридических лиц.

Уголовное законодательство, направленное на охрану свободы экономических отношений, должно представлять собой четкий набор единообразно сконструированных, понятных для восприятия и удобных для применения уголовно-правовых запретов. Потенциал уголовного и уголовно-процессуального права следует использовать для охраны общественных отношений в сфере свободной экономической деятельности лишь при условии неэффективности иных, ино-отраслевых мер правового воздействия.

Заключение

В данной статье акцентируется внимание на необходимости совершенствования уголовно-процессуального законодательства Республики Армения для обеспечения баланса между эффективным предотвращением преступлений и защитой прав юридических лиц. Автор подчеркивает, что внедрение более прозрачных и регламентированных процедур обеспечительных мер минимизирует риски злоупотреблений со стороны органов предварительного расследования, укрепит правовые гарантии юридических лиц и создаст условия для прозрачного и предсказуемого правоприменения.

Особое внимание уделяется пробелам в законодательной регламентации, включая отсутствие классификации мер по строгости, неурегулированность временных рамок их действия и недостаточный уровень судебного контроля. Эти недостатки способствуют правовой неопределенности и создают почву для злоупотреблений процессуальными полномочиями.

Анализ проводится также в контексте экономической деятельности. Избыточное применение уголовно-правовых запретов и обеспечительных мер может негативно сказаться на свободе предпринимательства, приводя к необратимым последствиям, включая утрату бизнеса. Это подчеркивает необходимость точного и сбалансированного подхода к разработке и применению таких мер.

Важным выводом является необходимость соблюдения баланса между интересами государства в борьбе с преступностью и защитой прав юридических лиц. Достижение этой цели возможно через совершенствование нормативной базы, интеграцию принципов пропорциональности, справедливости и судебного контроля в процесс применения обеспечительных мер. Такой подход позволит повысить доверие к правовой системе и обеспечить эффективную защиту общественных интересов в рамках уголовного судопроизводства.

Аннотация: В статье анализируются обеспечительные меры, применяемые к юридическим лицам в уголовно-процессуальном законодательстве Республики Армения. Эти меры направлены на предотвращение преступной деятельности, сохранение доказательств и обеспечение возмещения ущерба. Рассматриваются новеллы законодательства, включающие арест имущества, ограничение деятельности и другие инструменты. Автор выявляет ряд пробелов в законодательстве, что создает риски злоупотреблений и правовую неопределенность. Подчеркивается необходимость сбалансированного подхода к применению мер, минимизирующего их влияние на экономическую деятельность юридических лиц.

Автор выделяет различия между обеспечительными мерами, применяемыми в уголовном процессе, и аналогичными мерами в гражданском, административном судопроизводстве, подчеркивая их превентивно-охранительный характер. Рассматриваются правовые основания для применения данных мер, их процедурные аспекты, а также условия, при которых такие меры становятся необходимыми.

Ամփոփագիր: Հոդվածում համառոտ վերլուծվում են ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող ապահովման միջոցները: Այս միջոցառումներն ուղղված են հանցավոր գործունեության կանխարգելմանը, ապացույցների պահպանմանն ու փոխհատուցման ապահովմանը: Դիտարկվում է ապահովման միջոցների նոր տեսակները, ներառյալ գույքի վրա կալանք դնելը, գործունեության սահմանափակումները և այլ գործիքներ: Հեղինակը մատնանշում է օրենսդրության մի շարք բացեր, որոնք ստեղծում են չարաշահումների և իրավական անորոշության ռիսկեր: Ընդգծվում է իրավաբանական անձանց տնտեսական գործունեության վրա դրանց ազդեցությունը, նվազագույնի հասցնող միջոցառումների կիրառման հավասարակշռված մոտեցման անհրաժեշտությունը: Հեղինակն առանձնացնում է տարբերությունները քրեական դատավարությունում կիրառվող ապահովման միջոցների և քաղաքացիական, վարչական դատավարություններում կիրառվող նմանօրինակ միջոցների միջև՝ ընդգծելով դրանց կանխարգելիչ և պահպանողական բնույթը: Վերլուծվում են տվյալ միջոցների կիրառման իրավական հիմքերը, դրանց ընթացակարգային ասպեկտները, ինչպես նաև այն պայմանները, որոնց դեպքում այդ միջոցները դառնում են անհրաժեշտ:

Annotation. The article analyzes the security measures applied to legal entities in the criminal procedure legislation of the Republic of Armenia. These measures are aimed at preventing criminal activity, preserving evidence and ensuring compensation for damage. The article examines legislative innovations, including seizure of property, restriction of activities and other instruments. The author identifies a number of gaps in the legislation, which creates risks of abuse and legal uncertainty. The need for a balanced approach to the application of measures that minimizes their impact on the economic activities of legal entities is emphasized.

The author highlights the differences between interim measures applied in criminal proceedings and similar measures in civil and administrative proceedings, emphasizing their preventive and protective nature. The legal grounds

for applying these measures, their procedural aspects, and the conditions under which they become necessary are examined.

Ключевые слова: *обеспечительные меры, юридические лица, уголовный процесс, правовые гарантии, уголовно-процессуальные правоотношения, меры обеспечения.*

Բանալի բառեր - *ապահովման միջոցներ, իրավաբանական անձ, քրեական վարույթ, իրավական երաշխիքներ, քրեադատական իրավահարաբերություններ:*

Keywords: *interim measures, legal entities, criminal proceedings, legal guarantees, criminal procedural legal relations.*

СПИСОК ИСПОЛЬЗОВАННОЙ ЛИТЕРАТУРЫ

1. Бажанов С.В. Состояние законности при возбуждении уголовных дел и расследовании преступлений, совершаемых предпринимателями // Право и экономика. 2017. No 8. С. 17-25.
2. Еникеев З.Д. Проблемы эффективности мер уголовно-процессуального пресечения. Казань, 1982. С. 6.
3. Жарииков Ю.С. Уголовно-правовое регулирование и механизм его реализации. - М.: Юриспруденция, 2009. - 216 с.
4. Зинатуллин З. З. Уголовно-процессуальное принуждение. Казань, 1981. С. 66.
5. Капинус Н. И. Меры пресечения в российском уголовном процессе [Текст] / Н. И. Капинус // Следователь. - 1998. - № 8.
6. Михайлов В. А. Меры пресечения в российском уголовном процессе / В. А. Михайлов. - М., 1996.
7. Муравьев К.В. Оптимизация законодательства о мерах пресечения // Вестник Восточно-Сибирского института МВД. 2017. No 2. С. 139-148.
8. Отческая Т.И. Обеспечение прокуратурой и судами свободы экономической деятельности // Законы России: опыт, анализ, практика. 2018. № 6. С. 70-74.
9. Петрова Г.О. Уголовно-правовое регулирование и его средства: норма и правоотношение: Дис. ... докт. юрид. наук. - Нижний Новгород, 2003. - 304 с.
10. Попов А. М., Громов А. Н., Черкасов А. Д. Совершенствование и правовая природа ареста как меры уголовно-процессуального пресечения // Рос. следователь. 2001. No 5.
11. Постановление Пленума Верховного Суда Рос. Федерации от 19 декабря 2013 г. No 41.
12. Тихонов Я.И. Юридическая превенция как фактор опережающего регулирования // Государственная власть и местное самоуправление. 2018. № 9. С. 3-5.
13. Ткачева Н.В. Теория и практика мер пресечения, не связанных с заключением под стражу: дис. ... канд. юрид. наук. Челябинск, 2003. 248 с.].
14. Шарипова А.Р. Сравнительно-правовой анализ обеспечительных мер в уголовном, арбитражном, гражданском и административном судопроизводстве // Юридический вестник Самарского университета. 2018. №4.

БАЯНДУРЯН О. - Член палаты адвокатов РА, аспирант кафедры уголовного права и уголовно-процессуального права Института права и политики РАУ, эл. почта: hovhannes.bayanduryan@mail.ru.

Статья представлена в редакцию 15.12.2024 г., отправлена на рецензию 15.12.2024 г., рецензенты: Профессор кафедры уголовного права и уголовно-процессуального права, д.ю.н., заслуженный профессор РАУ Цагилян С., принята к публикации: 20.01.2025.

ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ/CRIMINALISTICS/КРИМИНАЛИСТИКА

<https://doi.org/10.59546/18290744-2024.10-12-72>

ՍՈՒՐԵՆ ԲԱԴԻՆՅԱՆ
*ԵՊՀ քրեական դատավարության և
կրիմինալիստիկայի ամբիոնի հայցորդ*

SUREN BAGHINYAN
PhD student of the Criminal Procedure and Criminalistics
Department of Yerevan State University

СУРЕН БАГИНЯН
*Соискатель кафедры уголовного
процесса и криминалистики ЕГУ*

**ՊԵՏԱԿԱՆ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԻ
ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**PROBLEMS AND FEATURES OF THE STAGES OF THE INVESTIGATION
OF HIGH TREASON**

**ПРОБЛЕМЫ И ОСОБЕННОСТИ ЭТАПОВ РАССЛЕДОВАНИЯ
ГОСУДАРСТВЕННОЙ ИЗМЕНЫ**

Ներածություն

Պետական անվտանգության ապահովումը՝ որպես պետության ինքնիշխանության կայուն երաշխավորման անկյունաքար, ենթադրում է դրա ապահովման ուղղությամբ օրենսդրական համապատասխան գործիքների մշակում, որոնք, ամրագրվելով պետության կողմից ընդունված համապատասխան օրենսդրական ակտերով, նախանշում են պետություն-քաղաքացի իրավական կապը միջնորդավորող երկուստեք պարտավորությունների իրավական սահմանը: Բնական է, որ նմանօրինակ վարքագիծը ենթադրում է հանրային վտանգավորության չափազանց բարձր աստիճան, որով պայմանավորված՝ ներպետական քրեական օրենսդրությամբ այն նախատեսվում է որպես առանձնապես ծանր հանցագործություն՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *պետական դավաճանությունը՝ թշնամու կողմն անցնելը, լրտեսությունը, օտարերկրյա պետությանը, օտարերկրյա կամ միջազգային կազմակերպությանը կամ դրա ներկայացուցչին պետական*

գաղտնիք պարունակող տեղեկություն հանձնելը կամ այդ տեղեկությանը նշված անձանց ծանոթանալու համար պայման ստեղծելը կամ թշնամական գործունեություն իրականացնելու համար այլ օգնություն ցույց տալը, որը կատարել է Հայաստանի Հանրապետության քաղաքացին՝ ի վնաս Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության, փարածքային անձեռնմխելիության կամ արտաքին անվտանգության¹:

Ընդ որում, հարկ է նկատի ունենալ այն իրողությունը, որ պետական դավաճանության օբյեկտիվ կողմը կազմող գործողությունները գործող օրենսդրությամբ իրավաչափորեն սպառնիչ լրիվությամբ թվարկված չեն՝ հանգամանք, որի պայմաններում անձի կատարած ցանկացած՝ բնույթով թշնամական գործունեություն կարող է որակվել քրեական օրենսգրքի քննարկվող հոդվածով ի հարկե, եթե հոդվածով սահմանված պատասխանատվության առաջացման մնացյալ վավերապայմանները պահպանված են:

Պետական դավաճանության հանցակազմի հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթի քննության արդյունավետությունն ընդհանրապես, պետական դավաճանության վարույթներով մասնավորապես, էականորեն պայմանավորված է քննության ընթացքի պլանաչափ և կազմակերպված իրականացումից, որի ապահովման կարևորագույն գրավականներից է քննության որոշակի փուլերի խնդիրների որոշակիացումը: Այլ կերպ՝ ինչպես ցանկացած տեսակի հանցագործության, այնպես էլ պետական դավաճանության քննության յուրաքանչյուր փուլ ունի իրեն բնորոշ առանձնահատկությունները, որոնց համատեքստում կարող են բացահայտվել քննության արդյունավետության բարձրացման խնդիրները:

Հիմնական հետազոտություն

Ընդհանրապես կրիմինալիստիկական գրականության մեջ առանձնացվում են երեք փուլեր, որոնցով ընթանում է քննության ողջ գործընթացը. սկզբնական, հետագա և եզրափակիչ²: Փուլերը տարբերվում են ստեղծված քննչական իրավիճակների յուրահատկությամբ և լուծվելիք խնդիրների բնույթով:

Քննության սկզբնական փուլի սահմանման վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ առկա են տարբեր մոտեցումներ: Մասնավորապես՝ Ի. Մ. Լուզգինն այն բնորոշում է հետևյալ կերպ. «Քննության փուլն այնպիսի փուլ է, որն իրենից ներկայացնում է գործողությունների փոխկապակցված համակարգ՝ միավորված խնդիրների և իրավիճակների միասնությամբ, այսինքն՝ քննության պայմաններով, քրեաբանական գործունեության յուրահատկությամբ»³:

Կրիմինալիստիկայի գիտության մեջ առանձնացվում են քննության սկզբնական փուլում լուծման ենթակա հետևյալ խնդիրները.

- Վարույթն իրականացնող մարմնի պաշտոնատար անձի կողմնորոշումը քննվող իրարարծությունների պայմաններում,
- ապացուցման ենթակա հանգամանքների որոշակիացումը,
- քննության պլանավորման համար ելակետային տվյալների ստացումը,
- բոլոր հնարավոր ապացույցների հավաքումը և ամրագրումը, որոնք, հակառակ պարագայում, ժամանակի ընթացքում կարող են վերացվել,

¹ Ընդունվել է 05.05.2021 թ. ուժի մեջ է մտել 01.07.2022 թ., միասնական կայք՝ 2021.05.17-2021.05.30:

² Տե՛ս *Белкин Р. С.*, Курс советской криминалистики. Т. 3. М., 1979, էջ 259:

³ Տե՛ս *Лузгин И. М.*, Методологические проблемы расследования. М., 1973, էջ 26:

- հանցագործի բացահայտումը, հետախուզումը և ձերբակալումը թարմ հետքերով⁴:

Հետազայում այդ ցանկը համարվել է այնպիսի խնդիրներով, ինչպիսիք են նյութական վնասի հատուցման ապահովումը, հանցագործության խափանումը և նախականխումը⁵:

Քննության այս փուլում կատարվող քննչական գործողություններն ու օպերատիվ-հետախուզական միջոցառումները (այուհետև՝ ՕՀՄ-ները) կրիմինալիստիկական մեթոդիկայի ինքնուրույն տարրեր են, ընդ որում՝ դրանց թվարկը տիպային բնույթի է:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ քննչական գործողությունների ալգորիթմը, ինչպես նաև դրանց կատարման հերթականությունը, որոշում է վարույթն իրականացնող մարմինը՝ ելնելով ստեղծված քննչական իրավիճակից:

Քննչական գործողությունների կատարման հերթականությունը մանրամասն ուսումնասիրել է Ա. Վ. Ռագուլինը և հանգել եզրակացության, որ (...) ցանկացած հանցագործություն քննելիս առաջնահերթության կարգով իրականացման առավելություններ ունեն այն գործողությունները, որոնք՝

1. ուղղված են այն ապացույցների հավաքմանը, որոնք, հապաղման դեպքում, հավանական է, որ կանհետանան,

2. ուղղված են հանցանք կատարած անձի հայտնաբերմանը, հետախուզմանը կամ մեկուսացմանը, եթե վերջինս՝ ազատության մեջ լինելը վտանգ է ներկայացնում հանրության համար,

3. նպաստում են ձերբակալված կամ կալանավորված անձին մեղադրանք առաջադրելու փաստական հանգամանքների բացահայտմանը,

4. անհրաժեշտ են մյուս քննչական գործողությունների կատարումն ապահովելու համար,

5. նպաստում են միանգամից մի քանի քննչական վարկածների ստուգմանը,

6. ժամանակատար են,

7. չեն խախտում նախաքննության գաղտնիության սկզբունքը,

8. կապված են անձանց, առարկաների, փաստաթղթերի հետ, որոնց առկայությունը հնարավոր չի լինի ապահովել հետազայում⁶:

Մասնագիտական գրականության մեջ իրավագիտորեն քննադատվում է որոշակի քննչական գործողություններն որպես «անհետաձգելի» բնորոշելը⁷, քանի որ ցանկացած քննչական գործողություն, քննության առանձնահատկություններից ելնելով, կարող է համարվել անհետաձգելի: Այս ենթատեքստում միանգամայն տեղին է վկայակոչել ՀՀ վաստակավոր իրավաբան, պրոֆեսոր Վ. Գ. Ենգիբարյանի տեսակետը, ով, թեև համաձայնվելով վերը նշվածի հետ, այնուամենայնիվ նշում է, որ կան քննչական գործողություններ, որոնք իրենց բնույթով և բովանդակությամբ պայմանավորված՝ նպատակահարմար չէ համարել անհետաձգելի, թեև գործնականում չի բացառվում դրանց կատարումը քննության սկզբնական փուլում: Այսպես, առերեսում կատարելու համար անհրաժեշտ է առնվազն երկու անձանց արդեն կատարված և ավարտված հարցաքննություններ, և որոնց տված ցուցմունքների միջև առկա են էական

⁴ Տե՛ս Криминалистика. М., 1959, էջեր 333-334:

⁵ Տե՛ս Колесниченко А. X., Общие положения методики расследования отдельных видов преступления. Харьков, 1965, էջ 37:

⁶ Տե՛ս Рагулин А. В., Хулиганство, уголовно-правовые аспекты: Учебное пособие, изд-во Восточного института экономических, гуманитарных наук, управления и права, Челябинск. 2005, էջ 245:

⁷ Տե՛ս, ՀՀ քրեական դատավարություն, Հատուկ մաս, խմբագրությամբ Գ. Ս. Ղազինյանի, Երևան, «Տիգրան Մեծ», 2003, էջ 116:

հակասություններ: Հասկանալի է, որ հարցաքննությունների կատարումը, այնուհետև, դրանց արդյունքում ստացված ցուցմունքների վերլուծությունն էական բնույթի հակասությունների պարզաբանման նպատակով քննիչից պահանջում են որոշակի ժամանակ և լրացուցիչ միջոցներ, որոնք բացառում են դրա կատարման անհետաձգելիությունը: Ավելին, նշված քննչական գործողության կատարումն առավել համահունչ է քննության հետագա փուլի խնդիրներին: Նույնը վերաբերում է նաև ճանաչման ներկայացնելուն, քննչական փորձարարությանը, որոնց կատարման համար, որպես կանոն, պահանջվում են այլ՝ (անհետաձգելի) կատարված (ավարտված) քննչական գործողությունների արդյունքներ⁸:

Այսպիսով՝ քննչական գործողությունների դասակարգման վերաբերյալ գիտնականների կարծիքները տարբերվում են, սակայն դա չի կարելի համարել որպես թերություն, քանի որ դասակարգվող խմբերի բազմազանությունն օրինաչափ երևույթ է: Այն արտացոլում է քննչական գործողությունների իրավական կարգավորման բազմակողմանիությունը, ճանաչողական գործողությունների իրականացման մեթոդների տարբերությունները, ապացուցողական արդյունքների ստացման յուրահատկությունը⁹:

Պետական դավաճանության գործերի քննության մեթոդիկայի կառուցվածքային վերլուծության տեսանկյունից թերևս առավել բնութագրական կարող է համարվել քննչական գործողությունների դասակարգումը՝ կախված դրանց նպատակային նշանակությունից: Ըստ այդմ՝ քննչական գործողությունները բաժանվում են հետևյալ տեսակների.

- Քննչական գործողություններ, որոնց առաջնահերթ նշանակությունն այնպիսի տվյալների հայտնաբերումն ու ամրագրումն է, որոնք կարող են դառնալ ապացույցների համապատասխան տեսակների բովանդակությունը՝ դեպքի տեղի և դիակի գննությունը, քննումը, խուզարկությունը, առգրավումը, վկայի և տուժողի հարցաքննությունը: Այս քննչական գործողությունները կարող են իրականացվել նաև այն տվյալների հիման վրա, որոնք ստացվել են օպերատիվ-հետախուզական ճանապարհով:

- Քննչական գործողություններ, որոնց գլխավոր նպատակը հավաքված ապացույցների ստուգումն է՝ քննչական փորձարարություն, առերեսում, ճանաչման ներկայացում, տեղում ցուցմունքի ստուգում, որոնք որպես իրականացման հիմք կարող են ունենալ միայն դատավարական եղանակներով ստացվող տվյալները: Այդ քննչական գործողությունների շարքին կարելի է դասել նաև փորձաքննության կատարումը:

- Առանձնահատուկ նպատակով և հիմքերով քննչական գործողություն, այն է՝ մեղադրյալի հարցաքննությունը¹⁰:

Ինչ վերաբերում է քննչական գործողությունների մյուս խմբին՝ գաղտնի քննչական գործողություններին, դրանց շրջանակը սահմանված է ՀՀ ՔԴՕ 248-րդ հոդվածով, որոնք են.

1. ներքին դիտում,
2. արտաքին դիտում,
3. նամակագրության և այլ ոչ թվային հաղորդումների վերահսկում,
4. թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում,

⁸ Այդ մասին մանրամասն տես *Ենգիբարյան Վ.*, Առանձին քննչական գործողությունների կատարման տակտիկա: Կրիմինալիստիկական տակտիկա: Գիտագործնական ձեռնարկ Երևան, Թասկ ՍՊԸ, 2018, էջ 34-35:

⁹ Տես *Комиссаренко Е. С.*, Следственные действия в уголовном процессе России. Дисс. ... канд. юрид. наук. Саратов, 2005, էջ 100:

¹⁰ Տես *Зажичкий В. И.*, Результаты оперативно-розыскной деятельности в уголовном судопроизводстве: теория и практика: монография, СПб. Юрид. центр Пресс, 2006, էջեր 224-245:

5. ֆինանսական գործարքների վերահսկում,
6. կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում:

Անշուշտ, նման կարգավորման պարագայում այս տեսակ քննչական գործողությունների նկատմամբ քննիչի կողմից վերահսկողության իրականացումն առավել արդյունավետ կլինի: Ավելին, գործնականում կարող է բարելավվել դրանց կազմակերպման արդյունավետությունը, հատկապես քննիչի և հետաքննության մարմնի փոխհարաբերությունների, ինչու չէ նաև փոխգործողության ձևերի կատարելագործման համատեքստում:

Ինչ վերաբերում է ՕՀՄ-ներին, ապա դրանք սահմանված են «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասում:

Ինչպես իրավաքննիչներն նշում է ՀՀ վաստակավոր իրավաբան, պրոֆեսոր Վ. Գ. Ենգիբարյանը, քննության սկզբնական փուլում քննիչից պահանջվում է գործողությունների առավելագույն օպերատիվություն: Անհրաժեշտ է ամբողջական պատկերացում կազմել քննվող իրադարձությունների մասին, հավաքել ապացույցներ, այլապես դրանք կարող են անհետանալ կամ ոչնչացվել, հանցագործությունը «տաք հետքերով» բացահայտելու համար ջանքեր գործադրել, հայտնաբերել և ձերբակալել մեղավորներին, հնարավորինս արագ միջոցներ ձեռնարկել ապահովելու հանցագործության ընթացքում պատճառված վնասների հատուցումը, տուժողներին ցույց տալ առաջին անհրաժեշտ օգնություն:

Ինչ վերաբերում է քննության հետագա փուլին, ապա պետք է նշել, որ ապացույցների հետագա հավաքման, ստուգման, գնահատման և օգտագործման նպատակն ապացուցման առարկայի բոլոր տարրերի վերհանումն է:

Ի տարբերություն քննության սկզբնական փուլում իրականացվող քննչական գործողությունների, այս փուլում դրանք հիմնականում ուղղված են փաստական տվյալների ստուգմանն ու գնահատմանը՝ կրելով առավելապես ստուգող և հաստատող բնույթ: Ընդ որում, դրանց կատարման տակտիկական նույնպես կարող է էապես փոփոխվել, քանզի փոխվում են քննության խնդիրները, ստացվող տվյալների ծավալը, քննչական իրադրությունը և այլն: Դա նշանակում է, որ քննիչի աշխատանքային գործունեությունը կրում է ստեղծագործական բնույթ, և հետագա փուլի ընթացքն առավելապես կանխորոշվում է սկզբնական փուլի առանձնահատկություններով:

Եվ, ի վերջո, անհրաժեշտ է նշել, որ մասնավոր կրիմինալիստիկական մեթոդիկական իրենից ներկայացնում է հանձնարարականների համակարգ՝ մոդել, ինչը քննչական պրակտիկայի, առաջավոր փորձի ընդհանրացման արդյունք է, որի իրագործումը թույլ է տալիս քննչական և դատական պրակտիկայում կանխել բազմաթիվ սխալներ ու բացթողումներ¹¹:

Պետական դավաճանության քննության սկզբնական փուլի կառուցվածքը կազմում են կազմակերպչական միջոցառումների համակցությունը (քննության պլանավորումը, վարկածների առաջադրումը, տեխնիկական ապահովումը և այլն), քննչական, գաղտնի քննչական գործողությունները և ՕՀՄ-ները:

Պետական դավաճանությունների քննության սկզբնական փուլին բնորոշ են հետևյալ վարկածների առաջադրումը.

- Հանցավոր արարքների մասին նախնական տեղեկությունների ստացումն ու ամրագրումը քննչական, գաղտնի քննչական գործողությունների և ՕՀՄ-ների միջոցով:

¹¹ Ենգիբարյան Վ. Գ., Հանցագործությունների քննության մեթոդիկա: Կրիմինալիստիկական մեթոդիկա: «Դասագիրք բուհերի համար», Երևան 2017, «Թասկ» ՍՊԸ, էջ 64:

• Հանցավորի հայտնաբերումն ու ձերբակալումը, որոշակի անձի կամ անձանց՝ «պետական դավաճանություն» հանցագործության հանցակազմը կազմող գործողությունների հետ ունեցած կապի պարզումը:

Քննության այս փուլում պետք է պարզվեն և ապացուցվեն հետևյալ հանգամանքները.

1. Արարքների նպատակը, որոնք կազմել են պետական դավաճանության հանցակազմը, այսինքն՝ անհրաժեշտ է պարզել, թե կոնկրետ ինչպիսի գործողություններ է կատարել անձը հոգուտ օտարերկրյա պետության:

2. Պետական դավաճանության կատարման հանգամանքները՝ իրավիճակը (ժամականը և տեղը, որտեղ կատարվել է հանցանքը), հանցանքի կատարման միջոցը (օրինակ՝ գաղտնի տեղեկությունների տիրապետող անձանց հետ կապի միջոցով իրականացվող լրտեսություն, դրանց ամրագրումն էլեկտրոնային հաղորդակցման արդի միջոցներով), ձերբակալվածի կամ մեղադրյալի շրջապատում գտնվող անձինք, ովքեր կարող են անհրաժեշտ տեղեկություններ տրամադրել քրեական վարույթով, հանցանքը կատարելու պահին մեղադրյալի և օտարերկրյա պետության ներկայացուցչի շփմանը ականատես անձինք և այլն:

3. Պետական դավաճանության առարկան, դրա հատկանիշների, տեղեկությունների ստացման աղբյուրների, ֆինանսական միջոցների ստացման աղբյուրների վերաբերյալ փաստական տվյալները և այլն:

4. Մասնակիցների շրջանակը, եթե այդպիսիք եղել են: Պետական դավաճանություն կատարած անձի իրավասությունների բնույթը, նրա զբաղեցրած պաշտոնը, հանցավոր գործունեության մասնակիցների միջև փոխհարաբերությունները, յուրաքանչյուր մասնակցի դերը, պետական դավաճանության մեջ անձի մեղավորությունը, հանցանքի կատարման նպատակն ու դրդապատճառները, որի շահերից ելնելով է գործել հանցավորը՝ իր, թե այլ անձանց, ովքեր աշխատել են արտասահմանյան կազմակերպության կամ հատուկ ծառայության հետ կամ դրա հսկողության ներքո:

5. Հանցագործության քղարկման փաստերը, հանցավոր հաղորդակցման ճանապարհները:

Նմանօրինակ իրավիճակում հաշվի առնելով քննարկվող հանցակազմի հատկանիշներով քրեական վարույթների առանձնահատկությունները՝ կարելի է ընդհանրացնել այն մարտահրավերները, որոնց առերեսվում է քննիչը համապատասխան վարույթների քննության ժամանակ.

• Օտարերկրյա հետախուզական մարմինների գործունեությունը մանրակրկտորեն քննարկվում է և իրականացվում է պրոֆեսիոնալ բարձր մակարդակի վրա:

• Օտարերկրյա հետախուզական ծառայությունների հետ կոնտակտի մեջ գտնվող անձինք որպես կանոն ունեն մասնագիտական գիտելիքների բարձր մակարդակ, անցել են համապատասխան ուսումնառություն, տեղյակ են օպերատիվ աշխատանքի հնարավորություններին:

• Օտարերկրյա հետախուզական ծառայությունների առաջադրանքով կատարվող արարքը կարող է իրականացվել այն անձանց աջակցելու միջոցով, որոնք անմիջական կապ ունեն օտարերկրյա ռեզիդենտուրայի հետ, ընդ որում՝ իրենք տեղյակ չեն օտարերկրյա հետախուզական ծառայությունների համար աշխատելու մասին:

• Օտարերկրյա հետախուզական ծառայությունների շահերից ելնելով՝ հանցավոր գործունեություն իրականացնող անձինք որպես կանոն ունեն մտավոր զարգացվածության բարձր

մակարդակ, որը թույլ է տալիս նրանց պլանավորել իրենց գործողություններն ու կանխատեսել դրանց արդյունքները:

- Օտարերկրյա հետախուզական ծառայությունների հետ կապերն իրականացվում են հաղորդակցության նորագույն և կատարելագործված միջոցների օգնությամբ, ինչպես նաև այնպիսի եղանակներով տեղեկությունների փոխանցման միջոցով, որոնք դժվար է հայտնաբերել, օրինակ՝ կրիպտոգրաֆիական կամ այլ կերպ քողարկված:

- Օտարերկրյա հետախուզական ծառայությունների օգտին հանցավոր գործունեություն իրականացնող անձինք հաճախ ունենում են սոցիալական և մասնագիտական բարձր կարգավիճակ, ինչը բարդացնում է անհրաժեշտ քննչական գործողությունների կատարման իրադրությունը:

Պետական դավաճանության քննության սկզբնական փուլն ավարտվում է, երբ հավաքվում են բավականաչափ ապացույցներ կատարված հանցագործության հանգամանքների և կոնկրետ անձի մեղավորության մասին հիմնավոր քննչական վարկածներ առաջ քաշելու համար:

Ինչ վերաբերում է պետական դավաճանության քննության հետագա փուլին, ապա պետք է նշել, որ դրա հիմնական խնդիրը ձեռք բերված տվյալների, ստացված ապացույցների ստուգումն ու գնահատումն է և դրան առավելապես բնորոշ են վարության այնպիսի գործողություններ, ինչպիսիք են առերեսումը, ճանաչման ներկայացումը, լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննությունների կատարումը, լրացուցիչ հարցաքննությունը, զննությունը, տեղում ցուցմունքը ստուգելը և այլն: Չի բացառվում նաև այս փուլում գաղտնի քննչական գործողությունների կատարումը, օրինակ, հնարավոր հանցակիցների, առանձին դրվագների բացահայտման նպատակով:

Ասվածն ամենևին էլ չի նշանակում, թե այս փուլում չեն կարող ձեռք բերվել նոր ապացույցներ կամ կատարվեն դրանց ուղղված վարության գործողություններ:

Ինչպես մյուս տեսակի հանցագործությունների, այնպես էլ պետական դավաճանության քննության այս փուլին բնորոշ են մեղադրյալի մասնակցությամբ կատարվող քննչական գործողությունները: Քրեական վարույթի շրջանակում ստացված ապացույցների հիման վրա քննիչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված կարգով որոշում է կայացնում մեղադրանք ներկայացնելու մասին:

Այս փուլում ձևավորված քննչական իրադրությունից կախված՝ իրականացվող քննչական գործողությունների շրջանակը կարող է ընդլայնվել:

Քննության տվյալ փուլը եզրափակվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածով սահմանված կարգով մեղադրական եզրակացության կազմումով, որտեղ ամփոփվում են նախնական քննությամբ արված հետևությունները, ապացույցներով հիմնավորվում է քննիչի հետևությունը մեղադրյալի մեղավորության վերաբերյալ և տրվում է նրա գործողությունների իրավաբանական գնահատականը, վերջնական ձև է ստանում քրեական մեղադրանքը:

Եզրակացություն

Պետական դավաճանության կատարման դեպքում, երբ անձն օտարերկրյա պետությանը, օտարերկրյա կազմակերպությանը կամ դրանց ներկայացուցիչներին փոխանցում կամ փոխանցելու նպատակով հավաքում է պետական գաղտնիք հանդիսացող տեղեկություններ

կամ այնպիսի տեղեկություններ, որոնց հրապարակումը հանգեցնում է պետության անվտանգության, պաշտպանունակության թուլացմանը:

Այսպիսով կարող ենք փաստել, որ պետական դավաճանության հանցակազմի հատկանիշներով նախաձեռնվող քրեական վարույթների ընթացքում անհրաժեշտաբար պետք է ուշադրություն դարձվի դրա յուրաքանչյուր բաղադրիչին՝ հաշվի առնելով ժամանակակից մարտահրավերները և դրանց դեմ արդյունավետ պայքար մղելու պետության հրամայական պարտավորությունը:

Ամփոփագիր: Սույն հոդվածում հեղինակն անդրադարձել է պետական դավաճանության գործերով քրեական վարույթների քննության փուլերի խնդիրներին ու առանձնահատկություններին: Ելնելով այն հանգամանքից, որ պետական դավաճանությունը հանրային վտանգավորության չափազանց բարձր աստիճան ունի՝ ներպետական քրեական օրենսդրությամբ համարվում է առանձնապես ծանր հանցագործություն՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Պետական դավաճանության հանցակազմի հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթի քննության արդյունավետությունն ընդհանրապես, պետական դավաճանության վարույթներով մասնավորապես, էականորեն պայմանավորված է քննության ընթացքի պլանաչափ և կազմակերպված իրականացումից, որի ապահովման կարևորագույն գրավականներից է քննության որոշակի փուլերի խնդիրների որոշակիացումը: Ինչպես ցանկացած տեսակի հանցագործության, այնպես էլ պետական դավաճանության քննության յուրաքանչյուր փուլ ունի իրեն բնորոշ առանձնահատկությունները, որոնց համատեքստում կարող են բացահայտվել քննության արդյունավետության բարձրացման խնդիրները: Հաշվի առնելով պետական դավաճանության գործերի քննության մեթոդիկայի կառուցվածքային վերլուծությունը՝ հեղինակը գտել է, որ առավել բնութագրական կարող է համարվել քննչական գործողությունների դասակարգումը՝ կախված դրանց նպատակային նշանակությունից և ըստ այդմ կատարել է քննչական գործողությունների համապատասխան բաժանումը: Այնուհետև հեղինակն անդրադարձել է ինչպես պետական դավաճանության գործերով իրականացվող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված քննչական և գաղտնի քննչական գործողություններին, այնպես էլ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված օպերատիվ-հետախուզական միջոցառումներին:

Ընդհանրացնելով՝ հեղինակը եկել է այն եզրահանգման, որ պետական դավաճանության հանցակազմի հատկանիշներով նախաձեռնվող քրեական վարույթների ընթացքում անհրաժեշտաբար պետք է ուշադրություն դարձվի դրա յուրաքանչյուր բաղադրիչին՝ հաշվի առնելով ժամանակակից մարտահրավերները և դրանց դեմ արդյունավետ պայքար մղելու պետության հրամայական պարտավորությունը:

Annotation. In this article, the author has addressed the issues and peculiarities of the stages of investigation of criminal proceedings in cases of state treason. Based on the fact that state treason has an extremely high degree of public danger, it is qualified by domestic criminal legislation as a particularly serious crime, with all the consequences arising from it, both in the past and now. The effectiveness of the investigation of criminal proceedings initiated under the elements of the crime of state treason in general, and state treason proceedings in particular, is significantly conditioned by the planned and organized implementation of the investigation process, one of the most important guarantees for ensuring which is the identification of issues at certain stages of the investigation. As with any type of crime, each stage of the investigation of state treason has its own characteristic features, in the context of which the issues of increasing the effectiveness of the investigation can be identified. Taking into consideration the structural analysis of the methodology for investigating cases of state treason, the author has found that the classification of investigative actions depending on their purpose can be considered more characteristic and accordingly has made the appropriate division of investigative actions. Then the author has referred to both the secret investigative actions defined by the RA Criminal Procedure Code carried out in cases of state treason, as well as the operational-investigative measures defined by the RA Law “On Operational-Investigative Activities”.

Generalizing, the author has come to the conclusion that during criminal proceedings initiated under the features of

the crime of state treason, attention must necessarily be paid to each of its components, taking into consideration modern challenges and the state's imperative duty to effectively combat them.

Аннотация. В данной статье автор коснулся проблем и особенностей этапов расследования в уголовном производстве по делам о государственной измене. Исходя из того, что государственная измена имеет чрезвычайно высокую степень общественной опасности, она, как в прошлом, так и сейчас, квалифицируется национальным уголовным законодательством как особо тяжкое преступление со всеми вытекающими из этого последствиями. Эффективность расследования уголовного производства, возбужденного по признакам состава преступления государственной измены в целом, по делам о государственной измене в частности, в значительной степени обусловлена плановым и организованным проведением расследования, одним из важнейших залогов обеспечения которого является определение проблем на определенных этапах расследования. Как и в случае с любым видом преступления, так и в случае с государственной изменой, каждый этап расследования имеет свои характерные особенности, в контексте которых могут быть выявлены проблемы повышения эффективности расследования. Принимая во внимание структурный анализ методики рассмотрения дел о государственной измене, автор пришел к выводу, что наиболее характерной можно считать классификацию следственных действий в зависимости от их целевого назначения, и в соответствии с этим провел соответствующее разделение следственных действий. Далее автор обратился как к следственным, тайным следственным действиям, предусмотренным Уголовно-процессуальным кодексом РА, осуществляемым по делам о государственной измене, так и к оперативно-розыскным мероприятиям, установленным Законом РА «Об оперативно-розыскной деятельности».

Подводя итог, автор пришел к выводу, что в ходе уголовных производств, возбуждаемых по признакам состава преступления государственной измены, необходимо уделять внимание каждому его компоненту, учитывая современные вызовы и императивное обязательство государства вести эффективную борьбу с ними.

Բանալի բառեր - պեղական դավաճանություն, քրեական վարույթ, նախաքննություն, կրիմինալիստիկա, տակտիկա, քննության սկզբնական փուլ, քննության հետագա փուլ, քննության խնդիրներ, կրիմինալիստիկական վարկածներ:

Keywords: high treason, criminal proceedings, preliminary investigation, forensics, tactics, initial stage of the investigation, subsequent stage of the investigation, investigation problems, forensic hypotheses.

Ключевые слова - государственная измена, уголовное производство, предварительное следствие, криминалистика, тактика, начальный этап расследования, последующий этап расследования, проблемы расследования, криминалистические версии.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ընդունվել է 05.05.2021 թ., ուժի մեջ է մտել 01.07.2022 թ., միասնական կայք՝ 2021.05.17-2021.05.30:
2. Ընդունվել է 30.06.2021., ուժի մեջ է մտել 01.07.2022 թ., 2021.07.26-2021.08.08:
3. Ենգիբարյան Վ. Գ., Հանցագործությունների քննության մեթոդիկա: Կրիմինալիստիկական մեթոդիկա: «Դասագիրք բուհերի համար», Երևան 2017, «Թասկ» ՍՊԸ, էջ 64:
4. ՀՀ քրեական դատավարություն, Հատուկ մաս, խմբագրությամբ Գ. Ս. Ղազինյանի, Երևան, «Տիգրան Մեծ», 2003, էջ 116:
5. Белкин Р. С., Курс советской криминалистики. Т. 3. М., 1979, էջ 259:
6. Колесниченко А. Х., Общие положения методики расследования отдельных видов преступления. Харьков, 1965, էջ 37:
7. Комиссаренко Е. С., Следственные действия в уголовном процессе России. Дисс. ... канд. юрид. наук. Саратов, 2005, էջ 100:

8. Криминалистика. М., 1959, էջեր 333-334:
9. Лузгин И. М., Методологические проблемы расследования. М., 1973, էջ 26:
10. Рагулин А. В., Хулиганство, уголовно-правовые аспекты: Учебное пособие, изд-во Восточного института экономически, гуманитарных наук, управления и право, Челябинск. 2005, էջ 245:

Բաղինյան Ս. - ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հայցորդ, էլիասցե՝ sbaghinyan777@mail.ru:

Ներկայացվել է խմբագրություն 20.12.2024 թ., տրվել է գրախոսության 20.12.2024 թ., երաշխավորվել է ՀՀ վաստակավոր իրավաբան, Երևանի պետական համալսարանի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Ենգիբարյանի կողմից, ընդունվել է տպագրության 20.01.2025 թ.:

ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ/FORENSIC EXAMINATION/СУДЕБНАЯ ЭКСПЕРТИЗА

<https://doi.org/10.59546/18290744-2024.10-12-82>

ԿԱՐԵՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի
Գիտական հետազոտությունների և տեխնիկական փորձարկումների
համակարգման բաժնի պետ, Տնտեսագիտական և հաշվապահական
փորձաքննությունների բաժնի փորձագետ*

KAREN MAMIKONYAN

*PhD in Economics, Associate Professor,
Head of the Scientific Research and Technical Testing Coordination
Department, Expert of the Department of Economic and Accounting Expertise
of the National Bureau of Expertises of the Republic of Armenia*

КАРЕН МАМИКОНЯН

*Кандидат экономических наук, доцент,
Начальник отдела координации научных исследований и технического
апробирования, эксперт отдела Экономических и бухгалтерских экспертиз
Национального бюро экспертиз Республики Армения*

**ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԻ ԱՐԺԵՔԻ ՈՐՈՇՄԱՆ
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ**

**QUESTIONS OF METHODOLOGY FOR DETERMINING TRADEMARK
VALUE WITHIN THE FRAMEWORK OF FINANCIAL AND ECONOMIC
EXPERTISE**

**ВОПРОСЫ МЕТОДОЛОГИИ ОПРЕДЕЛЕНИЯ СТОИМОСТИ
ТОВАРНОГО ЗНАКА В РАМКАХ ФИНАНСОВО-ЭКОНОМИЧЕСКИХ
ЭКСПЕРТИЗ**

Ներածություն

Ապրանքային նշանը՝ որպես ոչ նյութական ակտիվ, ինչպես հայտնի է, ցանկացած նշան է, որն անհատականացնում է տվյալ ձեռնարկության ապրանքը և օգնում դա տարբերել մրցակցի (ապրանքից) արտադրանքից: Ընկերությունը համբավ է ձեռք բերում որպես տվյալ

ապրանքային նշանով ապրանքներ արտադրող: Ապրանքային նշանն այն նիշն է, որն օգտագործվում է մեկ անձի ապրանքները և (կամ) ծառայություններն այլ անձի ապրանքներից և (կամ) ծառայություններից տարբերելու համար¹: Ապրանքային նշանի իրավատերը բացառիկ իրավունք ունի տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու ապրանքային նշանը, ինչպես նաև այլ անձանց թույլատրելու կամ արգելելու դրա օգտագործումը²:

Ինչպես նշում են հեղինակներ Օ. Պիրոգովը և Ս. Պավլովան (2021) «Ապրանքային նշանի արժեքն առավելապես հարաբերակցվում է ապրանքանիշի (բրենդի) արժեքի կամ կապիտալի հետ, քան որոշակի մակնշված ապրանքի կողմից գեներացված դրամական հոսքերի հետ: Ապրանքային նշանի արժեքի գնահատում անցկացնելիս ավելի համարժեք է համարվում դրա հետ կապված ապրանքանիշի (բրենդի) կյանքի (գործաճության) փուլի հաշվառումը»³:

Որոշ հեղինակներ (Ա.Դորոֆեև և ուրիշներ, 2015) պնդում են հետևյալ դրույթը. «Ապրանքային նշանների գնահատումը եկամտային մոտեցմամբ հնարավոր է այն դեպքում, երբ հնարավոր է հուսալիորեն կանխատեսել այն եկամուտները, որոնք կարող են ստացվել ապրանքային նշանների օգտագործումից, և եթե ապրանքային նշանները նախկինում չեն օգտագործվել, ապա այդպիսի ապրանքային նշանների համար հնարավոր եկամտի միակ ձևը դրա օգտագործման իրավունքի վաճառքից ստացված միանվագ եկամուտն է»⁴:

Բայցևայնպես, ինչպես վարվել այն իրավիճակում, երբ անհրաժեշտ է գնահատել երկարաժամկետ ժամանակահատվածում (4 և ավել տարիներ) սեփական արտադրանքի թողարկման նպատակով գործաճության մեջ գտնվող, սակայն և վերջինիս օգտագործման իրավունքը երբևէ չվաճառված այն ապրանքային նշանի արժեքը, որին որպես ոչ նյութական ակտիվ անհրաժեշտ է ներառել կազմակերպության հաշվեկշռային ակտիվների կազմում:

Ոչ նյութական ակտիվներին անդրադառնալով՝ հարկ է նշել, որ դրանց շարքին են դասվում տնտեսական գործունեության մեջ երկար ժամանակահատվածում օգտագործվող և եկամուտ բերող իրավունքները, որոնք բխում են՝

ա) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործությունների, համակարգչային ծրագրերի, տվյալների բազայի և հեղինակային ու այլ պայմանագրերից,

բ) հայտնագործություններից, արդյունաբերական նմուշներից, ապրանքային նշաններից, ֆիրմայի անվանման վկայագրերից և դրանց օգտագործման արտոնագրային պայմանագրերից,

գ) «նոու-հաու»-ի իրավունքից և այլն⁵:

Ոչ նյութական ակտիվների գնահատման շրջանակներում կարևոր է ընդգծել, որ ոչ նյութական ակտիվի արժեքն աճանցվում է վերջինիս հենց ոչ նյութական լինելու բնույթից⁶:

Ինչ վերաբերում է ոչ նյութական ակտիվների հաշվառման պարտադիր սկզբունքներին և առանձնահատկություններին, ապա հարկ է մեջբերել հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ (ՀՀՄՍ) 38-ում սահմանված վերջինիս առնչվող հետևյալ հիմնարար

¹ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված:

² ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդվածներ 1171-1172:

³ *Пирогов О. Е., Павлова С. В.*, Стоимости товарных знаков на основе учета стадий жизненного цикла бренда / Международный научный журнал №6 (81) 2021. DOI: 10.34286/1995-4638-2021-81-6-39-45.

⁴ *Дорофеев А. Ю., Филатов В. В., Медведев В. М., Фадеев А. С., Шестов А. В., Дадугин М. В.*, Методология оценки нематериальных активов / Интернет-журнал «НАУКОВЕДЕНИЕ» Том 7, №1 (2015) <http://naukovedenie.ru/PDF/95EVN115.pdf> (доступ свободный). Загл. с экрана. Яз. рус., англ. DOI: 10.15862/95EVN115.

⁵ *Մամիկոնյան Կ. Հ.*, Փորձագիտություն և ակտիվների գնահատում / Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան - 2023. - 223 էջ /հեղինակային հարատարակություն/, էջեր 124-125:

⁶ *Reilly R.F., Schweih R.P.*, Guide to Intangible Asset Valuation. 2nd Revised Edition. /New York: Wiley, 2016/, 784 p.

դրույթները.

«Ոչ նյութական ակտիվը պետք է ճանաչվի միմիայն այն դեպքում, երբ՝

ա) հավանական է, որ ակտիվին վերագրելի ակնկալվող ապագա տնտեսական օգուտները կհոսեն կազմակերպություն, և

բ) ակտիվի արժեքը կարող է արժանահավատորեն չափվել»⁷:

«Կազմակերպությունը պետք է գնահատի ակնկալվող ապագա տնտեսական օգուտների հավանականությունը՝ օգտագործելով խելամիտ և հիմնավորված ենթադրություններ, որոնք արտացոլում են դեկավարության՝ այն տնտեսական պայմանների ամբողջական կազմի լավագույն գնահատականը, որոնք առկա կլինեն ակտիվի օգտակար ծառայության ընթացքում»⁸:

«Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվը պետք է հաշվառվի իր սկզբնական արժեքով»: «Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվը պետք է հաշվառվի վերագնահատված գումարով...»: «Ոչ նյութական ակտիվի համար գործող շուկա չի կարող գոյություն ունենալ...., քանի որ այս ակտիվներից յուրաքանչյուրը եզակի է: Բացի այդ, թեև ոչ նյութական ակտիվները գնվում և վաճառվում են, գործարքի պայմանները համաձայնեցվում են առանձին գնորդների և վաճառողների միջև բանակցությունների միջոցով...»: «Վերագնահատումների հաճախականությունը կախված է վերագնահատման ենթարկվող ոչ նյութական ակտիվների իրական արժեքների փոփոխականությունից»: «Եթե վերագնահատվող ոչ նյութական ակտիվների դասում ընդգրկված ոչ նյութական ակտիվը չի կարող վերագնահատվել, քանի որ այդ ակտիվի համար գործող շուկա գոյություն չունի, ապա նշված ակտիվը պետք է հաշվառվի իր սկզբնական արժեքով...»⁹:

Ոչ նյութական ակտիվի ճանաչման և գնահատման վերոնշյալ սկզբունքները թույլ են տալիս հաշվի առնել վերջինիս սկզբնական, նաև հետագայում՝ վերագնահատման արժեքների որոշման նպատակով ճիշտ ընտրված մեթոդաբանության կարևորությունը: Ստորև հարկ է ներկայացնել որոշ մեթոդների և մոտեցումների կիրառության հիմունքներ, որոնց օգնությամբ հնարավոր է որոշել ոչ նյութական ակտիվի արժեքը, և մասնավորապես՝ դրանք կիրառել բարդ ֆինանսատնտեսագիտական փորձաքնությունների շրջանակներում:

Հիմնական հետազոտություն

Մտավոր սեփականության օբյեկտը գնահատվում է եկամտային մոտեցմամբ, երբ հնարավոր է հուսալիորեն կանխատեսել այն եկամուտները, որոնք կարող են ստացվել այդ օբյեկտի օգտագործումից: Իսկ եթե մտավոր սեփականության օբյեկտը նախկինում չի օգտագործվել, ապա հնարավոր եկամտի միակ ձևը՝ այդ օբյեկտի օգտագործման իրավունքի վաճառքից միանվագ եկամուտն է: Եկամտային մոտեցման հիմնական նշանակությունը կայանում է սեփականատիրոջ եկամուտների փաստացի տվյալների կանխատեսման կամ օգտագործման մեջ, որոնք ստացվում են գնահատման արդյունքներով իրավունքների օգտագործումից, դրանց կառուցվածքից (ծախսումներ, շահույթ) և որպես գնահատվող օբյեկտի ցանկալի արժեք ընդունվող շահույթի մասնաբաժնի գնահատումից:

Եկամտային մոտեցման շրջանակներում մտավոր սեփականության գնահատման ժամանակ կիրառվող հայտնի մեթոդներից սույն հետազոտությունն իրականացնելու նպատակով

⁷ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ (ՀՀՄՍ) 38. Ոչ նյութական ակտիվներ, պարագրաֆ 21:

⁸ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ (ՀՀՄՍ) 38. Ոչ նյութական ակտիվներ, պարագրաֆ 22:

⁹ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ (ՀՀՄՍ) 38. Ոչ նյութական ակտիվներ, պարագրաֆ 74-82:

ընտրվել է, մասնավորապես, ռոյալթիից ազատման (լիցենզիայի դիմաց վարձահատույցից ազատում) մեթոդը:

Հարկ է նշել, որ մտավոր սեփականության օբյեկտի արժեքը ռոյալթիից ազատման մեթոդի օգնությամբ հաշվարկված դրամական հոսքերի զեղչման մեթոդով որոշելու համար օգտագործվում է հետևյալ կախվածությունը.

$$C = \sum_{i=1}^N \frac{V_i C_i R}{(1+r)^i}, \quad (1)$$

որտեղ՝ C – ՄՍՕ արժեքն է,

V_i – i թվով տարում ՄՍՕ-ի օգտագործմամբ արտադրված արտադրանքի ծավալը,

C_i – i թվով տարում ՄՍՕ-ի օգտագործմամբ արտադրանքի միավորի վաճառքի գինը,

R – i թվով տարում ռոյալթիի չափը,

i – լիցենզիոն պայմանագրի կնքման ենթադրյալ ժակետը (ժամանակահատվածը, որի ընթացքում կպահպանվի շահույթի առավելությունը),

r – i թվով տարում դիսկոնտավորման գործակիցը (դրույքը)¹⁰:

Ռոյալթիից ազատման մեթոդի տնտեսական էությունը հիմնված է մտավոր սեփականության լիցենզիայի օգտագործումից ստացվող շահույթի բաշխման ենթադրության վրա՝ լիցենզիարի (սեփականատիրոջ) և լիցենզիատի (իրավունքը ստացողի) միջև արդար համամասնության համաձայնեցմամբ:

Ռոյալթիից ազատման մեթոդն օգտագործվում է ընդհանուր առմամբ շուկայում մտավոր սեփականության օբյեկտների արժեքը գնահատելու նպատակով, և դրա կիրառման պարագայում պահանջվում է, որ ընթացակարգերից մեկը հանդիսանա ռոյալթիի համապատասխան դրույքաչափի գնահատումը՝ օբյեկտների վերլուծության մեջ օգտագործման համար¹¹:

Ռոյալթիից ազատման մեթոդն օգտագործելիս գործում է ենթադրություն, որ արտոնագիրը (հավաստագիրը) տիրապետում է երրորդ կողմը, և, հետևաբար, իրական տիրապետողը պետք է վճարի ռոյալթիներ՝ օգտագործման իրավունքի համար: Սակայն արտոնագիրն իրականում այն տիրապետողի սեփականությունն է, և նրան պետք չէ վճարել ռոյալթիներ, այդ իսկ պատճառով մեթոդը կոչվում է «ռոյալթիից ազատում», այսինքն՝ ծախսերի խնայողություն¹²:

Այլ կերպ ասած, եթե գնահատման օբյեկտը պատկանում է իրական սեփականատիրոջը, որին պետք չէ վճարել ռոյալթիներ, ապա տեղի է ունենում ծախսերի կեղծ խնայողություն, այսինքն՝ «ազատում ռոյալթիից»:

Ինչպես հայտնի է, գոյություն ունեն դիսկոնտավորման դրույքի որոշման տարբեր մոդելներ, որոնցից առավել տարածվածներն են.

1. սեփական կապիտալի դրամական հոսքերի համար՝

- կապիտալի ակտիվների գնահատման մոդելը,

¹⁰ Мамиконян К. О., Особенности оценки рыночной стоимости объектов интеллектуальной собственности при проведении судебных экспертиз / Теория и практика судебной экспертизы. 2019. Том 14. № 2. С. 128–135. DOI: 10.30764/1819-2785-2019-14-2-128-135.

¹¹ Nielsen J.M. /Guidance for Applying the Relief from Royalty Method to Value Trademarks and Trade Names / Insights. 2018. P. 52–58/, էջ 3:

¹² Леонтьев Б. Б., Мамаджанов Х. А., Принципы и подходы к оценке интеллектуальной собственности и нематериальных активов. Учеб. пособие. М.: Ринфо, 2003. 270 с. 185:

- կումուլյատիվ կառուցման մոդելը,
- 2. ամբողջ ներդրումային կապիտալի դրամական հոսքերի համար՝
- կապիտալի միջին կշռված արժեքի (WACC) մոդելը¹³:

Դիսկոնտավորման դրույքը (r -ը ներդրումների ընդունելի նվազագույն եկամտաբերությունը) հաշվարկելիս ընկերության կապիտալի միջին կշռված WACC (Weighted Average Cost of Capital) արժեքը ցույց է տալիս այն եկամտի նորման, որը պետք է վճարել ներդրումային կապիտալի (սեփական և/կամ փոխառու) օգտագործման դիմաց՝ ներդրումների ապագա եկամտաբերությունը գնահատելու համար՝ հաշվի առնելով ներդրումային կապիտալի եկամտաբերության նախնական պայմանները: Կապիտալի միջին կշռված արժեքի (WACC) հաշվարկային հայտնի բանաձևը հետևյալն է¹⁴.

$$WACC = k_d \times (1 - T) \times \frac{D}{D + E} + k_e \times \frac{E}{D + E}, \quad (2)$$

որտեղ՝

E - Սեփական կապիտալի մեծություն,

D - Փոխառու միջոցների մեծություն,

T - Շահութահարկի դրույքաչափ (%),

k_d - Փոխառու միջոցների արժեք (%),

k_e - Սեփական կապիտալի շահութաբերությունը ROE (զուտ շահույթ/սեփ.կապ $\times 100$):

Պայմանականորեն ընդունենք, որ WACC մոդելի կիրառմամբ դիսկոնտավորման դրույքի հաշվարկման արդյունքում ներդրումների նվազագույն եկամտաբերությունը ստացվել է բացասական արժեք, ինչը, բնականաբար, անհնար է հետագա հաշվարկներում կիրառության նպատակով՝ պայմանավորված ընկերության սեփական և փոխառու կապիտալների հարաբերակցությամբ որոշվող ընդհանուր կապիտալի ոչ օպտիմալ կառուցվածքի, վճարունակության, ինչպես նաև շահութաբերության «ոչ համադրելի» ցուցանիշների հետ: Տեսականորեն, ոչ նյութական ակտիվների գնահատման նպատակով դիսկոնտավորման դրույքի WACC մոդելի կիրառմամբ որոշումն առավել արդյունավետ է ընկերության ընդհանուր կապիտալի՝ 75 % սեփականի և 25 % փոխառուի օպտիմալ կառուցվածքի դեպքում¹⁵:

Այսուհանդերձ, որոշակի առկա ռիսկային գործոնների ազդեցությունը ընկերության տնտեսական գործունեության վրա հաշվի առնելու նպատակով դիսկոնտավորման դրույքի դուրսբերման համար հիմք է ընդունվում *կումուլյատիվ կառուցման* մոդելը:

Կումուլյատիվ (կուտակային, միագումարային) կառուցման մոդելը դիսկոնտավորման (զեղչման) դրույքաչափի որոշման մեթոդներից է, որը նպատակահարմար է օգտագործել մտավոր սեփականության յուրաքանչյուր առանձին օբյեկտի արժեքը որոշելու համար, քանի որ այն թույլ է տալիս հաշվի առնել եզակի ՄՄՕ-ի առանձնահատկությունները՝ գնահատելով միայն այն ռիսկերը, որոնք իրականում նշանակալի են:

Կումուլյատիվ կառուցման մոդելը բաղկացած է ոչ ռիսկային տոկոսադրույքի և պայմանականորեն նորմավորված բաղադրիչների հաջորդական ավելացումից, որոնք այս

¹³ Оценка бизнеса., Под ред. А.Г. Грязновой, М.А. Федотовой. 2-е изд., перераб. и доп., М., Финансы и статистика, 2009.. 736 с. 161.

¹⁴ Мамиконян К. О., Подходы оценки рыночной стоимости компании методом дисконтирования будущих денежных потоков при проведении финансово-экономических экспертиз: / Проблемы и вопросы современной науки. «Тенденции развития науки и образования» Декабрь 2018 г. №1(1), Часть 4 Изд. DOI: 10.18411/pivsn-58.

¹⁵ Джеймс Р. Хнтчнер, Оценка стоимости нематериальных активов / Под научн. ред. В.М. Рутгайзера. М.: Маросейка, 2008. 144 с. (Серия «Финансовое оценивание. Области применения и модели»), էջ 57-58:

կամ այն կերպ արտացոլում են կազմակերպության գնահատվող մտավոր սեփականության օբյեկտին բնորոշ ռիսկերը: Քննարկվող մոդելը ներառում է հետևյալ բաղադրիչները. սկզբնական փուլում դիսկոնտավորման դրույքաչափը կումուլյատիվ կառուցման մոդելով հաշվարկելու համար ենթադրվում է հաշվի առնել ընտրանքային ռիսկի գործոններ, որոնց արժեքը պայմանականորեն վերցվում է 0-ից 5-ի սահմաններում տոկոսային արժեք¹⁶: Ի դեպ, կապիտալի ակտիվների գնահատման մոդելը (CAPM) և կումուլյատիվ կառուցման մոդելը հիմնված են այն իրողության վրա, որ ներդրողը պատրաստ է ռիսկի դիմել միայն այն դեպքում, եթե իրականության մեջ ոչ ռիսկային ներդրումների համեմատ իրական ռիսկի պարագայում լրացուցիչ օգուտ է խոստացվում: Դիսկոնտավորման գործակիցը (դրույքը) ներկայացնում է եկամտաբերության այն մակարդակը, որի դեպքում ներդրողը կհամաձայնի ինչ-որ ընկերությունում ներդրումներ կատարելու որոշում կայացնել¹⁷: Ըստ այդմ, **որքան բարձր է այս ընկերությունում ներդրումներ կատարելու հետ կապված ռիսկի մակարդակը, այնքան ներդրողն իրավունք ունի պահանջել ավելի բարձր եկամտաբերության նորմա՝ այլ հավասար պայմանների դեպքում:**

Այսպիսով, կումուլյատիվ կառուցման մոդելը հիմնված է եկամտաբերության ոչ ռիսկային տոկոսադրույքի (նորմայի) և ներդրումներ կատարելու համար ռիսկի հավելվածարների (պարզևի) միագումարման վրա: Մեթոդը լավագույնս կարող է հաշվի առնել ներդրումային բոլոր հնարավոր և ընտրանքային ռիսկերը, որոնք կապված են թե՛ արդյունաբերության, թե՛ տնտեսության ընդհանուր բնույթի գործոնների և թե՛ կազմակերպության յուրահատկությունների հետ:

Այս փուլում հաշվարկվում է ընկերության տնտեսական գործունեության արդյունքում տվյալ ապրանքային նշանի օգտագործմամբ արտադրանքի իրացումից ստացված հասույթի հավելվածի միջին թվաբանականը՝ նախորդող 4 տարիների կտրվածքով: Ապրանքային նշանի օգտագործմամբ արտադրանքի իրացումից հասույթի վերաբերյալ կանխատեսում կատարելու նպատակով համապատասխան հաշվարկային ցուցանիշների ստացումն ամփոփ կերպով ներկայացվում է ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 2

	Ապրանքային նշանի օգտագործմամբ արտադրանքի վերաբերյալ ցուցանիշները				Մեկ տարվա միջին թվաբանական	Հավելվածի միջին թվաբանական
	Ցուցանիշներ	Տարի 1	Տարի 2	Տարի 3		
1	Ընդհանուր իրացված արտադրանքը					
2	Ապրանքային նշանի օգտագործմամբ արտադրանքի մասնաբաժինը (%)					
3	Ապրանքային նշանի օգտագործմամբ իրացված արտադրանքի քանակի և միավորի վաճառքի գնի արտադրյալ կամ՝ իրացումից հասույթ (V,C)					
4	Ապրանքային նշանի օգտագործմամբ իրացված արտադրանքի ինքնարժեքը					
5	EBITD (Գործառնական շահույթ կամ զուտ եկամուտ) = Ընդամենը վաճառքից եկամուտ - Ծախս					

¹⁶ Бричка Е. И., Методы определения ставки дисконтирования в оценке стоимости интеллектуальной собственности венчурного предприятия / Финансовая аналитика: проблемы и решения, 28 (214) – 2014.

¹⁷ Чихирников А. М., Определение ставки дисконтирования методом кумулятивного построения / Азимут научных исследований: экономика и управление, 2015. № 3 (12).

6	Մարքեթինգային ծախսեր						
7	Ֆինանսական ծախսեր և Շահութահարկ						
8	Զուտ շահույթ = (EBITD - Ֆինանսական և մարքեթինգային ծախսերը - Շահութահարկ (համամասնորեն)						
9	Գործառնական մարժայի (Զուտ շահույթ / Ընդամենը վաճառքից եկամուտ x 100%), կամ՝ ռոյալթիի չափը (R)						

Հավելաճը՝ յուրաքանչյուր տարվա ցուցանիշի տարբերությունն է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից, այն ենթադրում է, թե յուրաքանչյուր հաջորդ տարի ապրանքային նշանի համբավը կամ վարկանիշը որքան հավելյալ շահույթ է գեներացրել այդ ապրանքանիշը կրող կոնկրետ ապրաքատեսակների համար: Նույն տրամաբանությամբ դուրս է բերվել իրացված արտադրանքի ինքնարժեքի հավելաճը՝ ըստ տարիների: Ստացված «Գործառնական շահույթի կամ զուտ եկամուտ» ցուցանիշից հանվել են մարքեթինգային և ֆինանսական ծախսերի (նաև շահութահարկի գծով էական ծախսի) միջին թվաբանական ցուցանիշները՝ արդյունքում ստանալով զուտ շահույթի «Հավելաճի միջին թվաբանականը» (տե՛ս աղյուսակ 1-ի 5-րդ տողի «Հավելաճի միջին թվաբանական» սյունակ):

Ստացված հավելաճի միջին թվաբանական «Զուտ շահույթ» ցուցանիշը հարաբերելով մեկ տարվա միջին թվաբանական «Իրացումից հասույթի» ցուցանիշին՝ տոկոսային առումով ստացվել է «Գործառնական մարժայի կամ ռոյալթիի չափը (աղյուսակ 1-ի 9-րդ տողի «Հավելաճի միջին թվաբանական» սյունակ):

Տեսականորեն, **հավելաճի միջին թվաբանականը՝ բացասական ցուցանիշ ընդունելու պարագայում կնախանջի, որ հաջորդ տարվա եկամուտների կանխատեսման առումով ապրանքային նշանի համբավը կամ վարկանիշը միջին մակարդակում 0-ական տնտեսական էֆեկտ է ապահովել** (այսինքն՝ վերջին տարում նվազագույնը կարող է կրկնվել նախնական (առաջին տարվա) իրացումից հասույթի ցուցանիշը, որի դեպքում հավելաճի միջին թվաբանականը կազմում է 0):

Այժմ ընդունենք, որ զուտ շահույթի գծով՝ հավելաճի միջին թվաբանական ցուցանիշի ստացման ռիսկի ցուցանիշը տարեկան միջին թվաբանականի նկատմամբ կազմում է Y%: **Այդուհանդերձ, հաջորդ փուլում կառուցվելու է ռիսկային հավելավճարի բաշխվածության հաշվարկավերլուծական համակարգ՝ առավելագույնը Y տոկոսային կետով, որը ցույց կդրա, թե այդ համակարգում քանի տոկոս կկազմի ռիսկի մակարդակը՝ զուտ շահույթի գծով հավելաճի միջին թվաբանական ցուցանիշն ապահովելու առումով:**

Հաշվի առնելով վերոգրյալը, անհրաժեշտ է **կատարել ռիսկային գործոնների սահմանում և դրանց նորմավորում՝ համապատասխան հաշվարկավերլուծական եղանակների միջոցով:** Հարկ է նշել, որ ռիսկային գործոնների ցանկում կարող են ներառվել են նաև տվյալ ընկերության կողմից սահմանված և իրենց իսկ կողմից նորմավորված ռիսկային գործոններ, որոնք ևս հաշվի են առնվում դիսկոնտավորման (զեղչման) դրույքի կումուլյատիվ կառուցման մոդելով որոշման ժամանակ: Մեխանիզմի գործողությունը ներկայացված է ստորև՝ աղյուսակի միջոցով:

Աղյուսակ 3

Դիսկոնտավորման դրույքի կումուլյատիվ կառուցման մոդելի հաշվարկ՝ եկամտաբերության ոչ ռիսկային նորմայի և առավելագույնը Y% ռիսկային հավելավճարի բաշխվածությամբ	
Եկամտաբերության ոչ ռիսկային նորմա (պետական պարտավորումների միջին եկամտաբերությունը կամ խոշոր բանկերի կողմից առաջարկվող երկարաժամկետ միջին եկամտաբերությունը)	Միջին տոկոսադրույք՝ ՀՀ գանձապետական պարտատոմսերի եկամտաբերություն և Ավանդների եկամտաբերություն՝ ՀՀ խոշորագույն բանկերի կողմից տրվող
Ռիսկային գործոնները (առավելագույն ընդհանուր հավելավճարների արժեքը Y տոկոսային կետ)	Ռիսկային հավելավճարը (պարզև) և ռիսկային գործոնների նկարագրությունը (փաստացի տոկոսադրույքի և ոչ ռիսկային տոկոսադրույքի (նորմայի) փարբերությունը կոչվում է ռիսկի պարզևապարում)
1. Ընկերության տարածաշրջանային ընդլայնումն ըստ դասակարգման (ՓՄՁ, խոշոր) (միջակայք տոկոս)	
2. Ֆինանսական կառուցվածքը (միջակայք տոկոս)	
3. Արդյունաբերական և տարածքային դիվերսիֆիկացիան (միջակայք տոկոս)	
4. Հաճախորդների դիվերսիֆիկացիան (միջակայք տոկոս)	
5. Կազմակերպության շահութաբերությունը և եկամտունեքի կանխատեսելիությունը (միջակայք տոկոս)	
6. Արտադրական և առևտրային ռիսկ (միջակայք տոկոս)	
7. Նյութական վնասների և կորուստների ռիսկ (միջակայք տոկոս)	
8. Պարտքերի (չվճարումների) հավաքագրելիության և վճարումների ժամկետների խախտումների ռիսկ (միջակայք տոկոս)	
9. Գնաճը (միջակայք տոկոս)	
10. Ֆինանսական կայունության ռիսկ (միջակայք տոկոս)	

Դիսկոնտավորման դրույքի կումուլյատիվ կառուցման մոդելով հաշվարկի աղյուսակում «Ֆինանսական կայունության ռիսկ» գործոնի հավելավճարը (պարզև) հաշվարկվել է հետևյալ կերպ.

Աղյուսակ 4

Ֆինանսական կայունության որոշման նպատակով ընտրված ցուցանիշների անվանումը	Ցուցանիշների սահմանային մակարդակը	2023թ.-ի համար ստացված գործակիցները	Բնութագրումը
<i>1</i>	<i>2</i>	<i>3</i>	<i>4</i>
1. Ֆինանսական անկախության (ինքնուրույնության, համակենտրոնացման) գործակից. Գ(1) = սեփական կապիտալ / ակտիվների (հաշվեկշռի) հանրագումար			Ցույց է տալիս, թե կազմակերպության ընդհանուր միջոցների որ մասն է ձևավորվել սեփական կապիտալի հաշվին: Գործակիցի ցածր արժեքը վկայում է այն մասին, որ կազմակերպությունն իր գործունեությունը հիմնականում ֆինանսավորում է երկարաժամկետ և կարճաժամկետ կրեդիտորական պարտքերի հաշվին:

<p>2. Կապիտալի լներեջը. Գ(2) = փոխառու կապիտալ / սեփական կապիտալ</p>			<p>Պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցությունը ցույց է տալիս, թե սեփական կապիտալի միավորի հաշվով որքան պարտավորություններ ունի կազմակերպությունը: Շատ ցածր արժեքի դեպքում պետք է զգուշանալ փոխառու կապիտալի ներգրավման հարցում, իսկ շատ բարձր արժեքի դեպքում՝ առկա է փոխառու կապիտալից (վարկատուներից) կախվածության չափազանց մեծ ռիսկ:</p>
<p>3. Ընդհանուր իրացվելիության գործակից. Գ(3) = ընթացիկ ակտիվներ / ընթացիկ պարտավորություններ</p>			<p>Ցույց է տալիս կազմակերպության ընթացիկ պարտավորությունների՝ ընթացիկ ակտիվներով ապահովվածության աստիճանը:</p>
<p>4. Ակտիվների շահութաբերության գործակից. Գ(4) = զուտ շահույթ / ընդհանուր ակտիվներ</p>			<p>Ցույց է տալիս միավոր ակտիվների հաշվով շահույթի մեծությունը:</p>
<p>5. Իրացման շահութաբերության գործակից. Գ(5) = զուտ շահույթ / իրացումից հասույթ</p>			<p>Ցույց է տալիս իրացումից հասույթի միավորի հաշվով ստացված շահույթի մեծությունը:</p>
<p>ԸՆԴԱՄԵՆԸ</p>			<p>Այն ֆինանսական գործակիցները, որոնք ունենում են սահմանային արժեքից բարձր կամ ցածր գործակիցներ, ստացված բալի փոխարեն հարկ է վերցնել տվյալ գործակցի սահմանային արժեքը:</p>

Դիսկոնտավորման դրույքի կումուլյատիվ կառուցման մոդելով հաշվարկի աղյուսակում «Ֆինանսական կայունության ռիսկ» գործոնի չափորոշիչները հետևյալն են.

Աղյուսակ 6

Ֆինանսական կայունության չափորոշիչները	Ստացված տոկոսադրույքի հաշվարկ	Ռիսկի գործոնը (բալեր)
Կազմակերպությունը համարվում է ֆինանսապես կայուն, երբ հավաքում է առավելագույն գումարային գնահատականի 80-99 տոկոսը:		1
Կազմակերպությունը համարվում է ֆինանսապես հարաբերական կայուն, երբ հավաքում է առավելագույն գումարային գնահատականի 60-79 տոկոսը:		2
Կազմակերպությունը համարվում է ֆինանսապես ահազանգող կայուն, երբ հավաքում է առավելագույն գումարային գնահատականի 40-59 տոկոսը:		3
Կազմակերպությունը համարվում է ֆինանսապես անկայուն, և առկա են անվճարունակության հատկանիշներ, երբ հավաքում է առավելագույն գումարային գնահատականի 20-39 տոկոսը:		4
Կազմակերպությունը համարվում է ֆինանսապես կրիտիկական անկայուն և անվճարունակ, երբ հավաքում է առավելագույն գումարային գնահատականի մինչև 20 տոկոսը:		5

Ինչ վերաբերում է դիսկոնտավորման դրույքին, ապա, ինչպես հայտնի է, վերջինիս հաշվարկվում է հետևյալ բանաձևի օգնությամբ.

$$r = r_f + \sum_{i=1}^n R_i, \quad (3)$$

որտեղ՝

- r - դիսկոնտավորման դրույքն է,
- r_f - ոչ ռիսկային դրույքը (եկամտաբերության նորման),
- n - ռիսկային գործոնների քանակը,
- R_i - ռիսկի գործոնների հավելավճարը:

Հաշվի առնելով ստացված դիսկոնտավորման դրույքը, ռոյալթիի չափը և հիմք ընդունելով կատարված վերլուծությունների արդյունքները՝ մտավոր սեփականության օբյեկտի (ապրանքային նշանի) արժեքը կարելի է հաշվարկել ներկայացված ռոյալթիից ազատման մեթոդի օգնությամբ՝ կանխատեսվող դրամական հոսքերի զեղչմամբ:

Եզրակացություն

Այսպիսով, ապրանքային նշանի արժեքը դուրս բերելու համար անհրաժեշտ է եղել՝ կանխատեսվող ժամանակաշրջանի համար «Ապրանքային նշանի օգտագործմամբ իրացված արտադրանքի քանակի և միավորի վաճառքի գնի արտադրյալ (ViC)» արժեքը, ինչը հավասար էր մեկ տարվա միջին թվաբանականին + հավելածի միջին թվաբանական (տե՛ս աղյուսակ 2-ի 3-րդ տող) բազմապատկել ստացված ռոյալթիի չափով և զեղչել՝ բերելով ներկա արժեքի (երբ $N=1, i=1$): Ստացված արժեքները տեղադրելով ապրանքային նշանի արժեքի որոշման վերը ներկայացված բանաձև 1-ում՝ **1 տարի կանխատեսվող ժամանակահատվածի համար ստացվում է ապրանքային նշանի արժեքը:**

Ապրանքային նշանի արժեքի որոշման նպատակով կառուցված հաշվարկավերլուծական համակարգում ռոյալթիի չափը կարելի է ստանալ գործառնական մարժայի արժեքից՝ «Զուտ շահույթ» ցուցանիշի նախորդ տարիների արժեքների հավելածի միջին թվաբանականը հարաբերելով «Իրացումից հասույթ» ցուցանիշի նախորդ տարիների արժեքների միջին թվաբանականին: Ինչ վերաբերում է դիսկոնտավորման դրույքին, ապա այն կարելի է որոշել կումուլյատիվ կառուցման մոդելի՝ ոչ ռիսկային նորմայի և նորմավորված ռիսկային գործոնների հավելավճարների միագումարով՝ ձևավորելով նախապես ընտրված առավելագույն տոկոսային կետով ռիսկային հավելավճարի բաշխվածության նոր հաշվարկավերլուծական համակարգ, որի նպատակն է՝ ցույց տալ, թե այդ համակարգում որքան կկազմի ռիսկի մակարդակը՝ զուտ շահույթի գծով «Հավելածի միջին թվաբանական» ցուցանիշն ապահովելու առումով:

Ամփոփագիր: Հոդվածը նվիրված է ընկերությանը պատկանող ապրանքային նշանի՝ որպես ոչ նյութական ակտիվի արժեքի որոշման ֆինանսատնտեսագիտական փորձաքննության մեթոդաբանության հարցերին: Հետազոտության նպատակն է գոյություն ունեցող մեթոդաբանության շրջանակներում, ընկերության իրացվելիության, զուտ շահույթի և հաշվեկշռային ցուցանիշները հիմք ընդունելով, առաջարկել մեթոդական նոր մոտեցում, որի միջոցով առավել ճշգրիտ կերպով կարող է իրականացվել ընկերությանը պատկանող ապրանքային նշանի արժեքային գնահատումը: Ապրանքային նշանի արժեքի որոշման նպատակով կառուցվող հաշվարկավերլուծական համակարգում ռոյալթիի չափը կարելի է ստանալ գործառնական մարժայի արժեքից՝ «Զուտ շահույթ» ցուցանիշի նախորդ տարիների արժեքների հավելածի միջին թվաբանականը հարաբերելով «Իրացումից հասույթ» ցուցանիշի նախորդ տարիների արժեքների միջին թվաբանականին: Իսկ դիսկոնտավորման դրույքը կարելի է որոշել կումուլյատիվ կառուցման մոդելի՝ ոչ ռիսկային նորմայի և ռիսկային գործոնների հավելավճարների հանրագու-

մարով դիսկոնտավորման դրույքի որոշման շրջանակներում՝ ձևավորելով նախապես ընտրված առավելագույն տոկոսային կետով դիսկային հավելավճարի բաշխվածության նոր հաշվարկավերլուծական համակարգ, որը ցույց կտա, թե այդ համակարգում որքան կկազմի դիսկի մակարդակը՝ զուտ շահույթի գծով «Հավելվածի միջին թվաբանական» ցուցանիշն ապահովելու առումով:

Annotation. The article is dedicated to the methodology of financial and economic expertise for determining the value of a company's trademark as an intangible asset. The aim of the research is to propose a new methodological approach within the existing framework, based on the company's liquidity, net profit, and balance sheet indicators, which will allow for a more accurate valuation of the company's trademark. In the calculation and analytical system developed for determining the trademark's value, the royalty rate can be derived from the operational margin by dividing the arithmetic average of the "Net Profit" growth indicator over previous years by the arithmetic average of the "Revenue" growth indicator over the same period. The discount rate can be determined using the cumulative model, which sums the risk-free rate and premiums for risk factors, creating a new calculation and analytical system for the distribution of the risk premium based on a pre-selected maximum percentage point. This system will indicate the risk level related to ensuring the "Arithmetic Average Growth" indicator for net profit.

Аннотация. Статья посвящена вопросам методологии финансово-экономической экспертизы для оценки стоимости товарного знака, принадлежащего компании, как нематериального актива. Цель исследования заключается в том, чтобы в рамках существующей методологии, опираясь на показатели ликвидности компании, чистой прибыли и балансовые показатели, предложить новый методический подход, который позволит более точно оценить стоимость товарного знака компании. В расчетно-аналитической системе, построенной для определения стоимости товарного знака, размер роялти можно получить из значения операционной маржи, разделив среднее арифметическое прироста показателя «Чистая прибыль» за предыдущие годы на среднее арифметическое прироста показателя «Выручка от реализации» за те же годы. Ставку дисконтирования можно определить в рамках кумулятивной модели построения, используя совокупность безрисковой нормы и премий за рискованные факторы, сформировав новую расчетно-аналитическую систему распределения премий за риск по заранее выбранному максимальному процентному пункту. Эта система покажет уровень риска, связанный с обеспечением показателя «Среднее арифметическое прироста» по чистой прибыли.

Բանալի բաներ - ապրանքային նշանի արժեք, որպիսիք ազատման մեթոդ, որպիսի չափ, կումուլյարիվ կառուցման մոդել, դիսկոնտավորման դրույք, հաշվարկավերլուծական համակարգ, ֆինանսարևութեսագիտական փորձարկումներ:

Keywords: trademark value, relief from royalty method, royalty rate, cumulative model, discount rate, calculation and analytical system, financial and economic expertise.

Ключевые слова: стоимость товарного знака, метод освобождения от роялти, размер роялти, кумулятивная модель построения, ставка дисконтирования, расчетно-аналитическая система, финансово-экономическая экспертиза.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենք:
2. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք:
3. Пирогов О. Е., Павлова С. В., Стоимости товарных знаков на основе учета стадий жизненного цикла бренда / Международный научный журнал №6 (81) 2021. DOI: 10.34286/1995-4638-2021-81-6-39-45.
4. Дорофеев А.Ю., Филатов В.В., Медведев В.М., Фадеев А.С., Шестов А.В., Дадугин М.В. Методология

оценки нематериальных активов / Интернет-журнал «НАУКОВЕДЕНИЕ» Том 7, №1 (2015) <http://naukovedenie.ru/PDF/95EVN115.pdf> (доступ свободный). Загл. с экрана. Яз. рус., англ. DOI: 10.15862/95EVN115.

5. Մամիկոնյան Կ. Հ., Փորձագիտություն և ակտիվների գնահատում / Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2023, 223 էջ:

6. Reilly R.F., Schweih R.P. Guide to Intangible Asset Valuation. 2nd Revised Edition. /New York: Wiley, 2016/.

7. Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ (ՀՀՄՍ) 38:

8. Мамиконян К.О. Особенности оценки рыночной стоимости объектов интеллектуальной собственности при проведении судебных экспертиз / Теория и практика судебной экспертизы. 2019. Том 14. № 2. С. 128–135. DOI: 10.30764/1819-2785-2019-14-2-128-135.

9. Nielsen J. M. / Guidance for Applying the Relief from Royalty Method to Value Trademarks and Trade Names / Insights. 2018. P. 52–58.

10. Леонтьев Б. Б., Мамаджанов Х. А. / Принципы и подходы к оценке интеллектуальной собственности и нематериальных активов. Учеб. пособие. М.: Ринфо, 2003. 270 с.

11. Оценка бизнеса/ Под ред. А. Г. Грязновой, М. А. Федотовой. 2-е изд., перераб. и доп. / М. Финансы и статистика, 2009. 736 с.

12. Мамиконян К. О., Подходы оценки рыночной стоимости компании методом дисконтирования будущих денежных потоков при проведении финансово-экономических экспертиз: / Проблемы и вопросы современной науки. «Тенденции развития науки и образования» Декабрь 2018 г. №1(1), Часть 4 Изд. DOI: /10.18411/pivsn-58.

13. Джеймс Р. Хнтчер, Оценка стоимости нематериальных активов / Под научн. ред. В.М. Рутгайзера. - М.: Маросейка, 2008. -144 с. -(Серия «Финансовое оценивание. Области применения и модели»).

14. Бричка Е. И., Методы определения ставки дисконтирования в оценке стоимости интеллектуальной собственности венчурного предприятия. / Финансовая аналитика: проблемы и решения, 28 (214) – 2014.

15. Чихирников А. М., Определение ставки дисконтирования методом кумулятивного построения / Азимут научных исследований: экономика и управление, 2015. № 3 (12).

Մամիկոնյան Կ. - Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի Գիտական հետազոտությունների և տեխնիկական փորձարկումների համակարգման բաժնի պետ, Տնտեսագիտական և հաշվապահական փորձաքննությունների բաժնի փորձագետ, էլիաստե՝ mamikonyankaren@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 09.10.2024 թ., տրվել է գրախոսության 09.10.2024 թ., երաշխավորվել է ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու Ա. Բաբոյանի կողմից, ընդունվել է տպագրության 20.01.2025 թ.:

ՎԴ/11184/05/17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ
(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

2024 թվականի հոկտեմբերի 30-ին

գրավոր ընթացակարգով քննելով Սուսաննա Նալբանդյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 28.11.2023 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի Ռուզաննա, Մերի և Աննա Գրիգորյանների ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, երրորդ անձինք՝ Սուսաննա և Թամարա Նալբանդյաններ՝ Երևանի քաղաքապետարանի 18.05.2016 թվականի թիվ 1792-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ռուզաննա, Մերի և Աննա Գրիգորյանները պահանջել են անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի 18.05.2016 թվականի թիվ 1792-Ա որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ս. Հովակիմյան) (այսուհետ՝ Դատարան) 17.06.2022 թվականի որոշմամբ վարչական գործի վարույթը կարճվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 28.11.2023 թվականի որոշմամբ Երևանի քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 17.06.2022 թվականի «Վարչական գործի վարույթը կարճելու մասին» որոշումը բեկանվել է, և գործն ուղարկվել է ՀՀ վարչական դատարան ամբողջ ծավալով նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սուսաննա Նալբանդյանը (ներկայացուցիչ՝ Յուրի Շիրինյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել վերաքննիչ բողոքի պատասխանի այն

փաստարկին, որ հայցվորները չէին կարող ունենալ իրավական ակնկալիքներ Երևան քաղաքի Սողոմոն Տարոնցու նրբանցքի համար 10 շենքի թիվ 13/1 բնակարանը ձեռք բերելու առնչությամբ, քանի որ նրանք Երևան քաղաքի ավագանու 23.12.2015 թվականի թիվ 451-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 4-րդ կետի 1-ին ենթակետով, ինչպես նաև «Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված պայմաններին չբավարարելու ուժով ի սկզբանե չէին կարող հանդիսանալ մասնավորեցման սուբյեկտ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ անշարժ գույքը ձեռք բերելու համար կարևոր պայմաններից մեկը, ըստ վերը նշված նորմերի և ծրագրի պայմանների, նշված հասցեում հաշվառված լինելը կամ մշտապես բնակվելն է, իսկ հայցվորներն այդ նույն հիմքով արդեն իսկ ձեռք էին բերել իրենց բնակարանը՝ ք. Երևան, Շենգավիթ, Ս. Տարոնցի նրբանցք 10 շենք, 13 հասցեում, հետևաբար՝ վերջիններս չէին կարող հաշվառված լինել կամ մշտապես բնակվել Երևանի քաղաքապետարանին սեփականության իրավունքով պատկանող բնակարանում, որը, դեռևս 18.07.1979 թվականի վճռի համաձայն, վարձակալական հիմունքներով հանձնվել էր բողոքաբերին, ում անհատույց մասնավորեցման իրավունքն էլ առաջացել էր նշված գույքի նկատմամբ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ գործի նոր քննության ընթացքում հայցվորները չեն ներկայացրել նոր դիրքորոշում, որով կհիմնավորվեր վերջիններիս շահագրգիռ անձ լինելու հանգամանքը, ինչն ինքնին կարող էր հանգեցնել գործի վարույթը կարճելուն:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն եզրահանգմանը, որ գործի նոր քննության ժամանակ Դատարանը պետք է պարզի սույն գործի ընդդատության հարցը, ապա սույն գործով միայն Երևանի քաղաքապետարանի 18.05.2016 թվականի թիվ 1792-Ա որոշումը վիճարկվելու և Երևանի քաղաքապետարանի ու Սուսաննա Նալբանդյանի միջև կնքված նվիրատվության պայմանագիրը չվիճարկելու պայմաններում՝ գործի վերահասցեագրման հարցի քննարկումն անհիմն է:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 28.11.2023 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 17.06.2022 թվականի «Վարչական գործի վարույթը կարճելու մասին» որոշմանը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևան քաղաքի Լենինյան շրջանի ժողդատարանի թիվ 2-851 գործով 18.07.1979 թվականի վճռով Սուսաննա Գրիգորյանի հայցը բավարարվել է, Սողոմոն Տարոնցի փողոցի նրբանցքի 10 շենքի թիվ 13 Ռուզաննա Գրիգորյանի անվամբ եղած վարձակալական հիմունքներով երկու սենյականոց մեկուսացված բնակարանից 14.0քմ բնակելի մակերես ունեցող առանձին մուտքով մեկ սենյակը վարձակալական հիմունքներով հատկացվել է Սուսաննա Գրիգորյանին, իսկ 17,5քմ բնակելի մակերես ունեցող առանձին մուտքով մեկ սենյակը հատկացվել է Ռուզաննա Գրիգորյանին, օժանդակ հարմարությունները կողմերին թողնվել է ընդհանուր օգտագործման (**հատոր 1-ին, գ.թ. 135**):

2) ՀՀ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2596078 վկայականի համաձայն՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 01-011-004-088 մատյանի 077 համարի տակ ք.Երևան, Շենգավիթ համայնք,

Ս.Տարոնցու նրբանցք, 10 շենք, 13 բնակարանի նկատմամբ 11.11.2008 թվականին գրանցվել է Աննա Վլադիմիրի Գրիգորյանի, Ռուզաննա Արտավազդի Գրիգորյանի, Մերի Վլադիմիրի Գրիգորյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը 17,4քմ մակերեսով բնակարանի նկատմամբ, միևնույն ժամանակ «Լրացուցիչ նշումներ, փոփոխություններ» բաժնում առկա է լրացուցիչ նշում, որ «Շենքի հատակագիծը» բաժնում առկա 18,7քմ կոմունալ և օժանդակ հարմարություններն ընդհանուր օգտագործման տարածք են, բացի այդ, «Շենքի հատակագիծը» բաժնում 14,2քմ հատվածը շտրիխապատված է (**հատոր 1-ին, գ.թ. 21-23**):

3) ՀՀ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 02032016-01-0112 վկայականի համաձայն՝ Երևան, Շենգավիթ, Ս. Տարոնցու նրբանցք 10 շենք, 13/1 բնակարանի նկատմամբ 02.03.2016 թվականին գրանցվել է Երևան համայնքի սեփականության իրավունքը՝ ՀՀ կառավարության 29.05.2009 թվականի թիվ 604-Ն որոշման հիման վրա (**հատոր 1-ին, գ.թ. 119-120**):

4) Երևանի քաղաքապետի 18.05.2016 թվականի «Երևանի Սողոմոն Տարոնցու նրբանցքի թիվ 10 շենքի թիվ 13/1՝ 14.25քմ ընդհանուր մակերեսով և 18.85քմ ընդհանուր համատեղ սեփականությունն անհատույց օտարելու» թիվ 1792-Ա որոշմամբ Երևան համայնքի սեփականություն համարվող, Երևանի Սողոմոն Տարոնցու նրբանցքի հ. 10 շենքի հ. 13/1՝ 14.25 քմ ընդհանուր մակերեսով և 18.85 քմ ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրվել է Սուսաննա, Մանվել և Թամարա Նալբանդյաններին (**հատոր 1-ին, գ.թ. 17**):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ «շահագրգիռ անձ» հասկացության բովանդակությանը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի համարեքստում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածը սահմանում է այն անձանց շրջանակը, ովքեր իրավունք ունեն դիմել ՀՀ վարչական դատարան: Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով վարչադատավարական կարգով դատական պաշտպանությունը երաշխավորվում է այն ֆիզիկական և իրավաբանական անձի համար, ով համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե՝
ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի,

օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Վերը նշված նորմերից բխում է, որ անձն իրավասու է վարչադատավարական կարգով դատական պաշտպանություն հայցել ընդդեմ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի այն վարչական ակտի, գործողության կամ անգործության, որով ենթադրաբար խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել իր իրավունքներն ու ազատությունները: Անձն իրավասու չէ վիճարկելու այն վարչական ակտի, գործողության կամ անգործության իրավաչափությունը, որն ինքնին չի շոշափում իր որևէ իրավունք կամ ազատություն: (տես, Հայկ Հարությունյանն ընդդեմ Երևան համայնքի թիվ ՎԴ/0012/05/22 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 10.02.2023 թվականի որոշումը):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատարան դիմելու անհրաժեշտ պայմանը հայցվորի՝ «շահագրգիռ անձ» հանդիսանալու հանգամանքն է:

ՀՀ սահմանադրական դատարանը 04.04.2008 թվականի թիվ ՍԴՈ-747 որոշմամբ ամրագրել է. «Համաձայն ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի՝ անձի դատական պաշտպանության իրավունքի իրացման անհրաժեշտություն ծագում է այն դեպքում, երբ նա խնդիր ունի վերականգնելու իր ենթադրյալ խախտված իրավունքները: Սահմանադրական այս դրույթի հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ յուրաքանչյուր դեպքում անձն իր՝ դատարան դիմելու իրավունքը կարող է իրացնել միայն այն դեպքում, երբ տվյալ գործի առնչությամբ ունի իրավական շահագրգռվածություն: Սահմանադրական այս դրույթին համահունչ (...) վիճարկվող 2-րդ հոդվածի 1-ին մասը դատարան դիմելու իրավունքը վերապահել է շահագրգիռ անձին, այն է՝ անձին, ում իրավունքները ենթադրաբար խախտվել են»:

ՀՀ սահմանադրական դատարանը միաժամանակ գտել է, որ «շահագրգիռ անձ» հասկացությունը գնահատման ենթակա հասկացություն է, և յուրաքանչյուր կոնկրետ գործով, ելնելով տվյալ գործի կոնկրետ հանգամանքներից, գործը քննող դատարանն է իրավասու գնահատելու այս հասկացությունը և պարզելու, թե արդյո՞ք տվյալ անձը գործի ելքում ունի իրավական շահագրգռվածություն:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ դատարան դիմելու իրավունքն անձի համար ապահովում է իրավական երաշխիքներ՝ իր իրավունքների խախտումների դեպքում ստանալ արդյունավետ իրավական պաշտպանություն: Այստեղից հետևում է այն կարևոր կանոնը, որի համաձայն՝ դատական պաշտպանություն անձն ստանում է վերջինիս՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքների և (կամ) ազատությունների խախտման դեպքում: Դատական պաշտպանությունը չի կարող լինել ինքնանպատակ, այն ունի հստակ առաքելություն, հստակ սուբյեկտներ ու հասցեատեր և կոչված է ապահովելու անձի խախտված իրավունքների արդյունավետ վերականգնումը: ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով նախատեսված է ընդհանուր կանոն, որ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ: Օրենսդիրը, նույնպես առաջնորդվելով այս ընդհանուր կանոնով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում ամրագրել է յուրաքանչյուրի՝ իր խախտված իրավունքների պաշտպանության համար վարչական դատարան դիմելու իրավունքը: Անձը կարող է դիմել դատական պաշտպանության, եթե ունի «իրական (ռեալ)»

իրավունքներ (տես, Կարինե Զլավյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԴ/6403/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածը սահմանում է ՀՀ վարչական դատարանի գործերի առարկայական ընդդատության ընդհանուր շրջանակը: Նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, ներառյալ հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը, վարչական մարմինների միջև այն վեճերը, որոնք ենթակա չեն լուծման վերադատության կարգով, հանրային իրավունքի բնագավառում գործող կամ գործելու նպատակ ունեցող միավորումների, ներառյալ՝ արհեստակցական միությունների գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ վեճերով գործերը:

Սույն դեպքում «շահագրգիռ անձ» հասկացության բովանդակությունը բացահայտելով Օրենսգրքի 10-րդ հոդվածի համատեքստում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցադիմում ներկայացրած անձի՝ կոնկրետ գործով շահագրգիռ անձ հանդիսանալու հանգամանքը գնահատման է ենթակա ոչ թե a priori, այլ ՀՀ վարչական դատարանին ընդդատյա վեճերի համատեքստում: Այսինքն՝ Օրենսգրքի 3-րդ հոդվածի իմաստով շահագրգիռ անձը ոչ թե ենթադրյալ խախտված իրավունքը կրող սուբյեկտն է ընդհանրապես, այլ այն անձն է, ում **ենթադրյալ խախտված իրավունքը պաշտպանության է ենթակա հենց վարչական արդարադատության շրջանակներում**: Հետևաբար, ՀՀ վարչական դատարանն ներկայացված կոնկրետ վեճով հայցվորի՝ շահագրգիռ անձ հանդիսանալու հանգամանքի հաստատումն ինքնին ենթադրում է խնդրո առարկա վեճի՝ ՀՀ վարչական դատարանին ընդդատյա լինելու հանգամանքի հաստատում և բացառում է տվյալ վեճի՝ ՀՀ վարչական դատարանին ընդդատության հարցը կասկածի տակ դնելու կամ հերքելու իրավական հնարավորությունը: Այլ կերպ, եթե դատարանը տվյալ կոնկրետ գործով ճանաչում է հայցվորի շահագրգիռ անձի կարգավիճակը՝ դրանով իսկ ընդունում է նաև, որ տվյալ վեճն ընդդատյա է ՀՀ վարչական դատարանին:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ դիմելով ՀՀ վարչական դատարան՝ Ռուզաննա, Մերի և Աննա Գրիգորյանները պահանջել են անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի 18.05.2016 թվականի թիվ 1792-Ա որոշումը: Նշված որոշմամբ Երևան համայնքի սեփականություն համարվող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 02.03.2016 թվականի թիվ 02032016-01-0112 վկայական) Երևանի Սողոմոն Տարոնցու նրբանցքի հ. 10 շենքի հ. 13/1՝ 14.25քմ ընդհանուր մակերեսով և 18.85քմ ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրվել է նույն բնակարանի բնակիչներ Սուսաննա, Մանվել, Թամարա Նալբանդյաններին՝ որպես համատեղ սեփականություն:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Իսանդանյան) 12.11.2019 թվականի վճռով հայցը բավարարվել է՝ հիմքում դնելով այն հանգամանքը, որ Երևանի քաղաքապետի 18.05.2016 թվականի թիվ 1792-Ա որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի

նյութերով չի հիմնավորվել Երևան քաղաքի Սողոմոն Տարոնցու նրբանցքի թիվ 10 շենքի 13/1 հասցեում գտնվող գույքը Սուսաննա և Թամարա Նալբանդյաններին նվիրելու համար օրենքով սահմանված անհրաժեշտ բոլոր նախապայմանների առկայությունը:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան, դատավորներ՝ Կ. Մաթևոսյան, Ա. Բաբայան) 17.02.2021 թվականի որոշմամբ ՀՀ վարչական դատարանի 12.11.2019 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է ամբողջ ծավալով նոր քննության: Բողոքարկվող դատական ակտի ուսումնասիրության արդյունքում՝ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը նշել է, որ ՀՀ վարչական դատարանի կողմից գնահատման առարկա չի դարձվել հայցվորների իրավական շահագրգռվածություն ունենալու՝ սույն գործի լուծման հետագա ընթացքն ապահովելու կարևոր երաշխիք հանդիսացող հանգամանքը: Արդյունքում, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը գտել է, որ հայցվորների շահագրգռվածության հարցի պարզումը Երևանի Սողոմոն Տարոնցու նրբանցքի հ. 10 շենքի հ. 13/1՝ 14.25քմ ընդհանուր մակերեսով և 18.85քմ ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող բնակարանի նկատմամբ ունի սույն գործով էական նշանակություն, և եզրահանգել, որ նշված հարցը պարզելուց հետո նոր միայն հնարավոր կլինի անդրադառնալ հայցադիմումով ներկայացված՝ վիճարկվող ակտի անվավերության հիմքում դրված հանգամանքների քննարկմանը:

Դատարանի 17.06.2022 թվականի որոշմամբ վարչական գործի վարույթը կարճվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով (հայցադիմումը ներկայացրել են դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձինք): Դատարանը, մասնավորապես, գտել է. «(...) վիճելի տարածքի նկատմամբ հայցվորները ի սկզբանե չեն ունեցել որևէ ենթադրյալ իրավունք (ըստ գործում առկա վկայականի)՝ բազմաբնակարան շենքում գտնվող վերջիններիս հատկացված բնակարանի հատվածի նկատմամբ, իրավունքների պետական գրանցումը կատարվել է 2008 թվականին, պատասխանողի նկատմամբ անշարժ գույքի մնացած մասով (ըստ գործում առկա վկայականի) իրավունքների պետական գրանցումը կատարվել է 2009 թվականին, վկայականներում առկա են նաև նշումներ՝ ընդհանուր համարեղ օգտագործվող տարածքի մասին, սույնով դատարանը փաստում է, որ կողմերը որևէ կերպ կաշկանդված չեն անձամբ որոշելու իրենց սեփականությունը հանդիսացող անշարժ գույքի հետագա ճակատագիրը, հետևաբար նաև հայցվորների կողմից վիճարկվող որոշմամբ որևէ կերպ չեն խախտվում հայցվորների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2-րդ գլխով, մարդու և քաղաքացու իրավունքներին և ազատություններին վերաբերող միջազգային իրավունքի նորմերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքներով ամրագրված որևէ իրավունք, ուստի հայցվորների մոտ բացակայում է Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում Երևանի քաղաքապետարանի 18.05.2016 թվականի թիվ 1791-Ա որոշումը վիճարկելու իրավունքը»:

Վերաքննիչ դատարանի բողոքարկվող՝ 28.11.2023 թվականի որոշմամբ Դատարանի 17.06.2022 թվականի «Վարչական գործի վարույթը կարճելու մասին» որոշումը բեկանվել է, և գործն ուղարկվել է ՀՀ վարչական դատարան ամբողջ ծավալով նոր քննության: Վերաքննիչ դատարանը անհիմն է համարել Դատարանի եզրահանգումն առ այն, որ գործով հայցադիմումը ներկայացվել է դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձանց կողմից: Այս առնչությամբ Վերաքննիչ դատարանը հիմք է ընդունել հետևյալ փաստական հանգամանքները. « (...) ի սկզբանե Սողոմոն Տարոնցի փողոցի նրբանցքի 10 շենքի թիվ 13 Ռուզաննա Գրիգորյանի անվամբ եղած վարձակալական հիմունքներով երկու սենյականոց մեկուսացված բնակարանից 14.0 քմ բնակելի մակերես ունեցող առանձին մուտքով մեկ սենյակը վարձակալական

հիմունքներով հատկացվել է Սուսաննա Գրիգորյանին, իսկ 17,5 քմ բնակելի մակերես ունեցող առանձին մուտքով մեկ սենյակը հատկացվել է Ռուզաննա Գրիգորյանին, ընդ որում՝ օժանդակ հարմարավետությունները կողմերին թողնվել է ընդհանուր օգտագործման:

Այնուհետև, ք. Երևան, Շենգավիթ համայնք, Ս. Տարոնցի նրբանցք, 10 շենք, 13 բնակարանի նկատմամբ 11.11.2008 թվականին գրանցվել է հայցվորներ Աննա Վլադիմիրի Գրիգորյանի, Ռուզաննա Արտավազդի Գրիգորյանի, Մերի Վլադիմիրի Գրիգորյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը: Ուշագրավ է, որ «Լրացուցիչ նշումներ, փոփոխություններ» բաժնում առկա է լրացուցիչ նշում, որ «Շենքի հատկագիծը» բաժնում առկա 18,7քմ կոմունալ և օժանդակ հարմարությունները ընդհանուր օգտագործման փարածք են: Այսինքն, նշյալ վկայականով հաստատվել է, որ 18,7քմ կոմունալ և օժանդակ հարմարություններն ընդհանուր օգտագործման փարածք են:

Ավելին, 02.03.2016 թվականին գրանցվել է Երևան համայնքի սեփականության իրավունքը Երևան, Շենգավիթ, Ս. Տարոնցի նրբանցք 10 շենք, 13/1 բնակարանի նկատմամբ, իսկ համապատասխան վկայականի «Լրացուցիչ նշումներ և փոփոխություններ» բաժնում նշվել է, որ 18.85քմ մակերեսն ընդհանուր համատեղ է Ս. Տարոնցի նրբանցք 10 շենք 13 բնակարանի հետ:

Ի վերջո, վիճարկվող որոշմամբ Երևան համայնքի սեփականություն համարվող Երևանի Սողոմոն Տարոնցու նրբանցքի թիվ 10 շենքի թիվ 13/1՝ 14.25քմ ընդհանուր մակերեսով և 18.85քմ ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրվել է Սուսաննա և Թամարա Նալբանդյաններին:

(...) սույն դեպքում խոսքը գնում է նվիրատվության օբյեկտ հանդիսացող նույն բնակարանի մասին, որն ունեցել է ընդհանուր օգտագործման փարածք: Ստացվում է, որ 18.05.2016 թվականի թիվ 1792-Ա որոշմամբ անհատույց հիմունքներով Սուսաննա և Թամարա Նալբանդյաններին է օտարվել 14.25քմ ընդհանուր մակերեսով և 18.85քմ ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող բնակարանն այն պարագայում, երբ նշյալ թիվ 13/1 բնակարանի մի մասը՝ 18,85քմ կոմունալ և օժանդակ հարմարությունները, հանդիսացել են ընդհանուր օգտագործման փարածք, որն օգտագործվում է մինչ օրս, մասնավորապես, սույն գործով հայցվորների կողմից, արվյալ 18,85քմ մակերեսը հանդիսանում է Երևան համայնքի ու հայցվորների ընդհանուր համատեղ սեփականությունը:

Ավելորդ չէ նշել, որ գործի նյութերում առկա 12.04.2019 թվականի «Արտյոմ» համատիրության նախագահի փոփոխության համաձայն՝ «Սողոմոն Տարոնցի նրբանցք 10 շենքի 13բն-ում և 13ա բնակարաններում բնակվել են 2015 թվականից առ այսօր՝ Ռուզաննա Արտավազդի Գրիգորյանը (ծնված՝ 12.01.1957 թվականին), Մերի Վլադիմիրի Գրիգորյանը (ծնված՝ 07.03.1985 թվականին) և Աննա Վլադիմիրի Գրիգորյանը (ծնված՝ 27.04.1987 թվականին), որը հաստատել են հարևանները իրենց ստորագրություններով, որը հաստատել և ստորագրել են նաև ու ներկայացրել են Ձեզ (...):»:

Ըստ հայցվորների՝ Երևանի քաղաքապետի կողմից որոշում կայացնելիս և գույքն օտարելիս հաշվի չի առնվել հայցվորների Երևանի Սողոմոն Տարոնցու նրբանցքի համար 10 շենքի թիվ 13/1 բնակարանի 18,85քմ մակերեսով փարածքի նկատմամբ ընդհանուր համատեղ սեփականությունը՝ վերջիններից չեն ստացվել համաձայնությունները (...): Ավելին, հայցվորները, հանդիսանալով ք. Երևան, Շենգավիթ համայնք, Ս. Տարոնցի նրբանցք, 10 շենք, 13 բնակարանի նկատմամբ համասեփականատեր և փաստացի օրինական օգտագործելով նաև 18,85քմ մակերեսով ընդհանուր փարածքը, կարող էին ակնկալիքներ ունենալ Երևանի քաղաքապետի կողմից օտարված գույքը ձեռք բերելու առնչությամբ»:

Վերաքննիչ դատարանը, գործն ուղարկելով նոր քննության, կարևորել է հետևյալ հարցերի պարզումը.

«- հատկապես իր իրավական նորմերն են կիրառելի սույն գործով վեճը լուծելու համար,
- ինչ շահերի պաշտպանությանն են ուղղված այդ իրավական նորմերը,
- արդյոք, իրավահարաբերության մասնակիցների միջև առկա է վերադասության- ենթակայության հարաբերություն, ծագած իրավահարաբերությունները կրու՞մ են հանրային, թե՛ մասնավոր բնույթ:

Արդյունքում, եթե պարզի, որ սույն գործով վեճը կրում է մասնավոր բնույթ, ըստ այդմ, այն ենթակա չէ ՀՀ վարչական դատարանի քննությանը, անհրաժեշտ կլինի վերահասցեագրել այն ըստ ենթակայության (ընդդատության)՝ դրանով իսկ ապահովելով անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքի արդյունավետ իրագործման հնարավորությունը»:

Ամփոփելով սույն գործի դատավարական նախապատմությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատարանի 12.11.2019 թվականի վճռով հայցը բավարարվել է, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 17.02.2021 թվականի որոշմամբ վճիռը բեկանվել և գործն ուղարկվել է նոր քննության՝ հայցվորների՝ սույն գործով հայցադիմում ներկայացնելու իրավական շահի առկայության հարցը պարզելու նպատակով:

Դատարանը, գործի քննությունն իրականացնելով վերաքննիչ ատյանի կողմից սահմանված ծավալի շրջանակներում և ըստ այդմ՝ գնահատելով հայցվորների իրավական շահի առկայության հարցը, 17.06.2022 թվականի որոշմամբ վարչական գործի վարույթը կարճել է՝ վերջիններիս դիտարկելով որպես հայցադիմում ներկայացնելու իրավունք ակնհայտորեն չունեցող անձինք: Վերաքննիչ դատարանը, բեկանելով Դատարանի վճիռը, վերաքննիչ բողոքի քննության արդյունքում եզրահանգել է, որ հայցվորներն օժտված են շահագրգիռ անձի կարգավիճակով: Միաժամանակ գործն ուղարկելով նոր քննության՝ Վերաքննիչ դատարանը կասկածի տակ է դրել գործի ՀՀ վարչական դատարանին ընդդատության հարցը և նոր քննության շրջանակներում կարևորել է այդ հարցի պարզումը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից սույն գործի՝ ՀՀ վարչական դատարանին ընդդատության հարցը կասկածի տակ դրվել չէր կարող, և այդ հարցի լուծումը չէր կարող թողնվել գործի նոր քննությանը՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի լիազորությունները: Այդ նորմի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը.

1) մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով անփոփոխ, իսկ այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը, սակայն վարչական դատարանի կայացրած՝ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ սխալ է պատճառաբանված, ապա պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը.

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վերաքննիչ բողոքը՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով վարչական դատարանի դատական ակտը՝ բեկանված մասով գործն ուղարկելով վարչական դատարան՝ նոր քննության, և սահմանելով նոր քննության ծավալը, իսկ չբեկանված մասով դատական ակտը թողնելով անփոփոխ.

3) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում և փոփոխում է վարչական դատարանի ակտը՝ կայացնելով նոր դատական ակտ, եթե վարչական դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե

դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից, իսկ բողոքարկված և չբեկանված մասով դատական ակտը թողնում է անփոփոխ (...):

Օրենսգրքի 144-րդ հոդվածը սահմանում է վերաքննիչ բողոքի սահմանները: Նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար: Նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ վերաքննիչ դատարանն ընդունում է նույն օրենսգրքով կամ վարչական դատարանի սահմանած ժամկետում դատավարության մասնակցի կողմից վարչական դատարան չներկայացված ապացույցները, բացառությամբ այն դեպքի, երբ համարում է, որ դրանք գործի լուծման համար էական նշանակություն չունեն: (...) Վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ վարչական դատարանում հաստատված փաստն ընդունվում է որպես հիմք, եթե բողոքում այդ փաստը չի վիճարկվում, կամ վերաքննիչ դատարանն անհրաժեշտ չի համարում կրկին հետազոտել այն:

Օրենսգրքի 146-րդ հոդվածը սահմանում է վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից կայացվող որոշման բովանդակությանը ներկայացվող պահանջները: Մասնավորապես, նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ որոշման պատճառաբանական մասը բովանդակում է՝

«1) (...) գ. այն փաստերը, որոնք հաստատել է վարչական դատարանը և վերաքննիչ բողոքում վիճարկվել են, և վերաքննիչ դատարանը հանգել է այն եզրակացության, որ տվյալ փաստի մասով վարչական դատարանը սխալ է թույլ տվել՝ պատճառաբանելով նման եզրակացությունը և հղում կատարելով նման եզրակացության հիմքում ընկած ապացույցներին: Նման դեպքերում վերաքննիչ դատարանը պետք է նշի, թե վարչական դատարանի հաստատած փաստի փոխարեն ինչ նոր փաստ է հաստատված համարում, կամ վարչական դատարանի հաստատած որ փաստը հաստատված չի համարվում՝ պատճառաբանելով նման եզրահանգումը և հղում կատարելով վարչական դատարանի հետազոտած համապատասխան ապացույցներին,

դ. այն փաստերը, որոնք չի հաստատել վարչական դատարանը, և այդ հանգամանքը վիճարկվել է վերաքննիչ բողոքում, և վերաքննիչ դատարանը վարչական դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա դրանք համարել է հաստատված՝ հղում կատարելով վերաքննիչ բողոք բերած անձի համապատասխան դիրքորոշմանը և առաջին ատյանի դատարանի հետազոտած այն ապացույցներին, որոնք ընկած են փաստի հաստատման հիմքում,

ե. այն փաստերը, որոնք հաստատել է վերաքննիչ դատարանը...»

3) սույն օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված լիազորությունը կիրառելու դեպքում՝ գործի նոր քննության ծավալը կամ նշում այն մասին, որ գործը պետք է քննվի ամբողջ ծավալով. (...)»:

Թեև օրենսդիրը, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանին վերապահելով գործը նոր քննության ուղարկելու լիազորություն, ուղղակիորեն չի սահմանել այս լիազորությունն իրացնելու հիմքերը, այնուհանդերձ, Օրենսգրքի վերը նշված նորմերն իրենց համակցության մեջ ուրվագծում են գործը նոր քննության ուղարկելու լիազորությունն իրացնելու հիմքերը: Մասնավորապես, վերը նշված նորմերի համադրված վերլուծությունից բխում է, որ գործը նոր քննության ուղարկելու հիմքում որպես առաջնային չափանիշ արդարադատության արդյունավետության շահն է, այդ թվում՝ ողջամիտ ժամկետում գործի քննությունը կազմակերպելու անհրաժեշտությունը:

Վերը նշված նորմերի համադրված վերլուծության արդյունքում և գործը նոր քննության ուղարկելու լիազորության իրացման հիմքում որպես ուղենիշ դիտարկելով արդարադատության արդյունավետության շահը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործը նոր քննության ուղարկելու լիազորության իրացումը հնարավոր և անհրաժեշտ է այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանի կողմից արձանագրված՝ առաջին ատյանի դատարանի թույլ տված դատավարական կամ նյութական իրավունքի տվյալ սխալը չի կարող վերացվել վերաքննիչ դատարանի կողմից: Նոր քննության անհրաժեշտությունն առկա է, երբ առաջին ատյանի թույլ տված դատական սխալը վերացնելու համար պահանջվում են այնպիսի դատավարական գործողություններ, որոնք կատարելու իրավասությամբ վերաքննիչ ատյանն օժտված չէ: Մասնավորապես, գործը նոր քննության ուղարկելու լիազորությունը կարող է իրացվել, եթե առաջին ատյանի դատարանի կողմից գործը քննվել է սխալ հայցատեսակի շրջանակներում կամ եթե առաջին ատյանի դատարանի կողմից ապացուցման առարկայի մեջ չի ներառվել որևէ փաստ, որը վերաքննիչ ատյանի գնահատմամբ էական նշանակություն ունի վեճի լուծման համար կամ եթե առկա է լրացուցիչ ապացույցների հավաքագրման (փորձաքննության նշանակում, զննում կատարել, վկաների հարցաքննություն) անհրաժեշտություն կամ եթե առաջին ատյանը, սահմանափակվելով հայցի մի հիմքով (որի առնչությամբ վերաքննիչ ատյանի գնահատմամբ՝ վճիռը հիմնավոր չէ), քննարկման առարկա չի դարձրել մյուս հիմքերը: Եթե վերաքննիչ դատարանը բավարար հիմքեր ունի Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված լիազորությունն իրացնելու համար, սակայն փոխարենը գործն ուղարկում է նոր քննության, նման իրավիճակում վտանգվում է արդարադատության արդյունավետության շահը, այդ թվում՝ գործը ողջամիտ ժամկետում քննելու պահանջի կատարումը:

Վերոհիշյալի համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե գործի վերաքննության փուլում ՀՀ վերաքննիչ դատարանը վեճի հանրային-իրավական բնույթը, ըստ այդմ նաև՝ ՀՀ վարչական դատարանին ընդդատության հարցը վիճելի է համարում, ապա դրան գնահատական տալու անհրաժեշտությունն ինքնին հիմք չէ գործը նոր քննության ուղարկելու կամ նոր քննության ծավալում նշված հարցը ներառելու համար: Նման իրավիճակում վեճի՝ ՀՀ վարչական դատարանին ընդդատության հարցը քննարկման և լուծման է ենթակա ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից: Նշվածը բխում է նաև Օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի այն կարգավորման տրամաբանությունից, որ դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե գործը քննվել է ընդդատության կանոնների խախտմամբ:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը չէր կարող նոր քննությանն առաջադրել ընդդատության հարցի լուծման խնդիր նախևառաջ այն պատճառով, որ եթե վերաքննիչ ատյանում կասկած է առաջանում վեճի՝ ՀՀ վարչական դատարանին ընդդատության հարցի վերաբերյալ, այդ հարցը քննարկման և լուծման է ենթակա ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից և չի կարող թողնվել առաջին ատյանի դատարանի լուծմանը նոր քննության շրջանակներում:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը, սույն գործով արտահայտված իրավական դիրքորոշումներին համապատասխան, արձանագրում է նաև, որ Վերաքննիչ դատարանի կողմից վեճի՝ ՀՀ վարչական դատարանին ընդդատության լինելու հանգամանքը չէր կարող կասկածի տակ դրվել այն պայմաններում, երբ նույն որոշմամբ Վերաքննիչ դատարանն ինքը հաստատված է համարել հայցվորների շահագրգիռ անձ հանդիսանալու հանգամանքը: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ Վերաքննիչ դատարանի կողմից հայցվորների՝ սույն

գործով շահագրգիռ անձի կարգավիճակը ճանաչելն ինքնին բացառում էր քննության առարկա վեճի՝ ՀՀ վարչական դատարանին ընդդատյա լինելու հարցը Վերաքննիչ դատարանի կողմից կասկածի տակ դրվելու հնարավորությունը:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից նոր քննությանը սույն վեճի՝ ՀՀ վարչական դատարանին ընդդատյաության հարցի լուծման խնդիր առաջադրելը, հիմնավոր և իրավաչափ չէ:

Ինչ վերաբերում է հայցվորների շահագրգիռ անձ լինելու հանգամանքին, ապա այդ առնչությամբ Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում Վերաքննիչ դատարանի եզրահանգումը՝ հիմք ընդունելով գործում առկա հետևյալ ապացույցները.

- Երևան քաղաքի Լենինյան շրջանի ժողդատարանի թիվ 2-851 գործով 18.07.1979 թվականի վճռով Սուսաննա Գրիգորյանի հայցը բավարարվել է, Սողոմոն Տարոնցու փողոցի նրբանցքի 10 շենքի թիվ 13 Ռուզաննա Գրիգորյանի անվամբ եղած վարձակալական հիմունքներով երկու սենյականոց մեկուսացված բնակարանից 14.0քմ բնակելի մակերես ունեցող առանձին մուտքով մեկ սենյակը վարձակալական հիմունքներով հատկացվել է Սուսաննա Գրիգորյանին, իսկ 17,5քմ բնակելի մակերես ունեցող առանձին մուտքով մեկ սենյակը հատկացվել է Ռուզաննա Գրիգորյանին, օժանդակ հարմարությունները կողմերին թողնվել է ընդհանուր օգտագործման **(հատոր 1-ին, գ.թ. 135):**

- ՀՀ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2596078 վկայականի համաձայն՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 01-011-004-088 մատյանի 077 համարի տակ ք.Երևան, Շենգավիթ համայնք, Ս.Տարոնցու նրբանցք, 10 շենք, 13 բնակարանի նկատմամբ 11.11.2008 թվականին գրանցվել է Աննա Վլադիմիրի Գրիգորյանի, Ռուզաննա Արտավազդի Գրիգորյանի, Մերի Վլադիմիրի Գրիգորյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը 17,4քմ մակերեսով բնակարանի նկատմամբ, միևնույն ժամանակ «Լրացուցիչ նշումներ, փոփոխություններ» բաժնում առկա է լրացուցիչ նշում, որ «Շենքի հատակագիծը» բաժնում առկա 18,7քմ կոմունալ և օժանդակ հարմարությունները ընդհանուր օգտագործման տարածք են, բացի այդ, «Շենքի հատակագիծը» բաժնում 14,2քմ հատվածը շտրիխապատված է **(հատոր 1-ին, գ.թ. 21-23):**

- ՀՀ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 02032016-01-0112 վկայականի համաձայն՝ Երևան, Շենգավիթ, Ս.Տարոնցու նրբանցք 10 շենք, 13/1 բնակարանի նկատմամբ 02.03.2016 թվականին գրանցվել է Երևան համայնքի սեփականության իրավունքը՝ ՀՀ կառավարության 29.05.2009 թվականի թիվ 604-Ն որոշման հիման վրա: «Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ» բաժնում առկա է լրացուցիչ նշում, որ 18.85քմ մակերեսը ընդհանուր համատեղ է Ս. Տարոնցի նրբանցք 10շ., 13 բնակարանի հետ **(հատոր 1-ին, գ.թ. 119-120):**

- Սուսաննա և Թամարա Նալբանդյանների լիազորված անձ Մարգարիտա Հովսեփյանի կողմից Ռուզաննա, Մերի և Աննա Գրիգորյաններին ուղղված գրության համաձայն՝ հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 18.05.2016 թվականի թիվ 1792-Ա և 16.03.2017 թվականի թիվ 809-Ա որոշումները և հաշվի առնելով, որ նշված որոշումներով անշարժ գույքից 18,85քմ մակերեսն ընդհանուր համատեղ է Ռուզաննա, Մերի և Աննա Գրիգորյաններին սեփականության իրավունքով պատկանող Երևանի Տարոնցու նրբանցքի 10 շենքի թիվ 13 բնակարանի հետ՝ խնդրել է նամակը ստանալու պահից 5 օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել Սուսաննա և Թամարա Նալբանդյանների իրավունքները գրանցելու համաձայնության մասին **(հատոր 1-ին, գ.թ. 19):**

Այսպիսով, արձանագրելով, որ սույն վեճի՝ ՀՀ վարչական դատարանին ընդդատյաության

հարցը այլևս քննարկման առարկա չի կարող դառնալ գործի նոր քննության փուլում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ենթակա է ողջ ծավալով ըստ էության նոր քննության՝ հաշվի առնելով, որ Դատարանի կողմից գործի վարույթը կարճվել է Օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով, և գործի փաստական հանգամանքների ըստ էության քննություն չի իրականացվել:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վերաքննիչ դատարանի 14.06.2019 թվականի բողոքարկվող որոշմամբ արդեն իսկ սույն գործն ուղարկվել է ՀՀ վարչական դատարան նոր քննության՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անփոփոխ թողնել Վերաքննիչ դատարանի որոշումը՝ սույն որոշման պատճառաբանություններով:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ գործն ուղարկվում է նոր քննության, գտնում է, որ տվյալ պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին պետք է անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 28.11.2023 թվականի որոշումը թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ԵԴ/0346/01/20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ՊԱԼԱՏԻ
ԿՈՌՈՒՊՏԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՔՆՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ
(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

2024 թվականի հոկտեմբերի 30-ին

քաղաք Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի մարտի 9-ի որոշման դեմ ամբաստանյալ Գրիշա Մուրադյանի պաշտպան Լ.Ասլանյանի, դիմողներ Սահակ Մինասյանի, Գևորգ Գասպարյանի, Արա Գրիգորյանի և նրանց ներկայացուցիչ Գ.Ավետիսյանի վճռաբեկ բողոքները¹,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2018 թվականի նոյեմբերի 7-ին 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՀՀ քրեական օրենսգրք) 308-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 61211918 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի մարտի 29-ի որոշմամբ թիվ 61211918 քրեական գործի նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 69102719 քրեական գործը, որը միացվել է թիվ 61211918 քրեական գործին:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի օգոստոսի 27-ի որոշումներով «Լայթէկո» և «Ֆենհալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները ճանաչվել են տուժողներ, Գ.Գասպարյանը ճանաչվել է «Լայթէկո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ, իսկ Ա.Գրիգորյանը՝ «Ֆենհալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի դեկտեմբերի 4-ի որոշմամբ Գրիշա Հայկազի

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքները քննվում են մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

Մուրադյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով:

2020 թվականի մարտի 6-ին տուժող «Լայթէկո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և վերջինիս ներկայացուցիչ Գ.Գասպարյանի, ինչպես նաև տուժող «Ֆենհալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և վերջինիս ներկայացուցիչ Ա.Գրիգորյանի դատավարական կարգավիճակները դադարեցվել են:

Նույն օրը Գ.Մուրադյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով:

2020 թվականի ապրիլի 2-ի որոշմամբ թիվ 61211918 քրեական գործից անջատվել է թիվ 69102719 քրեական գործը, և մեղադրական եզրակացությամբ ուղարկվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

2. Քրեական գործի դատական քննության ընթացքում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 3-ի արձանագրային որոշմամբ «Ֆենհալ» և «Լայթէկո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների ներկայացուցիչ Գ.Ավետիսյանի միջնորդությունը՝ վերոնշյալ ընկերություններին տվյալ քրեական գործով տուժողներ ճանաչելու վերաբերյալ, մերժվել է:

2.1. «Ֆենհալ» և «Լայթէկո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների ներկայացուցիչ Տ.Հակոբյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2021 թվականի մայիսի 18-ի որոշմամբ բողոքը բավարարել է մասնակիորեն, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 3-ի արձանագրային որոշումը բեկանել է և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2.2. Պաշտպան Լ.Ասլանյանի վճռաբեկ բողոքի քննության արդյունքում Վճռաբեկ դատարանը 2022 թվականի ապրիլի 4-ի որոշմամբ բողոքը բավարարել է և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի վերոնշյալ որոշումը բեկանել՝ օրինական ուժ տալով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 3-ի որոշմանը:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ 2022 թվականի հունվարի 13-ի արձանագրային որոշմամբ դիմողների ներկայացուցիչ Գ.Ավետիսյանի միջնորդությունը բավարարվել է և «Էրստեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Սահակ Մինասյանը ճանաչվել է տուժողի ներկայացուցիչ:

Նույն դատական նիստի ընթացքում ներկայացուցիչ Գ.Ավետիսյանի մեկ այլ միջնորդությունը՝ «Ֆենհալ» և «Լայթէկո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին քրեական գործով տուժողներ ճանաչելու վերաբերյալ, Առաջին ատյանի դատարանի արձանագրային որոշմամբ մերժվել է:

4. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2022 թվականի մարտի 9-ի որոշմամբ ամբաստանյալ Գ.Մուրադյանի պաշտպան Լ.Ասլանյանի, «Լայթէկո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Գ.Գասպարյանի, «Ֆենհալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Ա.Գրիգորյանի և նրանց ներկայացուցիչ Գ.Ավետիսյանի վերաքննիչ բողոքները բավարարվել են մասնակիորեն, Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի հունվարի 13-ի արձանագրային որոշումները բեկանվել են, և գործն ուղարկվել նույն դատարան՝ նոր քննության:

5. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ամբաստանյալ Գ.Մուրադյանի

պաշտպան Լ.Ասլանյանը, դիմողներ Ս.Մինասյանը, Գ.Գասպարյանը, Ա.Գրիգորյանը և նրանց ներկայացուցիչ Գ.Ավետիսյանը բերել են վճռաբեկ բողոքներ, որոնք Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի մայիսի 27-ի որոշմամբ ընդունել են վարույթ:

2022 թվականի հուլիսի 14-ին գործը բաշխվել (հանձնվել) է ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմին:

Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի հոկտեմբերի 4-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջները.

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

1. Ամբաստանյալ Գ.Մուրադյանի պաշտպան Լ.Ասլանյանի բողոքի փաստարկները.

6. Ամբաստանյալի պաշտպան Լ.Ասլանյանը գտել է, որ Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է և սխալ պատճառաբանված, ինչի արդյունքում խախտվել են ամբաստանյալ Գ.Մուրադյանի իրավունքներն ու օրինական շահերը, մասնավորապես՝ պաշտպանության իրավունքը: Բողոքաբերը փաստարկել է, որ Առաջին ատյանի դատարանն իրավացիորեն մերժել է միջնորդությունը՝ պատճառաբանելով, որ ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի փաստական նկարագրի մեջ նշված ընկերություններին վնաս պատճառելու վերաբերյալ ձևակերպում առկա չէ, հետևաբար նշված ընկերությունները չեն կարող տուժող ճանաչվել:

6.1. Բողոքի հեղինակը փաստարկել է նաև, որ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրք) 78-րդ և 93-րդ հոդվածներով սահմանված են քրեական գործով վարույթին որպես տուժողի ներկայացուցիչ մասնակցելն արգելող հիմքերը, որոնցից է գործին որպես վկա մասնակցելը, իսկ սույն քրեական գործով «էրստեղ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ Ս.Մինասյանը որպես վկա հարցաքննվել է թե՛ տուժողի ներկայացուցչի դատավարական կարգավիճակ ստանալուց առաջ, թե՛ հետո, ուստի առկա են Ս.Մինասյանի՝ որպես տուժողի ներկայացուցչի դատավարական կարգավիճակը դադարեցնելու հիմքերը:

6.2. Բողոք բերած անձը նշել է նաև, որ վերաքննիչ վերանայման գործիքակազմը բավարար էր Առաջին ատյանի դատարանի արձանագրային որոշման պատճառաբանվածությունը լրացնելու և վերջնական դատական ակտ կայացնելու համար՝ միաժամանակ նշելով, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտը բեկանելու անվերապահ հիմք մատնանշել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածով նախատեսված՝ պատճառաբանական մասի բացակայությունը, մինչդեռ Վերաքննիչ դատարանը ևս թույլ է տվել այդպիսի սխալ:

6.3. Վերոշարադրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի մարտի 9-ի որոշումը՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի հունվարի 13-ի արձանագրային որոշումը՝ «Ֆենհալ» և «Լայթէկո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին տուժող ճանաչելու միջնորդությունը մերժելու մասով, կամ ամբողջությամբ բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի հունվարի 13-ի ու Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի մարտի 9-ի որոշումները և կայացնել նոր դատական ակտ՝ մերժելով Ս.Մինասյանին տուժող

«Էրստեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ ճանաչելու միջնորդությունը, կամ բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

II. Դիմողների և նրանց ներկայացուցիչ Գ.Ավետիսյանի բողոքի փաստարկները.

7. Դիմողները և նրանց ներկայացուցիչ Գ.Ավետիսյանը գտել են, որ Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է, չպատճառաբանված, ինչի արդյունքում խախտվել են նաև ամբաստանյալ Գ.Մուրադյանի հանցավոր գործողությունների հետևանքով տուժած «Լայթէկո» և «Ֆենհալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, նրանց ներկայացուցիչների հիմնարար իրավունքներն ու օրենքով պաշտպանվող շահերը, ուստի այն ենթակա է բեկանման: Բողոքաբերները գտել են, որ որոշումը չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներից, իսկ ընկերությունները կրել և շարունակում են կրել նյութական և բարոյական վնասներ:

7.1. Բողոքի հեղինակները նշել են նաև, որ տուժող ճանաչելու պահանջի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումը ենթակա է բողոքարկման բացառապես դիմողի կողմից և այն դեպքում, երբ դատարանը հրաժարվում է դատավարության մասնակից չհանդիսացող անձին՝ դիմողին, դատավարության մասնակից, սույն դեպքում՝ տուժող ճանաչելուց, մինչդեռ տվյալ դեպքում բողոքը բերվել էր դատավարության այլ մասնակցի՝ ամբաստանյալի պաշտպանի կողմից, ով օրենքի ուժով նման բողոք բերելու իրավունք չունի: Ավելին՝ պաշտպան Լ.Ասլանյանը չի նշել՝ նախաքննության ընթացքում տուժողի ներկայացուցիչ հանդիսացած Ս.Մինասյանի իրավունքների ճանաչումը դատարանում ինչո՞վ է խախտել կամ խախտում ամբաստանյալ Գ.Մուրադյանի իրավունքները:

7.2. Միևնույն ժամանակ, բողոքաբերները փաստարկել են, որ պաշտպան Լ.Ասլանյանի վերաքննիչ բողոքը ժամկետանց է, ուստի այն պետք է թողնվեր առանց քննության:

7.3. Բողոք բերած անձինք փաստարկել են նաև, որ վերանայման գործիքակազմը Վերաքննիչ դատարանին հնարավորություն էր տալիս Առաջին ատյանի դատարանի որոշման կապակցությամբ լիարժեք և հիմնավոր հետևություններ անելու և նոր որոշում կայացնելու համար:

7.4. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակները խնդրել են բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի մարտի 9-ի թիվ որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ գործով տուժողներ ճանաչել «Լայթէկո» և «Ֆենհալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին, տուժողների ներկայացուցիչներ՝ համապատասխանաբար Գ.Գասպարյանին և Ա.Գրիգորյանին, կամ բողոքը բավարարել և գործը վերադարձնել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ բողոքների պատասխանները.

8. Ամբաստանյալի պաշտպան Լ.Ասլանյանը ներկայացրած վճռաբեկ բողոքի պատասխանում նշել է, որ Առաջին ատյանի դատարանի՝ քրեադատավարական օրենքի էական խախտմամբ կայացված որոշումը ենթակա է վերաքննության կարգով բողոքարկման, հակառակ դեպքում, այդպիսի որոշման բողոքարկման հնարավորություն չընձեռնելու միջոցով ամբաստանյալի դատարանի մատչելիության իրավունքը սահմանափակվելը խաթարում է այդ հիմնարար իրավունքի բուն էությունը:

Լ.Ասլանյանը նշել է նաև, որ իր կողմից պահպանվել է Վերաքննիչ դատարան բողոքարկման 10-օրյա ժամկետը:

Անդրադառնալով դիմողների և նրանց ներկայացուցիչ Գ.Ավետիսյանի՝ «Լայթէկո» և «Ֆենհալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին տուժող ճանաչելու պահանջին՝ պաշտպանը փաստարկել է, որ վերոնշյալ հարցի վերաբերյալ արդեն իսկ մեկ անգամ Վճռաբեկ դատարանն իր որոշմամբ արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանը, մերժելով նշված ընկերություններին տուժող ճանաչելու միջնորդությունը, օրինական և պատճառաբանված որոշում է կայացրել:

Վերոշարադրյալի հիման վրա պաշտպան Լ.Ասլանյանը խնդրել է մերժել դիմողների և նրանց ներկայացուցիչ Գ.Ավետիսյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը:

8.1. Դիմողների ներկայացուցիչ Գ.Ավետիսյանը ներկայացրած վճռաբեկ բողոքի պատասխանում նշել է, որ պաշտպան Լ.Ասլանյանն Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի հունվարի 13-ի որոշման դեմ վերաքննության կարգով բողոք ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտ չէ, բացի այդ, վերջինս այն ներկայացրել է ժամկետանց: Միևնույն ժամանակ նշել է, որ ամբաստանյալ Գ.Մուրադյանի պաշտպան Լ.Ասլանյանը նույն հիմքերով չի բողոքարկել Ս.Մինասյանին տուժողի ներկայացուցիչ ճանաչելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումը, հետևաբար վճռաբեկության կարգով բողոքարկելու իրավունք չուներ:

Վերոշարադրյալի հիման վրա դիմողների ներկայացուցիչ Գ.Ավետիսյանը խնդրել է ամբաստանյալ Գ.Մուրադյանի պաշտպան Լ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը թողնել առանց քննության կամ մերժել այն վարույթ ընդունելը:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

9. Նախաքննության մարմնի կողմից Գրիշա Մուրադյանին ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն արարքի համար, որ. «(...) [Ն]ա, 2002 թվականի նոյեմբերի 27-ից մինչև 2014 թվականի հունիսի 2-ն ընկած ժամանակահատվածում զբաղեցնելով ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության ջրօգտագործման թույլտվությունների բաժնի պետի պաշտոնը, հանդիսանալով մշտական հիմունքներով տնօրինչական-կառավարչական գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ, անձնական շահագրգռվածությամբ և խմբային շահերից ելնելով՝ իր պաշտոնական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ և չի կատարել ծառայողական պարտականությունները, որի հետևանքով «էրստեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավունքներին և օրինական շահերին պարճառվել է անզուգույթությամբ ծանր հետևանքներ առաջացրած էական վնաս (...)»²:

10. Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի հունվարի 13-ի արձանագրային որոշմամբ Գ.Ավետիսյանի միջնորդությունը բավարարվել է, և «էրստեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Ս.Մինասյանը ճանաչվել է որպես տուժողի ներկայացուցիչ այն հիմնավորմամբ, որ կազմակերպության տնօրենի կողմից մեկ կամ մի քանի անգամ հարցաքննված լինելը չի կարող սահմանափակել վերջինիս իրավունքը՝ ներկայացնելու նշված ընկերության շահերը որպես տուժողի ներկայացուցիչ, և նման որոշում կայացնելը չի կարող սահմանափակել պաշտպանության կողմի որևէ իրավունք կամ շահ:

10.1. Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի հունվարի 13-ի արձանագրային որոշմամբ դիմողների ներկայացուցչի միջնորդությունը՝ «Ֆենհալ» և «Լայթէկո» սահմանափակ

² Տե՛ս քրեական գործի հավելված, հատոր 2-րդ, թերթեր 43-46:

պատասխանատվությամբ ընկերություններին տվյալ քրեական գործով տուժող ճանաչելու մասին մերժվել է՝ ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի փաստական նկարագրի մեջ վերոնշյալ ընկերություններին վնաս պատճառելու վերաբերյալ ձևակերպում առկա չլինելու պատճառաբանությամբ³:

11. Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի մարտի 9-ի որոշման համաձայն՝ «(...) Սույն գործով Վերաքննիչ դատարանը նախ հարկ է համարում անդրադառնալ այն հարցին, թե տուժող ճանաչելու կամ տուժող ճանաչելը մերժելու մասին առաջին արյանի դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկման ենթակա է, թե ոչ:

(...)

Վերոհիշյալ իրավական նորմերի, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման լույսի ներքո անդրադառնալով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին արյանի դատարանի 2022թ. հունվարի 13-ի արձանագրային որոշմանը, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ այն ենթակա է վերաքննության կարգով բողոքարկման:

(...)

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին արյանի դատարանի վարույթում գտնվող՝ Գրիշա Հայկազի Մուրադյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով թիվ ԵԴ/0346/01/20 քրեական գործով՝ «Էրստեդ» ՍՊ ընկերության տնօրեն Սահակ Մինասյանը, «ԼայթԷկո» ՍՊ ընկերության տնօրեն Գևորգ Գասպարյանը, «Ֆենհալ» ՍՊ ընկերության տնօրեն Արա Գրիգորյանը և նրանց ներկայացուցիչ Գագիկ Ավետիսյանը միջնորդություն են ներկայացրել՝ «Էրստեդ» ՍՊ ընկերությանը, «ԼայթԷկո» ՍՊ ընկերությանը և «Ֆենհալ» ՍՊ ընկերությանը տուժողներ և քաղաքացիական հայցվորներ ճանաչելու, Սահակ Մինասյանին «Էրստեդ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ ճանաչելու, Գևորգ Գասպարյանին «ԼայթԷկո» ՍՊ ընկերության ներկայացուցիչ ճանաչելու, իսկ Արա Գրիգորյանին «Ֆենհալ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ ճանաչելու մասին:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին արյանի դատարանի 2022թ. հունվարի 13-ի դատական նիստում՝ արձանագրային որոշմամբ՝ Սահակ Մինասյանը ներգրավվել է որպես տուժող «Էրստեդ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ: Իսկ միջնորդությունը՝ «ԼայթԷկո» ՍՊ ընկերությանը և «Ֆենհալ» ՍՊ ընկերությանը տուժողներ և քաղաքացիական հայցվորներ ճանաչելու, Գևորգ Գասպարյանին «ԼայթԷկո» ՍՊ ընկերության ներկայացուցիչ ճանաչելու, և Արա Գրիգորյանին «Ֆենհալ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ ճանաչելու մասով, մերժվել է:

Վերաքննիչ դատարանում դատական վերանայման առարկան սահմանափակվում է միայն առաջին արյանի դատարանի դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության ստուգմամբ:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ սույն դեպքում առաջին արյանի դատարանի կողմից վերոհիշյալ միջնորդության վերաբերյալ արձանագրային որոշում կայացնելու հանգամանքն օբյեկտիվորեն սահմանափակում է Վերաքննիչ դատարանի հնարավորությունը՝ լիարժեք դատական ստուգման ենթարկելու բողոքարկվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վերաքննիչ դատարանն անհրաժեշտ չի համարում

³ Տես քրեական գործի հավելված, հատոր 2-րդ, 2022 թվականի հունվարի 13-ի դատական նիստի արձանագրությունը, թերթեր 55-59:

քննության առնել բողոքաբերների ներկայացված, վերաքննիչ բողոքներում շարադրված՝ իրավունքի նորմերի ենթադրյալ խախտումների վերաբերյալ փաստարկները: Դրանց հնարավոր կլինի անդրադառնալ միայն սույն որոշման մեջ արձանագրված դատավարական իրավունքի խախտումը վերացնելուց հետո:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ առաջին ատյանի դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջների խախտում, ինչն իր բնույթով էական է և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է դատական ակտը բեկանելու համար: (...)»⁴:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Առաջին ատյանի դատարանի՝ դատաքննության փուլում տուժողի ներկայացուցիչ ճանաչելու մասին որոշումը վերաքննության կարգով բողոքարկման ենթակա լինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376՝ հոդվածի համաձայն՝ «Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են՝

1) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ չմտնած դատական ակտերը.

2) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտնած դատական ակտերն այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը.

2.1) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտնած դատական ակտերը՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով.

3) առաջին ատյանի դատարանների՝ գործով վարույթը կասեցնելու որոշումները.

4) առաջին ատյանի դատարանների՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու, սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ խուզարկության, ազդարկման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման, կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ունեցող աշխատողի լիազորությունների կասեցման վերաբերյալ որոշման իրավաչափությունը հաստատելու մասին որոշումները.

4.1) առաջին ատյանի դատարանի՝ համագործակցության վարույթով դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելը մերժելու և գործի քննությունն ընդհանուր կարգով շարունակելու մասին որոշումը.

4.2) առաջին ատյանի դատարանի՝ հեռակա կարգով դատական քննություն իրականացնելը մերժելու մասին որոշումը.

5) առաջին ատյանի դատարանի՝ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքների կապակցությամբ

⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 143-158:

կայացված որոշումները.

6) հանձնման մասին դատարանի որոշումները.

7) սույն օրենսգրքի 49 գլխով նախատեսված հարցերի կապակցությամբ դատարանի կայացրած որոշումները.

8) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ այլ դատական ակտեր»:

14. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ինչպես մեջբերված, այնպես էլ որևէ այլ հոդվածով դատական քննության փուլում կայացված՝ տուժողի ներկայացուցիչ ճանաչելու միջնորդությունը բավարարելու մասին որոշումների վերաքննության կարգով բողոքարկման հնարավորություն նախատեսված չէ:

Կիրառելով մեկնաբանման *expression unius* կանոնը, որի համաձայն՝ սպառնիչ ցանկում որևէ տարր չներառելը պետք է մեկնաբանել դրա բացառման իմաստով, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ դատական քննության ընթացքում տուժողի ներկայացուցիչ ճանաչելու միջնորդությունը բավարարելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումն ինքնին վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը չի նախատեսում, այսինքն՝ այդ որոշումը վերաքննիչ բողոքարկման ենթակա չէ:

14.1. Ընդ որում, հարկ է նկատել, որ վերոնշյալ դիրքորոշումը բխում է նաև 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումներից: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի 352-րդ հոդվածը, սահմանելով դատական վերանայման կառուցակարգերը և դրանցում ընդգրկված բողոքարկման ենթակա դատական ակտերի շրջանակը, դատական քննության փուլում տուժողի ներկայացուցիչ ճանաչելու վերաբերյալ կայացված որոշման բողոքարկման հնարավորություն չի նախատեսում՝ այդպիսով պահպանելով վերոնշյալ որոշումների վերաքննիչ բողոքարկման առարկա չհանդիսանալու մոտեցումը:

14.2. Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Վճռաբեկ դատարանի՝ *Մարեպա Անյունյանի* գործով⁵ արտահայտված իրավական դիրքորոշումները սույն դեպքում կիրառելի չեն, քանի որ դրանք վերաբերում են տուժող (տուժողի իրավահաջորդ) ճանաչելը մերժելու մասին որոշման բողոքարկման հնարավորությանը:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ՝

- Առաջին ատյանի դատարանը դատական քննության ընթացքում 2022 թվականի հունվարի 13-ի արձանագրային որոշմամբ դիմողների ներկայացուցիչ Գ.Ավետիսյանի միջնորդությունը բավարարել է և «էրստեղ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Սահակ Մինասյանին ճանաչել է տուժողի ներկայացուցիչ⁶,

- Վերաքննիչ դատարանը, 2022 թվականի մարտի 9-ին քննության առնելով նաև վերը նշված որոշման դեմ ամբաստանյալ Գ.Մուրադյանի պաշտպան Լ.Ասլանյանի վերաքննիչ բողոքը, բեկանել է ստորադաս դատարանի որոշումը և գործն ուղարկել նոր քննության⁷:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-14.2-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, անտեսելով, որ տուժողի ներկայացուցիչ ճանաչելու միջնորդությունը բավարարելու մասին դատական քննության փուլում կայացված՝ Առաջին ատյանի դատարանի որոշումը

⁵ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Մարեպա Անյունյանի* գործով 2019 թվականի նոյեմբերի 7-ի թիվ ԵՇԴ/0010/01/17 որոշումը:

⁶ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

⁷ Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը չի նախատեսում, ամբաստանյալ Գ.Մուրադյանի պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա դատական ստուգման է ենթարկել Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի հունվարի 13-ի արձանագրային որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը:

17. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից «Էրստեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Ս.Մինասյանին տուժողի ներկայացուցիչ ճանաչելու միջնորդությունը դատական քննության փուլում բավարարելու մասին Առաջին ատյանի դատարանի արձանագրային որոշման դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը վերաքննության կարգով քննության առնելն իրավաչափ չէ:

18. Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը բողոքաբեր Լ.Ասլանյանի՝ սույն որոշման 6.1-րդ կետում նշված փաստարկներին անդրադառնալն առարկայազուրկ է համարում:

18.1. Ինչ վերաբերում է վերաքննիչ բողոքն օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ ներկայացված լինելու վերաբերյալ դիմողների և նրանց ներկայացուցիչ Գ.Ավետիսյանի՝ սույն որոշման 7.2-րդ կետում նշված փաստարկին, ապա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այն անհիմն է: Մասնավորապես, սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի հունվարի 13-ի արձանագրային որոշման դեմ վերաքննիչ բողոքը պաշտպան Լ.Ասլանյանը ներկայացրել է 2022 թվականի հունվարի 24-ին⁸ (հունվարի 23-ը եղել է ոչ աշխատանքային օր)՝ բողոքարկման տասնօրյա ժամկետի պահպանմամբ:

19. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք Առաջին ատյանի դատարանի արձանագրային որոշումները բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը:

20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գործի քննությունը դադարանում կատարվում է միայն ամբաստանյալի նկատմամբ և միայն այն մեղադրանքի սահմաններում, որով նրան մեղադրանք է առաջադրվել»:

Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում մշտապես ընդգծել է, որ. «(...) [Ը]նդհանուր կանոնի համաձայն՝ գործի դատական քննությունը սահմանափակված է մեղադրանքի այն ծավալով, որն առաջադրվել է ամբաստանյալին (...): Հիշյալ կանոնից բացառություն են մեղադրողի կողմից մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու դեպքերը, որոնց կառուցակարգը նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածով: Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ բացակայում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածով նախատեսված բացառության կանոնը, պետք է գործի ընդհանուր կանոնը, որից ցանկացած շեղում կհանգեցնի ամբաստանյալի արդար դատաքննության իրավունքի, հետևաբար՝ օրինականության սկզբունքի խախտման (...)»⁹:

20.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 313-րդ հոդվածի համաձայն՝ «1. Այն բոլոր հարցերի առթիվ, որոնք լուծվում են դատարանի կողմից դատական քննության ժամանակ, դատարանը որոշումներ է կայացնում:

2. Գործը լրացուցիչ քննության ուղարկելու, կարճելու կամ կասեցնելու, խափանման միջոցը

⁸ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 124:

⁹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Էդուարդ Նազդալյանի* գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0108/01/14 որոշման 19-րդ կետը:

փոխելու կամ վերացնելու, բացարկների, փորձաքննություն նշանակելու մասին որոշումները դատարանը կայացնում է խորհրդակցական սենյակում և դրանք պետք է շարադրված լինեն առանձին փաստաթղթերի ձևով՝ ստորագրված դատարանի ամբողջ կազմի կողմից:

3. Մյուս բոլոր որոշումները դատարանի հայեցողությամբ կարող են կայացվել կամ վերոհիշյալ կարգով, կամ տեղում դատավորների խորհրդակցելուց հետո՝ որոշումը մրցնելով դատական նիստի արձանագրության մեջ:

4. Դատական քննության ժամանակ դատարանի կայացրած որոշումները հրապարակվում են»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 2. Դատարանի դատավճիռն օրինական է, եթե այն կայացվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, սույն օրենսգրքի և այն օրենքների պահանջների պահպանմամբ, որոնց նորմերը կիրառվում են տվյալ քրեական գործը լուծելիս:

(...)

4. Դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները»:

Նույն օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Վերաքննիչ դատարանը դատական ակտը կայացնում է սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կանոններով (...)»:

21. Դատական ակտի պատճառաբանվածության չափանիշի առնչությամբ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում մշտապես ընդգծել է, որ դատական ակտերի պատճառաբանման պահանջը ոչ միայն արդարացիության կարևոր բաղադրատարր է, այլև անձի արդար դատաքննության իրավունքի արդյունավետ իրացման կարևոր երաշխիք, ինչը դատավարության մասնակիցներին պաշտպանում է կամայականություններից:

Դատական ակտի պատճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու, թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավանորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս, և միևնույն ժամանակ հնարավորություն է ստեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար: Քրեական դատավարության ցանկացած փուլում դատարանի կողմից չհիմնավորված, չպատճառաբանված (կամ ոչ պատշաճ պատճառաբանված) որոշումների կայացումն անընդունելի է¹⁰:

21.1. Վճռաբեկ դատարանը *Էրիկ Մարգարյանի* գործով արձանագրել է, որ դատական ակտի պատճառաբանվածության չափանիշը վերաբերելի է նաև վերաքննիչ դատարանի կողմից կայացվող դատական ակտերին: Հետևաբար, յուրաքանչյուր դեպքում դատական ակտ կայացնելիս վերաքննիչ դատարանը պարտավոր է պատճառաբանել, թե ինչու է եկել այս կամ այն հետևության, և որ իրավանորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս¹¹:

Դատական ակտին ներկայացվող պահանջների առնչությամբ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում մշտապես ընդգծել է, որ դատարանի պատճառաբանությունները

¹⁰ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Ֆրունզիկ Գալստյանի* գործով 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09, *Գևորգ Խնուսյանի* գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԷԴ/0030/01/12, *Արսեն Մակարյանի* գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0016/11/15, *Արամայիս Հակոբյանի* գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0224/01/14, *Մարտուն Հակոբյանի* գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԱՐԴ1/0005/11/16, *Արարատ Մարգարյանի* գործով 2019 թվականի հունիսի 12-ի թիվ ԵԱԴԴ/0005/01/17 որոշումները:

¹¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Էրիկ Մարգարյանի* գործով 2014 թվականի մարտի 28-ի թիվ ՍԴ3/0045/01/13 որոշման 13-րդ կետը:

ոչ միայն պետք է կառուցվեն տրամաբանորեն կապված և գործի փաստական հանգամանքներից բխող հստակ, որոշակի և համոզիչ հետևությունների վրա, այլև դատական ակտի կառուցվածքային տարբեր մասերում արված դատողությունները պետք է համապատասխանեն միմյանց, ունենան ներքին միասնություն և տրամաբանական կապ: Դատական ակտում պետք է բացառվեն ներքին հակասությունները, իրարամերժ դատողությունները, քանի որ հակառակ դեպքում այդպիսի դատական ակտի տրամաբանությունը կխարխլվի, իսկ քրեական դատավարության խնդիրները չեն իրագործվի¹²:

22. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Գ.Մուրադյանին ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն արարքի համար, որ նա, 2002 թվականի նոյեմբերի 27-ից մինչև 2014 թվականի հունիսի 2-ն ընկած ժամանակահատվածում զբաղեցնելով ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության ջրօգտագործման թույլտվությունների բաժնի պետի պաշտոնը, հանդիսանալով մշտական հիմունքներով տնօրինչական-կառավարչական գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ, անձնական շահագրգռվածությամբ և խմբային շահերից ելնելով՝ իր պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ և չի կատարել ծառայողական պարտականությունները, որի հետևանքով «Էրստեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավունքներին և օրինական շահերին պատճառվել է անզուգուրությամբ ծանր հետևանքներ առաջացրած էական վնաս¹³:

Քրեական գործի դատական քննության ընթացքում դիմողների ներկայացուցիչ Գ.Ավետիսյանը միջնորդություն է ներկայացրել «Ֆենհալ» և «Լայթէկո» ՍՊ ընկերություններին գործով տուժող ճանաչելու վերաբերյալ, որն Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի հունվարի 13-ի արձանագրային որոշմամբ մերժվել է այն պատճառաբանությամբ, որ ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի փաստական նկարագրի մեջ ենթադրյալ հանցանքի կատարմամբ նշված կազմակերպություններին վնաս պատճառելու մասին ձևակերպում առկա չէ¹⁴:

Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի որոշումը և գործն ուղարկելով նույն դատարան նոր քննության, արձանագրել է, որ սույն դեպքում Առաջին ատյանի դատարանի կողմից վերոհիշյալ միջնորդության վերաբերյալ արձանագրային որոշում կայացնելու հանգամանքն օբյեկտիվորեն սահմանափակում է Վերաքննիչ դատարանի հնարավորությունը՝ լիարժեք դատական ստուգման ենթարկելու բողոքարկվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը¹⁵:

23. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով 20-21.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը նախևառաջ փաստում է, որ Գ.Մուրադյանին առաջադրված մեղադրանքի փաստական նկարագրի¹⁶ պայմաններում հիմնավոր է Առաջին ատյանի դատարանի այն հետևությունը, որ Գ.Մուրադյանի մեղադրանքի փաստական նկարագրի մեջ «Ֆենհալ» և «Լայթէկո» սահմանափակ պատասխանատվությամբ

¹² Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Գեղամ Ղազարյանի գործով 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱՐԴ/0121/01/11, Աննա Հարությունյանի գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵՇԴ/0110/01/11, Արթուր Մաղդյանի գործով 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԿԴ/0303/01/15 որոշումները:

¹³ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

¹⁴ Տե՛ս սույն որոշման 10.1-րդ կետը:

¹⁵ Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

¹⁶ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

ընկերություններին վնաս պատճառելու դրվագների վերաբերյալ ձևակերպում առկա չէ, հետևաբար նշված ընկերությունները գործի դատական քննության փուլում չէին կարող քրեական գործով տուժողներ ճանաչվել, քանի դեռ ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածով նախատեսված կարգով չէր փոփոխվել և չէր լրացվել¹⁷:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 313-րդ հոդվածի վերլուծության հիման վրա փաստում է, որ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված է դատական քննության ժամանակ լուծվող հարցերի կապակցությամբ դատարանի կողմից որոշումների կայացման երկու կարգ. կամ դատարանը որոշում է կայացնում առանձին փաստաթղթի ձևով՝ խորհրդակցական սենյակում, կամ որոշումը կայացնում է դատական նիստի ընթացքում՝ այն ներառելով դատական նիստի արձանագրության մեջ: Ընդ որում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 313-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրը սպառնիչ ամրագրել է այն որոշումների ցանկը, որոնք կարող են կայացվել միայն խորհրդակցական սենյակում՝ շարադրված առանձին փաստաթղթի ձևով՝ մյուս բոլոր որոշումները խորհրդակցական սենյակում կամ տեղում՝ դատական նիստի ընթացքում կայացնելու կարգի ընտրությունը թողնելով դատարանի հայեցողությանը: Սույն գործի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը կայացրել է տուժող ճանաչելու միջնորդությունը մերժելու մասին որոշում, որը ներառված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 313-րդ հոդվածի 2-րդ մասում: Այսինքն՝ նշված միջնորդության վերաբերյալ արձանագրային որոշում կայացնելով և այն դատական նիստի ընթացքում պատճառաբանելով՝ Առաջին ատյանի դատարանն օգտվել է օրենսդրորեն իրեն վերապահված հայեցողությունից և որևէ խախտում թույլ չի տվել: Հետևաբար, նման պայմաններում սահմանափակված չի եղել Վերաքննիչ դատարանի հնարավորությունը՝ լիարժեք դատական ստուգման ենթարկելու բողոքարկվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ անկախ Առաջին ատյանի դատարանի կողմից որոշումն առանձին փաստաթղթի ձևով կայացված չլինելու հանգամանքից:

24. Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանի արձանագրային որոշումը բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավոր չէ:

25. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել քրեադատավարական օրենքի պահանջների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, հիմք են ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու համար: Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Էրստեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Ս.Մինասյանին տուժողի ներկայացուցիչ ճանաչելու միջնորդությունը բավարարելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումն այնքանով, որքանով վերաքննիչ բողոքարկման ենթակա չէր, իսկ «Ֆենհալ» և «Լայթէկո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների ներկայացուցչի միջնորդությունը մերժելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումը՝ նշված ընկերություններին որպես տուժող չճանաչելու մասին, օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, Առաջին ատյանի դատարանը թույլ չի տվել գործի

¹⁷ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Գրիշա Մուրադյանի գործով 2022 թվականի ապրիլի 4-ի թիվ ԵԴ/0346/01/20 որոշումը:

ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, ուստի անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի հունվարի 13-ի արձանագրային որոշումներին՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

26. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361.1, 403-406-րդ, 415.1, 418.1, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքները բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Գրիշա Հայկազի Մուրադյանի գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի մարտի 9-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ «Էրստեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Սահակ Մինասյանին տուժողի ներկայացուցիչ ճանաչելու մասին միջնորդությունը բավարարելու և «Ֆենհալ» և «Լայթէկո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին տուժող ճանաչելու միջնորդությունը մերժելու մասին 2022 թվականի հունվարի 13-ի արձանագրային որոշումներին՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ԵԴ/0008/09/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ
(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

28 նոյեմբերի 2024 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի ապրիլի 20-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Աֆանդյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2019 թվականի ապրիլի 1-ին, ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնում, 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ քրեական օրենսգրք) 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 9-րդ կետերով, 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 17184419 քրեական գործը:

2020 թվականի հոկտեմբերի 19-ին ՀՀ քննչական կոմիտեի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում քննվող թիվ 17184419 քրեական գործից ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 9-րդ կետերի, 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի և 258-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով քննված գործն անջատվել է, որին շնորհվել է 11116420 հերթական համարը:

2. 2022 թվականի փետրվարի 16-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի հատկապես կարևոր գործերով քննիչ Գ.Հովհաննիսյանը միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) թիվ 11116420 քրեական գործով մեկ ամիս ժամանակով՝ 2022 թվականի փետրվարի 21-ից մինչև 2022 թվականի մարտի 21-ը ներառյալ ժամանակահատվածում, Ռուդոլֆ Սամվելի Մելոյանի, Սարգիս Գարրիի Հարությունյանի, Արթուր Մամիկոնի Գրիգորյանի և Արման Ռոլանդի Վարդանյանի բջջային հեռախոսահամարներով տարվող խոսակցությունների լսում և ձայնագրառում կատարելու թույլտվություն ստանալու համար:

Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի փետրվարի 16-ի որոշմամբ նախաքննության

մարմնի վերոնշյալ միջնորդությունը մերժվել է:

3. Առաջին ատյանի դատարանի հիշյալ որոշման դեմ դատախազը ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2022 թվականի ապրիլի 20-ի որոշմամբ մերժվել է, իսկ Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի փետրվարի 16-ի որոշումը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Աֆանդյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 2-ի որոշմամբ ընդունվել է վարույթ՝ և սահմանվել է դատական վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

5. Բողոքաբերի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանի կայացրած որոշումն օրինական և հիմնավորված չէ, այն ենթակա է բեկանման, քանի որ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որն ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: Մասնավորապես, ըստ բողոքաբերի, Վերաքննիչ դատարանը, ըստ էության, անդրադարձել է նախաքննության որոշակի ժամանակահատվածում կոնկրետ քննչական գործողության կատարման անհրաժեշտությանն ու նպատակահարմարությանը՝ դրանով դուրս գալով մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ նախնական դատական վերահսկողության սահմաններից: Բացի այդ, բողոք բերած անձի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանը ոչ իրավաչափորեն սահմանափակել է քրեական դատավարության օրենսգրքով սահմանված խնդիրների իրագործման՝ քրեական հետապնդման մարմնի պարտականության կատարումը, խոչընդոտել գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը:

5.1. Բողոքի հեղինակը փաստել է, որ սույն գործով վարույթն իրականացնող մարմինը, բավարար հիմքեր ունենալով ենթադրելու, որ միջնորդության մեջ նշված անձանց հեռախոսային խոսակցություններում կարող են գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ պարունակվել, միջնորդություն է ներկայացրել դատարան հեռախոսային խոսակցությունների գաղտնիության սահմանափակման թույլտվություն ստանալու վերաբերյալ: Ընդ որում, միջնորդության մեջ նշվել և դրան կից ներկայացվել են քրեադատավարական օրենսգրքով պահանջվող բոլոր տեղեկությունները:

5.2. Միևնույն ժամանակ, բողոքաբերը նշել է, որ դատարան են ներկայացվել նաև փաստական տվյալներ առ այն, որ Սարգիս Հարությունյանին և Արթուր Գրիգորյանին սույն գործով մեղադրանքներ են առաջադրվել 2022 թվականի փետրվարի 1-ին և 2022 թվականի փետրվարի 15-ին, որով պայմանավորված անհրաժեշտ է նաև վերջինների մասնակցությամբ կատարել համապատասխան քննչական և այլ դատավարական գործողություններ: Այդ հանգամանքը ևս հաշվի առնելով՝ վարույթն իրականացնող մարմինը բավարար հիմքեր է ունեցել ենթադրելու, որ միջնորդության մեջ նշված անձանց հեռախոսային խոսակցություններում կարող են գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ պարունակվել:

5.3. Բողոք բերած անձը գտել է, որ ստորադաս դատարանները, քրեական հետապնդման

¹ Համաձայն ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

մարմնից ակնկալելով լրացուցիչ փաստական տվյալների տրամադրում դեպքից տևական ժամանակ անց կոնկրետ անձանց հեռախոսային խոսակցություններում գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ պարունակելու վերաբերյալ, չեն պատճառաբանել, թե բացի օրենքով պարտադիր համարվող և վարույթն իրականացնող մարմնի կողմից դատարան ներկայացված փաստական տվյալներից, հատկապես ինչպիսի այլ փաստական տվյալներով կարելի էր ենթադրել, որ միջնորդության մեջ նշված անձանց հեռախոսային խոսակցություններում կարող են գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ պարունակվել:

6. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի ապրիլի 20-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ բավարարելով նախաքննության մարմնի միջնորդությունը՝ Ռուդոլֆ Սամվելի Մելոյանի, Սարգիս Գարրիի Հարությունյանի, Արթուր Մամիկոնի Գրիգորյանի և Արման Ռուլանդի Վարդանյանի բջջային հեռախոսահամարներով տարվող խոսակցությունները մեկ ամիս ժամանակով լսելու և ձայնագրառելու թույլտվություն ստանալու վերաբերյալ:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. «Հեռախոսային խոսակցությունները լսելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին» նախաքննության մարմնի որոշման համաձայն՝ «(...) 2019 թվականի սեպտեմբերի 6-ին Արման Ռուլանդի Վարդանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 9-րդ կետերով, 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 258-րդ հոդվածի 4-րդ մասով այն բանի համար, որ նա, խմբի կազմում, նախնական համաձայնությամբ գործով չպարզված անձանց հետ՝ 2019 թվականի մարտի 31-ին՝ ժամը 01:20-ի սահմաններում, Երևան քաղաքի Ավան, Ծարավ Աղբյուր փողոցի 55/5-րդ շենքի բակում, դիտարկությամբ, կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով, որպես զենք գործադրվող առարկա հանդիսացող մահակներով ծեծի են ենթարկել նախապես նշված հասցե հրավիրված Գագիկ Ռեմիկի Խանոյանին՝ վերջինիս առողջությանը պայտճառել կյանքին սպառնացող ծանր մարմնական վնասվածքներ, որից հետո Գագիկ Խանոյանի կյանքի և առողջության նկատմամբ վրանգավոր բռնություն գործադրելով, վերջինիս իր կամքին հակառակ նստեցնելով «Օպել մակնիշի» ավտոմոբիլը՝ բացահայտ առևանգել են նրան և տեղափոխել Էրեբունի վարչական շրջան:

2022 թվականի փետրվարի 1-ին Սարգիս Գարրիի Հարությունյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով այն բանի համար, որ նա, խմբի կազմում, նախնական համաձայնությամբ Արման Վարդանյանի, Արթուր Գրիգորյանի և գործով չպարզված անձանց հետ, Գագիկ Խանոյանի կյանքի և առողջության նկատմամբ վրանգավոր բռնություն գործադրելով, վերջինիս կամքին հակառակ նստեցնելով «Օպել մակնիշի» ավտոմոբիլը՝ բացահայտ առևանգել են նրան և տեղափոխել Էրեբունի վարչական շրջան:

2022 թվականի փետրվարի 1-ին Արթուր Մամիկոնի Գրիգորյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով այն բանի համար, որ նա, խմբի կազմում, նախնական համաձայնությամբ Արման Վարդանյանի, Սարգիս Հարությունյանի և գործով չպարզված անձանց հետ, Գագիկ Խանոյանի կյանքի և առողջության նկատմամբ վրանգավոր բռնություն

գործադրելով, վերջինիս կամքին հակառակ նստեցնելով «Օպել մակնիշի» ավտոմոբիլը՝ բացահայտ առևանգել են նրան և տեղափոխել Էրեբունի վարչական շրջան:

(...)

Տուժող Գագիկ Խանոյանը ցուցմունք է տվել այն մասին, որ չգիտի, թե ովքեր են իրեն ծեծի ենթարկել:

Վկա Ռուդոլֆ Մելոյանը հայտարարել է, որ չունի բջջային հեռախոսահամար, (...) քանի որ ցուցմունքը իր վերաբերյալ է, վերաբերելու է ուրիշ քրեական գործի, որով տուժող է, հարցաքննվել է և քրեական գործը գտնվում է դատաքննության փուլում, ուստի տվյալ իրավիճակում ողջամիտ է, որ իրավունք ունի նմանատիպ հանգամանքների համադրության պայմաններում օգտվել իրավունքից և ցուցմունք չտալ:

Դեռևս վկայի կարգավիճակով Սարգիս Գարրիի Հարությունյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 31.03.2019 թվականին՝ ժամը 23:00-ի սահմաններում, ընկերոջ՝ Արթուրի հետ իրեն պատկանող Օպել մակնիշի ավտոմեքենայով և ընկերոջ Օպել մակնիշի ավտոմեքենայով գնացել են Արարատյան Մասիվում գտնվող Արմենիա Դե Լյուքս հյուրանոցային համալիրի մոտ և որպես տաքսի սպասել են հաճախորդի: 00:00-ից 02:00-ն ընկած ժամանակահատվածում իրենց են մոտեցել երկու տղաներ և հարցրել են իրեն, թե կարո՞ղ է 7 հոգու տեղափոխել Սևան քաղաք, իսկ ինքը պատասխանել է, որ իր ավտոմեքենայի մեջ այդքան մարդ չի տեղավորվի, ընկերը ևս վարում է տաքսի և առաջարկել է երկու ավտոմեքենա վերցնել: Նրանք համաձայնել են, ինչից հետո ինքն ու ընկերը ավտոմեքենաները վարել ու հասել են Չարենցի փողոց, որտեղ կանգնել են 5 հոգի, որոնցից 4-ը նստել են ընկերոջ ավտոմեքենան, իսկ մեկը՝ իր ավտոմեքենան: Հասել են Աճառյան փողոց, իրեն հրահանգել են թեքվել և գնացել են Ծարավ Աղբյուր փողոցի բարձրահարկերի մոտ, որտեղ իջել են ավտոմեքենայից, լսել է վիճաբանության ձայներ, սակայն այդ մասին այլ տեղեկություններ չունի: Այնուհետև, իր ավտոմեքենան նստել են նույն անձինք, իսկ նրանց մեջտեղում՝ մեկ նոր անձ, այդ անձը ավտոմեքենան նստել է իր կամքով: Ճանապարհին բարձր խոսել են, սակայն չեն գոռացել, եղել է լարված մթնոլորտ, իրեն ասել են, որ տանի Էրեբունի, որտեղ վճարել են 40.000 ՀՀ դրամ՝ ասելով, որ 20.000 ՀՀ դրամը տա ընկերոջը:

Կատարվել է տեսագրությունների զննություն, որոնցում ֆիքսվել է, որ Սարգիս Հարությունյանի ավտոմեքենայի անմիջապես կողքին է տեղի ունեցել ծեծկռտուքը, և տվյալ անձին պարտադրանքով են նստեցրել Սարգիս Հարությունյանի ավտոմեքենան:

Լրացուցիչ հարցաքննվել է Սարգիս Հարությունյանը, և վերջինս ի պատասխան տեսագրության վերաբերյալ հարցին, հայտնել է, որ ուշադիր չի եղել և չի նկատել:

Արթուր Գրիգորյանը տվել է Սարգիս Հարությունյանի ցուցմունքին նույնաբնույթ ցուցմունք, ինչպես նաև հայտնել է, որ ինքը վարել է Օպել մակնիշի (...) ավտոմեքենան:

(...)

Քննարկվող իրավիճակում առավել քան ակնհայտ է, որ Ռուդոլֆ Սամվելի Մելոյանի, Սարգիս Գարրիի Հարությունյանի, Արթուր Մամիկոնի Գրիգորյանի և Արման Ռուլանդի Վարդանյանի բջջային հեռախոսահամարներով տեղի ունեցող հեռախոսային խոսակցություններում կարող են գործի համար էական նշանակություն ունեցող կարևորագույն տեղեկություններ պարունակվել, այդ բջջային հեռախոսահամարներից կատարվող հեռախոսային խոսակցությունները լսելու դեպքում՝ հնարավոր է պարզել դեպքի իրական հանգամանքները, մանրամասն դետալները, որոնք հնարավորություն կտան վարույթն իրականացնող մարմնի համար հասանելի դարձնել կատարվածի ամբողջական պատկերը և տալ ճիշտ իրավական գնահատական յուրաքանչյուր անձի արարքին, պարզել դեպքին մասնակից բոլոր անձանց ինքնությունները, վերջիններիս

մասնակցության աստիճանը և գործողությունների բնույթը, որն ինչպես արդեն նշվեց կնպաստի սույն քրեական գործով դեպքի հանգամանքների ամբողջական բացահայտմանը և բոլոր մեղավորներին ի հայտ բերելուն, ինչպես նաև քննության համար հետաքրքրություն ներկայացնող այլ տեղեկություններ, ինչը առկա իրավիճակում՝ ստեղծված դատավարական բարդ իրավիճակում, հանդիսանում է սույն քրեական գործի ընթացքի համար առաջնահերթ անհրաժեշտություն, որի միջոցով հնարավոր կլինի ապահովել քրեական գործի օբյեկտիվությունը, լրիվությունն ու բազմակողմանիությունը»²:

8. Առաջին ատյանի դատարանը 2022 փետրվարի 16-ի որոշմամբ արձանագրել է. «(...) Շարադրված իրավանորմերի համատեքստում, քննարկելով քննիչի միջնորդությունը, դատարանը հարկ է համարում արձանագրել, որ տվյալ դեպքում ենթադրյալ դեպքերից և համապատասխան անձանց վերաբերյալ տվյալներ ստանալուց և նրանց մասնակցությամբ կատարված քննչական գործողություններից հետո անցել է երկարատև ժամանակ և վարույթն իրականացնող մարմնի հետևությունը, որ Ռուդոլֆ Սամվելի Մելոյանի, Սարգիս Գարրիի Հարությունյանի, Արթուր Մամիկոնի Գրիգորյանի և Արման Ռուլանդի Վարդանյանի բջջային հեռախոսահամարներով տեղի ունեցող հեռախոսային խոսակցություններում կարող են գործի համար էական նշանակություն ունեցող կարևորագույն տեղեկություններ պարունակվել, անհիմն է, և այդ մասով ինչպես քննիչի միջնորդությամբ, այնպես դրան կից Դատարան ներկայացված նյութերով առկա չեն բավարար փաստական տվյալներ: Այսինքն, նշված ժամանակահատվածը ինքնին նվազեցնում է վարույթն իրականացնող մարմնի ենթադրությամբ նշված հետևությունները, այն է՝ Ռուդոլֆ Սամվելի Մելոյանի, Սարգիս Գարրիի Հարությունյանի, Արթուր Մամիկոնի Գրիգորյանի և Արման Ռուլանդի Վարդանյանի բջջային հեռախոսահամարներով տեղի ունեցող հեռախոսային խոսակցություններում գործի համար էական նշանակություն ունեցող կարևորագույն տեղեկություններ պարունակվելու հավանականությունը:

(...) Բացի այդ, հարկ է նշել նաև այն, որ ինչպես միջնորդությամբ, այնպես էլ միջնորդությանը կից ներկայացված փաստական տվյալներում բացակայում է որևէ փաստական տվյալ, որը կարող էր հիմք հանդիսանալ ենթադրելու, որ համապատասխան բջջային հեռախոսահամարներով տարվող խոսակցություններով տվյալ պահին՝ այսինքն քրեական գործի հարուցումից երկարատև ժամանակ անց հնարավոր է ստանալ գործի համար էական նշանակություն ունեցող կարևորագույն տեղեկություններ:

Այսինքն, վարույթն իրականացնող մարմնի կողմից Դատարան չեն ներկայացվել բավարար տվյալներ, որոնք ողջամտորեն կարող էին հանգեցնել նրան, որ համապատասխան բջջային հեռախոսահամարներով տարվող խոսակցություններով, հնարավոր է ստանալ գործի համար էական նշանակություն ունեցող կարևորագույն տեղեկություններ և հեռախոսային խոսակցությունները լսելու հասարակական շահը գերակա է անձանց՝ հեռախոսային խոսակցությունների ազատության ու գաղտնիության օրենքով երաշխավորված իրավունքից, այն արդարացված է, հետապնդում է օրինական նպատակներ և այդ նպատակներին հասնելը եղել է անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում:

Տվյալ դեպքում, Դատարանը հարկ է համարում որպես հնթացս արված դատողություն արձանագրել, որ Դատարանի վերը նշված հետևությունները պայմանավորված է ոչ թե այն հանգամանքով, որ քննիչի միջնորդությունը ժամանակավրեպ է, կամ Դատարանը արձանագրում է ոչ թե այն, թե ինչ քննչական գործողություններ պետք է կատարվեն և երբ

² Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 3-8:

պետք է կատարվեն, այլ Դատարանը արձանագրում է, որ առկա փաստական տվյալների պայմաններում, (ենթադրյալ դեպքերից, իրադարձություններից համապատասխան ժամանակ անցած լինելը և արդեն իսկ կատարված քննչական գործողությունները) քննիչի միջնորդությամբ և կից ներկայացված փաստական տվյալներով չի հիմնավորվում անձանց՝ հեռախոսային խոսակցությունների ազատության ու գաղտնիության օրենքով երաշխավորված իրավունքի սահմանափակումը, որպիսի իրավունքի սահմանափակումը առկա պայմաններում կհանգեցնի կամայականության (...)³:

9. Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի ապրիլի 20-ի որոշման համաձայն՝ «(...) Վերաքննիչ դատարանն իր համաձայնությունն է հայտնում Առաջին ատյանի դատարանի այն հետևությանը, որ «տվյալ դեպքում ենթադրյալ դեպքերից և համապատասխան անձանց վերաբերյալ տվյալներ ստանալուց և նրանց մասնակցությամբ կատարված քննչական գործողություններից հետո անցել է երկարատև ժամանակ և վարույթն իրականացնող մարմնի հետևությունը, որ Ռուդոլֆ Սամվելի Մելոյանի, Սարգիս Գարրիի Հարությունյանի, Արթուր Մամիկոնի Գրիգորյանի և Արման Ռուլանդի Վարդանյանի բջջային հեռախոսահամարներով տեղի ունեցող հեռախոսային խոսակցություններում կարող են գործի համար էական նշանակություն ունեցող կարևորագույն տեղեկություններ պարունակվել, *անհիմն է* և այդ մասով ինչպես քննիչի միջնորդությամբ, այնպես դրան կից Դատարան ներկայացված նյութերով առկա չէ բավարար փաստական տվյալներ»:

Անդրադառնալով վերը նշվածի կապակցությամբ վերաքննիչ բողոքում նշված փաստարկներին, Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ ենթադրյալ դեպքը տեղի է ունեցել 2019 թվականի մարտի 31-ին, քրեական գործը հարուցվել է դեռևս 2019 թվականի ապրիլի 1-ին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 9-րդ կետերով, ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով, համապատասխան անձանց մասնակցությամբ կատարվել են քննչական գործողություններ, և տվյալ դեպքում քննիչի կողմից չի ներկայացվել որևէ փաստական տվյալ, որը կվկայեր այն մասին, որ ենթադրյալ դեպքից տևական ժամանակ անց նշված հեռախոսահամարներով տեղի ունեցող հեռախոսային խոսակցություններում կարող են գործի համար էական նշանակություն ունեցող կարևորագույն տեղեկություններ պարունակվել: Այսինքն քննիչի կողմից չեն ներկայացվել վերաբերելի փաստական տվյալներ, որով հնարավոր լինի ենթադրել, թե այդքան ժամանակ հետո նշված անձինք կարող են հաջորդող մեկ ամսվա ընթացքում խոսել նշված դեպքի հանգամանքների մասին: Եվ միջնորդությամբ պահանջված և ըստ էության անհետաձգելի քննչական գործողություն համարվող հեռախոսային խոսակցություններ լսելն այն պայմաններում, երբ նոր տեղեկություններ չեն ստացվել, չի կարող համարվել հիմնավորված: (...)

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ տվյալ դեպքում բացակայում է անձանց՝ սույն որոշման նախորդ կետում նշված իրավունքի սահմանափակման իրավաչափ հիմքերը և պայմանները, հետևաբար վերաքննիչ բողոքում նշված փաստարկներն անհիմն են, իսկ Առաջին ատյանի դատարանի հետևություններն իրավաչափ են և բխում են ներկայացված փաստական տվյալներից (...)⁴:

³ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 84-89:

⁴ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 29-35:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք Ռուդոլֆ Սամվելի Մելոյանի, Սարգիս Գարրիի Հարությունյանի, Արթուր Մամիկոնի Գրիգորյանի և Արման Ռուլանդի Վարդանյանի բջջային հեռախոսահամարներով տարվող խոսակցությունները մեկ ամիս ժամանակով լսելու և ձայնագրառելու թույլտվություն ստանալու միջնորդությունը մերժելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

11. ՀՀ Սահմանադրության 33-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության և գաղտնիության իրավունք:

2. Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Հաղորդակցության գաղտնիությունը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ, բացառությամբ երբ դա անհրաժեշտ է պետական անվտանգության պաշտպանության համար և պայմանավորված է հաղորդակցվողների՝ օրենքով սահմանված առանձնահատուկ կարգավիճակով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի համաձայն՝ «1. Եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ կասկածյալի, մեղադրյալի և հանցագործությունների մասին տեղեկություններ ունեցող այլ անձանց, հեռախոսային կամ կապի այլ միջոցներով փարվող խոսակցություններում կարող են գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ պարունակվել, դատարանի որոշմամբ թույլատրվում է փվյալ խոսակցությունների լսում և ձայնագրառում:

2. Խոսակցությունների լսման և ձայնագրառման անհրաժեշտության մասին քննիչը կայացնում է՝ դատարանին միջնորդություն հարուցելու մասին պարճառաբանված որոշում, որում նշվում են՝ քրեական գործը և հիմքերը, որոնցով պետք է կատարվի համապատասխան քննչական գործողությունը, այն անձանց ազանունը, անունը, որոնց խոսակցությունները ենթակա են լսման, լսման ժամկետը, հիմնարկը, որին հանձնարարվում է խոսակցությունների լսման և ձայնագրառման տեխնիկական իրականացումը: Որոշումը ուղարկվում է դատարան (...):»:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 8-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

12. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական

դատարան) *Կլասսը և այլոք ընդդեմ Գերմանիայի* գործով վճռում նշել է, որ չնայած հեռախոսային խոսակցություններն ուղղակիորեն հիշատակված չեն Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին մասում, այդպիսիք ներառվում են «անձնական կյանք» և «նամակագրություն» հասկացություններում⁵:

Մեկ այլ վճռով Եվրոպական դատարանը փաստել է, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով՝ պետական մարմինների միջամտությունն անձնական կյանքի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունքին թույլատրվում է այն դեպքում, երբ «նախատեսված է օրենքով»: Համաձայն Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ այս ձևակերպումը ոչ միայն պահանջում է համապատասխանություն ներպետական օրենքին, այլև վերաբերում է օրենքի որակին՝ պահանջելով դրա համապատասխանությունն իրավական պետությանը: Հասարակական հսկողության բացակայության և իշխանությունը չարաշահելու վտանգի պատճառով պետական մարմինների կողմից հեռահաղորդակցության հսկողության և գաղտնալսման գաղտնի միջոցառումների համատեքստում ներպետական օրենսդրությունը պետք է ապահովի 8-րդ հոդվածով սահմանված իրավունքներին կամայական միջամտությունից անձի պաշտպանությունը: Հետևաբար, ներպետական օրենսդրությունը պետք է հստակ լուսաբանի պետական իրավասու մարմինների կողմից նման գաղտնի միջոցառումների կիրառման հանգամանքներն ու պայմանները⁶: Ընդ որում, Եվրոպական դատարանը գտել է, որ հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումը և վերահսկման այլ ձևերը լուրջ միջամտություն են անձնական կյանքի և հաղորդակցության նկատմամբ և համապատասխանաբար պետք է հիմնված լինեն հատկապես հստակ «օրենքի» վրա: Կարևոր է խնդրի վերաբերյալ ունենալ հստակ և մանրամասն կանոններ, հատկապես, երբ կիրառման համար առկա տեխնոլոգիաները շարունակաբար կատարելագործվում են⁷:

12.1. Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված՝ անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի պաշտպանությանը, իսկ ավելի կոնկրետ՝ հեռախոսային խոսակցությունների գաղտնալսմանն առնչվող՝ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությանը, արձանագրել է՝

ա) *Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով՝ հեռախոսային խոսակցությունները ներառվում են «անձնական կյանք» և «նամակագրություն» հասկացություններում,*

բ) *միջամտությունը հեռախոսային խոսակցություններին պետք է լինի օրենքին համապատասխան, անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում և հեղափոխության իրավաչափ նպատակ,*

գ) *միջամտություն նախատեսող օրենսդրությունը պետք է պարունակի՝*

- *վերահսկման համար հիմք հանդիսացող հանցագործությունների բնույթը,*

- *վերահսկվող անձանց շրջանակը,*

- *գաղտնալսման ժամանակահատվածը,*

- *ձեռք բերված տվյալների ուսումնասիրության, օգտագործման և պահպանման*

ընթացակարգը,

- *նշված տվյալներն այլոց հաղորդելու դեպքում կանխարգելիչ միջոցները,*

⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Klass and others v. Germany* գործով 1978 թվականի սեպտեմբերի 6-ի վճիռը, գանգատ թիվ 5029/71, կետ 41:

⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Halford v. the UK* գործով 1997 թվականի հունիսի 25-ի վճիռը, գանգատ թիվ 20605/92, կետ 49:

⁷ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kopp v. Switzerland* գործով 1998 թվականի մարտի 25-ի վճիռը, գանգատ թիվ 13/1997/797/1000, կետ 72:

-ձայնագրությունները ջնջելու կամ ժապավենները ոչնչացնելու հանգամանքները,

դ) պետությունը պետք է ապահովի իրավական պաշտպանության այնպիսի միջոցներ, որոնք կերաշխավորեն անձի՝ հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման միջոցառումները բողոքարկելու հնարավորությունը⁸:

13. Վճռաբեկ դատարանը, իր նախադեպային իրավունքի շրջանակներում անդրադառնալով այս կամ այն քննչական գործողությունը կատարելու անհրաժեշտությանը, իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ իրավասու սուբյեկտը, ելնելով գործի համար նշանակություն ունեցող պարզման ենթակա հանգամանքներից, համապատասխան քննչական գործողության կատարման փաստական և իրավական հիմքերի առկայությունից, ինքն է որոշում, թե երբ և ինչ քննչական գործողություն է հարկավոր կատարել՝ ապահովելու համար քրեական դատավարության բնականոն շարժը:

Բնակարանում խուզարկություն կատարելու քննչական գործողության կապակցությամբ Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ նախաքննության մարմնի կողմից քննարկվող քննչական գործողության կատարմանն ուղղված միջոցներ **անհապաղ չձեռնարկելը, այդ թվում՝ համապատասխան թույլտվություն ստանալու միջնորդությամբ դատարան քրեական գործ հարուցելուց փրական ժամանակ անց դիմելը** չի կարող ինքնին հիմք հանդիսանալ նախաքննության մարմնի միջնորդությունը մերժելու համար: Վճռաբեկ դատարանն ընդգծել է նաև, որ քննչական գործողությունների արդյունավետությունը, հանցագործությունների քննության մեթոդիկական և առանձին քննչական գործողությունների կատարման մարտավարությունը դուրս են քննչական գործողության կատարումը թույլատրելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդության շրջանակներում դատարանի կողմից քննարկման ենթակա հարցերի, այլ կերպ՝ դատական վերահսկողության առարկայի շրջանակներից⁹:

13.1. Վերահաստատելով սույն որոշման նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դրանք վերաբերելի մասով կիրառելի են նաև հեռախոսային խոսակցությունները լսելու քննչական գործողության նկատմամբ՝ իհարկե հաշվի առնելով յուրաքանչյուր գործի հանգամանքների առանձնահատկությունները և գործում առկա փաստական տվյալները:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վարույթն իրականացնող մարմինն իրավասու է նշված քննչական գործողությունը կատարելու թույլտվություն ստանալու միջնորդությամբ դիմել դատարան, եթե գտնում է, որ առկա են **բավարար փվյալներ** առ այն, որ կասկածյալի, մեղադրյալի և հանցագործությունների մասին տեղեկություններ ունեցող այլ անձանց, հեռախոսային կամ կապի այլ միջոցներով տարվող խոսակցություններում **կարող են գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ պարունակվել**:

Այսպես՝ օրենսդիրը, հեռախոսային խոսակցությունների լսումը դասելով դատական վերահսկողության օբյեկտների շարքին, սահմանել է վերոնշյալ քննչական գործողությունը կատարելու թույլտվություն ստանալու համար դատարան միջնորդություն ներկայացնելու հստակ պահանջներ: Ընդ որում, հաշվի առնելով, որ վերոնշյալ քննչական գործողությունն անմիջականորեն կապված է անձի անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի

⁸ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Սամվել Բաբայանի, Արմեն Պողոսյանի և Սանասար Գաբրիելյանի գործով 2018 թվականի հունիսի 15-ի թիվ ԵԿԴ/0189/01/17 որոշման 13.3-րդ կետը:

⁹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Յաշա Խաչատրյանի գործով 2020 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ ԵԴ/3084/07/19, Հովհաննես Շահինյանի գործով 2023 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԴ/0364/07/20 և Դավիթ Առաքելյանի գործով 2023 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ ԿԴ1/0143/07/21 որոշումները:

էական սահմանափակման հետ, դրա կատարման փաստական հիմքին պետք է ներկայացվեն խիստ պահանջներ, քանի որ հակառակ մոտեցումը կհանգեցնի կամայականությունների: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ հիշյալ քննչական գործողության կատարման **փաստական հիմքը բավարար տվյալների առկայությունն է** հեռախոսային կամ կապի այլ միջոցներով տարվող խոսակցություններում գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ պարունակվելու վերաբերյալ:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- նախաքննության մարմինը միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ Ռուդոլֆ Սամվելի Մելոյանի, Սարգիս Գարրիի Հարությունյանի, Արթուր Մամիկոնի Գրիգորյանի և Արման Ռուլանդի Վարդանյանի բջջային հեռախոսահամարներով տարվող խոսակցությունները մեկ ամիս ժամանակով լսելու և ձայնագրառելու թույլտվություն ստանալու համար¹⁰:

- Առաջին ատյանի դատարանը վերոնշյալ միջնորդությունը մերժել է՝ նշելով, որ ենթադրյալ դեպքերից և համապատասխան անձանց վերաբերյալ տվյալներ ստանալուց և նրանց մասնակցությամբ կատարված քննչական գործողություններից հետո անցել է երկարատև ժամանակ, հետևաբար վարույթն իրականացնող մարմնի այն հետևությունը, որ վերոնշյալ անձանց բջջային հեռախոսահամարներով տեղի ունեցող հեռախոսային խոսակցություններում կարող են գործի համար էական նշանակություն ունեցող կարևորագույն տեղեկություններ պարունակվել, անհիմն է: Բացի այդ, Առաջին ատյանի դատարանը գտել է, որ ինչպես միջնորդությամբ, այնպես էլ միջնորդությանը կից ներկայացված նյութերում բացակայում է որևէ փաստական տվյալ, որը կարող էր հիմք հանդիսանալ ենթադրելու, որ համապատասխան բջջային հեռախոսահամարներով տարվող խոսակցություններով տվյալ պահին՝ այսինքն քրեական գործի հարուցումից երկարատև ժամանակ անց, հնարավոր է ստանալ գործի համար էական նշանակություն ունեցող կարևորագույն տեղեկություններ¹¹:

- Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական ուժի մեջ թողնելով, արձանագրել է, որ քննիչի կողմից չեն ներկայացվել վերաբերելի փաստական տվյալներ, որով հնարավոր լինի ենթադրել, թե այդքան ժամանակ հետո նշված անձինք կարող են հաջորդող մեկ ամսվա ընթացքում խոսել նշված դեպքի հանգամանքների մասին: Վերաքննիչ դատարանը նշել է նաև, որ միջնորդությամբ պահանջված և ըստ էության անհետաձգելի քննչական գործողություն համարվող հեռախոսային խոսակցություններ լսելն այն պայմաններում, երբ նոր տեղեկություններ չեն ստացվել, չի կարող համարվել հիմնավորված¹²:

15. Նախորդ կետում շարադրված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-13.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ռ.Մելոյանի, Ս.Հարությունյանի, Ա.Գրիգորյանի և Ա.Վարդանյանի բջջային հեռախոսահամարներով տարվող խոսակցությունները մեկ ամիս ժամանակով լսելու և ձայնագրառելու թույլտվություն ստանալու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը մերժելիս ստորադաս դատարանները եկել են իրավաչափ եզրահանգման:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է հայտնում ստորադաս դատարանների այն հետևությանը, որ ենթադրյալ դեպքից ու համապատասխան անձանց

¹⁰ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

¹¹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

¹² Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

վերաբերյալ տվյալներ ստանալուց և նրանց մասնակցությամբ քննչական գործողություններ կատարելուց հետո անցել է երկարատև ժամանակ, իսկ քննիչի կողմից չեն ներկայացվել վերաբերելի փաստական տվյալներ, որ վերոնշյալ անձանց բջջային հեռախոսահամարներով տեղի ունեցող հեռախոսային խոսակցություններում հաջորդող մեկ ամսվա ընթացքում կարող են գործի համար էական նշանակություն ունեցող տեղեկություններ պարունակվել:

Այսպես՝ սույն գործի փաստական տվյալներից հետևում է, որ ենթադրյալ դեպքը տեղի է ունեցել 2019 թվականի մարտի 31-ին, քրեական գործը հարուցվել է 2019 թվականի ապրիլի 1-ին, իրականացվել են մի շարք քննչական գործողություններ, իսկ հեռախոսային խոսակցությունները լսելու թույլտվություն ստանալու վերաբերյալ միջնորդությունը դատարան է ներկայացվել 2022 թվականի փետրվարի 16-ին¹³:

Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ թեև նախաքննության մարմնի կողմից քննչական գործողության կատարմանն ուղղված միջոցներ անհապաղ չձեռնարկելը, այդ թվում՝ համապատասխան թույլտվություն ստանալու միջնորդությամբ դատարան քրեական գործ հարուցելուց տևական ժամանակ անց դիմելն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ նախաքննության մարմնի միջնորդությունը մերժելու համար, այնուամենայնիվ, վերոնշյալ հանգամանքները յուրաքանչյուր դեպքում ենթակա են գնահատման՝ կոնկրետ գործի փաստական տվյալների առանձնահատկությունները հաշվի առնելով:

Սույն գործով ենթադրյալ դեպքից և քրեական գործի հարուցումից հետո անցել է **շուրջ երեք փարի**, որպիսի տևական ժամանակահատվածն արդեն իսկ նվազեցնում է հավանականությունը, որ միջնորդության մեջ նշված անձանց հեռախոսային խոսակցություններում կարող են սույն գործի հանգամանքների վերաբերյալ էական նշանակություն ունեցող տեղեկություններ պարունակվել, իսկ նախաքննության մարմնի կողմից չի ներկայացվել որևէ փաստական տվյալ, որը հիմք կտար գալու ողջամիտ ենթադրության, որ դեպքից շուրջ երեք տարի անց նշված անձինք իրենց կողմից տարվող հեռախոսային խոսակցություններում հայցվող ժամանակահատվածում հնարավոր է անդրադառնալին դեպքի հանգամանքներին և հայտնեին գործի համար էական նշանակություն ունեցող տեղեկություններ: Մասնավորապես, քննիչի միջնորդությամբ ներկայացվել են մինչև 2019 թվականի սեպտեմբեր ամիսը կատարված հարցաքննություններով ստացված տեղեկությունները և կից ներկայացվել են համապատասխան արձանագրությունները¹⁴, իսկ տեսագրության զննության վերաբերյալ որևէ ապացույց ներկայացված նյութերում առկա չէ: Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից սույն որոշման 5.2-րդ կետում նշված փաստարկին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախաքննության մարմնի կողմից ներկայացված միջնորդությունը նման հիմնավորում չի պարունակում, և այն չի կարող լրացվել դատական ակտի բողոքարկման շրջանակներում:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում ստորադաս դատարանների եզրահանգումն առ այն, որ հայցվող քննչական գործողության կատարման **փաստական հիմքը բացակայում է**, մասնավորապես՝ առկա չեն բավարար տվյալներ առ այն, որ Ռ.Մելոյանի, Ս.Հարությունյանի, Ա.Գրիգորյանի և Ա.Վարդանյանի բջջային հեռախոսահամարներով տարվող խոսակցություններում գործի համար էական նշանակություն ունեցող տեղեկություններ կարող են պարունակվել:

Մինչև սույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է արտահայտում Առաջին ատյանի դատարանի դատական ակտում առկա այն դատողությանը, որ դատարանը

¹³ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 3-8:

¹⁴ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 16-18, 21-34:

ոչ թե քննիչի միջնորդությունը դիտարկում է ժամանակավրեպ կամ անդրադառնում նախաքննության մարմնի կողմից այս կամ այն քննչական գործողություն կատարելու անհրաժեշտությանը կամ նպատակահարմարությանը, այլ փաստում է, որ ենթադրյալ դեպքից համապատասխան ժամանակ անցած լինելու և **արդեն իսկ կատարված քննչական գործողությունների պայմաններում, քննիչի միջնորդությամբ չի ներկայացվել որևէ փաստական տվյալ, որը հիմք կլիներ հեռախոսային խոսակցությունների գաղտնիության իրավունքը սահմանափակելու համար:**

16. Այսպիսով, ընդհանրացնելով սույն որոշման 14-15-րդ կետերում մեջբերված և վերլուծված փաստական տվյալները, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախաքննության մարմնի կողմից Ռուդոլֆ Սամվելի Մելոյանի, Սարգիս Գարրիի Հարությունյանի, Արթուր Մամիկոնի Գրիգորյանի և Արման Ռուլանդի Վարդանյանի բջջային հեռախոսահամարներով տարվող խոսակցությունները մեկ ամիս ժամանակով լսելու և ձայնագրառելու թույլտվություն ստանալու միջնորդությունը մերժելու մասին ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր են:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելով, թույլ չի տվել քրեադատավարական օրենքի խախտում, ուստի ներկայացված վճռաբեկ բողոքը պետք է մերժել, իսկ Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի ապրիլի 20-ի որոշումը՝ թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

17. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի ապրիլի 20-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ԿԴ2/0019/06/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ
(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

28 նոյեմբերի 2024 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2023 թվականի դեկտեմբերի 15-ի որոշման դեմ մեղադրյալ Ակսել Դավիթի Մակարյանի պաշտպան Ա.Հակոբյանի հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. 2023 թվականի հոկտեմբերի 5-ին ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին մասի, 195-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախաձեռնվել է թիվ 20826623 քրեական վարույթը:

2023 թվականի հոկտեմբերի 6-ին Ակսել Դավիթի Մակարյանը ձերբակալվել է:

Կոտայքի մարզի դատախազության դատախազ Հ.Բաղյանի՝ 2023 թվականի հոկտեմբերի 7-ի որոշմամբ Ակսել Մակարյանի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, և նույն օրը նրան մեղադրանք է ներկայացվել:

2. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2023 թվականի հոկտեմբերի 9-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Մակարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը՝ 2 (երկու) ամիս ժամկետով: Նույն որոշմամբ հաստատվել է Ա.Մակարյանի ձերբակալման իրավաչափությունը:

3. Պաշտպանի հատուկ վերանայման վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2023 թվականի դեկտեմբերի 15-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2023 թվականի հոկտեմբերի 9-ի որոշումն անփոփոխ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ պաշտպան Ա.Հակոբյանը բերել է հատուկ վերանայման վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2024 թվականի մարտի

14-ի որոշմամբ ընդունվել է վարույթ ու սահմանվել է դատական վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ փաստարկներով.

5. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ առերևույթ քրեադատավարական օրենքի էական խախտում թույլ տալու հետևանքով ստորադաս դատարանի դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը:

Ի հիմնավորումը վերոնշյալի՝ բողոք բերած անձը փաստարկել է, որ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի համար քրեական դատավարության մի շարք դրույթներ նախատեսում են առանձնահատուկ երաշխիքներ, մասնավորապես, եթե հոգեկան, մտավոր կամ ֆիզիկական առողջության խնդիր ունենալու պատճառով մեղադրյալի համար դժվար է ինքնուրույն պաշտպանվել, ապա վարույթն իրականացնող մարմինն անհապաղ միջոցներ է ձեռնարկում վարույթին պաշտպանի մասնակցությունն ապահովելու համար: Բացի այդ, հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մասնակցությամբ քննչական գործողության կատարմանը պարտադիր ներգրավվում է հոգեբան: Օրենսդրական այս պահանջները, ըստ բողոքի հեղինակի՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի արդար դատաքննության իրավունքի կարևորագույն բաղադրատարրերից են: Անդրադառնալով սույն վարույթի փաստական հանգամանքներին՝ բողոքի հեղինակն արձանագրել է, որ մեղադրյալ Ա.Մակարյանը հոգեկան առողջության խնդիր ունեցող անձ է, ինչը հաստատվում է մանկական հոգեբուժական դիսպանսերի կողմից տրված բժշկական եզրակացությամբ, համաձայն որի՝ Ա.Մակարյանի մոտ ախտորոշվել է «չափավոր մտավոր հետամնացություն» և «վարքի խանգարում»: Սակայն Ա.Մակարյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վարույթն իրականացվել է պաշտպանի ու հոգեբանի բացակայությամբ:

Պաշտպան Ա.Հակոբյանն անդրադառնալով դատական նիստին չներկայանալու պատճառներին՝ արձանագրել է, որ ինքը պատշաճ ծանուցված չի եղել, քանի որ դատական նիստի ժամանակի մասին տեղեկացվել է այն սկսելուց մոտ 40 րոպե առաջ, այսինքն, իրեն չի տրամադրվել պատրաստվելու և Առաջին ատյանի դատարանի նստավայր մեկնելու ողջամտորեն անհրաժեշտ ժամանակ:

Միևնույն ժամանակ, ըստ բողոքի հեղինակի՝ անձի մոտ հոգեկան առողջության խնդրի առկայության գնահատման առումով Վերաքննիչ դատարանի մոտեցումը չի բխում օրենսդրական կարգավորումներից:

6. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2023 թվականի դեկտեմբերի 15-ի որոշումը և կայացնել դրան փոխարինող դատական ակտ՝ մերժելով մեղադրյալ Ա.Մակարյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Ակսել Մակարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով հարուցվել է հանրային քրեական հետապնդում ու նրան մեղադրանք է ներկայացվել այն արարքի համար, որ նա, իր մոտ գտնվող՝ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված առարկայով՝ դանակով, չորս հարված է հասցրել Ս.Սարգսյանի որովայնի հատվածին՝ վերջինիս առողջությանը պատճառելով կյանքի համար վտանգավոր

ծանր մարմնական վնասվածք¹:

8. Ա.Մակարյանի նկատմամբ խափանման միջոց կիրառելու միջնորդությանը կից նյութերում առկա՝

- Կոտայքի մարզպետի կողմից՝ 2016 թվականի օգոստոսի 8-ին տրված վկայագրի համաձայն՝ Ա.Մակարյանը. «(...) ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք՝ մտավոր հետամնացություն՝ թեթև (...)»: Վկայագիրը տրվել է՝ հիմք ընդունելով «Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության՝ 2016 թվականի հուլիսի 26-ի եզրակացությունը²:

- «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության մանկական հոգեբուժական դիսպանսերում կազմված բժշկական եզրակացության համաձայն՝ 2020 թվականի մարտի 13-ին, զննության արդյունքներով Ա.Մակարյանի մոտ ախտորոշվել է «չափավոր մտավոր հետամնացություն» ու «վարքի խանգարում»: Եզրակացությունը կազմվել է դիսպանսերի վարիչի և մանկական հոգեբույժի կողմից³:

9. Առաջին ատյանի դատարանի դատական նիստի արձանագրության համաձայն՝ նախագահող դատավորը հայտարարել է, որ պաշտպան Ա.Հակոբյանը պատշաճ ծանուցված լինելով դատական նիստի ժամանակի մասին, չի ներկայացել, իսկ հեռախոսագրույցի ընթացքում հայտնել է, թե դատական նիստին կարող է ներկայանալ միայն հաջորդ օրը՝ աշխատանքային ժամին: Արդյունքում, ստանալով պաշտպանի բացակայությամբ դատական նիստը շարունակելու մեղադրյալի համաձայնությունը, նախագահող դատավորը շարունակել է դատական նիստը⁴:

10. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ «(...) [Ա]ռկա է հիմնավոր կասկած առ այն, որ մեղադրյալ Ակսել Դավիթի Մակարյանն առնչություն ունի իրեն մեղաազրվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված հանցագործության կատարմանը, (...):

(...) [Հ]իմնավոր է (...) ենթադրությունը, որ Ա.Մակարյանը, ազատության մեջ մնալով, կարող է կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք: Առաջին ատյանի դ]ատարանը, հաշվի առնելով մեղադրյալի անձից բխող սոցիալական վրանգը, գտնում է, որ մեղադրյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը բարձր է:

Ինչ վերաբերում է մեղադրյալ Ա.Մակարյանի կողմից իր վրա դրված պարտականությունները չկատարելու, այդ թվում՝ մինչդարձական վարույթում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով խոչընդոտելու հավանականությանը, ապա [Առաջին ատյանի դ]ատարանն արձանագրում է, որ սույն հիմքի առնչությամբ միջնորդության մեջ առկա փաստարկները ևս հիմնավոր են:

Ամփոփելով ասվածը, (...) [Առաջին ատյանի դ]ատարանը գտնում է, որ գործի քննության սույն փուլում մեղադրյալ Ա.Մակարյանի նկատմամբ ազատությունից զրկելու հետք չկապված խափանման միջոցների կիրառմամբ հնարավոր չէ ապահովել նրա անձնական ազատության իրավունքի, և վերջինիս մասնակցությամբ գործի պատշաճ քննության հանրային շահի միջև արդարացի հավասարակշռությունը: Այլ խոսքով՝ ազատությունից զրկելու հետք չկապված խափանման միջոցների կիրառմամբ հնարավոր չի լինի ապահովել Ա.Մակարյանի պատշաճ

¹ Տես վարույթի նյութեր, հատոր 1, թերթեր 119-125:

² Տես վարույթի նյութեր, հատոր 1, թերթեր 90:

³ Տես վարույթի նյութեր, հատոր 1, թերթեր 89:

⁴ Տես նյութեր, հատոր 2, դատական նիստի արձանագրության լազերային կրիչը, թերթ 5:

վարքագիծը»⁵:

11. Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով վիճարկվող դատական ակտը, արձանագրել է. «(...) [Առաջին ապյանի] դատարանը, դռնփակ դատական նիստում, մասնակցությամբ քննիչ Ա.Շահնազարյանի և մեղադրյալ Ա.Մակարյանի, ճշտելով վերջինիս դիրքորոշումն առանց իր պաշտպանի մասնակցության վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը քննության առնելու մասին և սրանալով մեղադրյալի համաձայնությունը, 2023 թվականի հոկտեմբերի 09-ին քննության է առել և ամբողջությամբ բավարարել է ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության քննիչ Ա.Շահնազարյանի միջնորդությունը և 20826623 քրեական վարույթով մեղադրյալ Ակսել Դավիթի Մակարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրել կալանքը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

(...) [Գ]ործող քրեադատավարական օրենսդրության իրավակարգավորումների ուսումնասիրմամբ պարզ է դառնում, որ օրենսդիրը կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդության քննարկմանը պաշտպանի պարտադիր մասնակցություն չի նախատեսում: Ուստի, Վերաքննիչ դատարանը, գտնում է, որ Առաջին ապյանի դատարանը պաշտպան Ա.Հակոբյանին իրազեկելով միջնորդության քննարկման տեղի և ժամանակի մասին և վերջինիս չներկայանալու պայմաններում, քննության առնելով վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը, թույլ չի տվել դատական սխալ, որը կարող է ազդել գործի ելքի վրա:

(...) [Ա]նդրադառնալով մեղադրյալ Ա.Մակարյանի՝ հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունենալու հարցին, [Վերաքննիչ դատարանը] փաստում է, որ դատական գործի նյութերում առկա չէ փորձագետի եզրակացություն, որով կհաստատվեր, որ վերջինս չի կարող մասնակցել դատաքննչական գործողություններին, այլ միայն ներկայացված է եղել մանկական հոգեբուժական դիսպանսերից բժշկական եզրակացություն, որի համաձայն՝ Ա.Մակարյանի մոտ ախտորոշվել է չափավոր մտավոր հետամնացություն, վարքի խանգարում: (...)»⁶:

12. 2023 թվականի դեկտեմբերի 29-ին Կոտայքի մարզի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Ա.Մակարյանի և մյուսների վերաբերյալ քրեական գործը՝ ըստ էության քննելու համար, և Ա.Մակարյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված խափանման միջոց կալանքի փոխարեն համակցված կիրառվել են այլընտրանքային խափանման միջոցներ՝ տնային կալանքը՝ 3 (երեք) ամիս ժամկետով և բացակայելու արգելքը⁷:

Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.

13. Սույն վարույթով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք ապահովվել է Ա.Մակարյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վարույթի արդարացիությունը:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Վարույթն իրականացնող մարմինը չի ընդունում պաշտպանից մեղադրյալի հրաժարվելը կամ անհապաղ միջոցներ է ձեռնարկում վարույթին պաշտպանի մասնակցությունն ապահովելու համար, եթե՝

1) մեղադրյալի համար դժվար է ինքնուրույն պաշտպանվել հոգեկան, մտավոր կամ ֆիզիկական առողջության խնդիր ունենալու պատճառով. (...)»:

⁵ Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 7-34:

⁶ Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 3, թերթեր 43-49:

⁷ Տե՛ս www.datalex.am Դատական տեղեկատվական համակարգ, թիվ ԿԴ/0730/01/23 քրեական գործը:

Նույն օրենսգրքի 212-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. (...) [Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մասնակցությամբ քննչական գործողության կատարմանը ներգրավվում է Կառավարության սահմանած կարգով որակավորված հոգեբան: (...)]»:

14.1. Մեջբերված դատավարական դրույթները նպատակ են հետապնդում ներպետական օրենսդրությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու և առավելագույնս երաշխավորելու հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի լավագույն շահերը: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է նրան, որ եթե մեղադրյալի համար դժվար է ինքնուրույն պաշտպանվել՝ հոգեկան, մտավոր կամ ֆիզիկական առողջության խնդիր ունենալու պատճառով, ապա վարույթն իրականացնող մարմնից պահանջվում է միջոցներ ձեռնարկել վարույթին պաշտպանի պարտադիր մասնակցությունն ապահովելու համար: Դա նշանակում է, որ անձի մոտ հոգեկան առողջության խնդրի առկայության մասին տեղեկատվության ի հայտ գալն ինքնին պահանջում է, որ վարույթի ընթացքում ինքնուրույն պաշտպանվելու հնարավորությունը ենթարկվի պարտադիր ստուգման, և ինքնուրույն պաշտպանվելու անհնարինությունը հաստատվելու դեպքում միջոցներ ձեռնարկվի վարույթին պաշտպանի մասնակցությունն ապահովելու ուղղությամբ: Ընդ որում, պաշտպանի մասնակցությունը պարտադիր դարձնող այս կանոնը գործում է նաև այն դեպքում, երբ մեղադրյալը հրաժարվում է պաշտպանից: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, պաշտպանի մասնակցությունը պարտադիր դարձնող վերջին կարգավորումը հավասարապես վերաբերում է նաև պաշտպանի բացակայությամբ վարույթը շարունակելու մեղադրյալի կամահայտնության դեպքին:

Բացի այդ, քննչական գործողությունների կատարման որոշ ընդհանուր կանոններ ևս առանձնահատուկ երաշխիքներ են նախատեսում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց համար: Մասնավորապես՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մասնակցությամբ կատարվող ցանկացած քննչական գործողությանը պարտադիր ներգրավվում է հոգեբան:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերոնշյալ հավելյալ երաշխիքը սահմանելիս, օրենսդիրը որպես չափանիշ է ընդունել ոչ թե անձի վարույթային կարգավիճակը, այլ նրան բնութագրող և մյուսներից տարբերակող օբյեկտիվ այլ հատկանիշ: Հոգեբանի ներգրավումը քրեական վարույթում մասնավոր շահերի կարևորմանն ուղղված էական գործոն է, քանի որ հոգեբանն իր գիտելիքներով ու ունակություններով կարող է առավել արդյունավետ նպաստել վերոնշյալ անձանց իրավունքների պաշտպանությանը: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ այս խոցելի խմբին պատկանող անձի մասնակցությամբ կատարվող քննչական գործողությանը հոգեբան ներգրավելու էությունն ու նշանակությունը սկզբունքորեն ենթադրում է, որ քրեական դատավարությունում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի լավագույն շահն առավելագույնս ապահովելու նպատակով, դատական վարույթին անխուսափելիորեն պետք է երաշխավորվի **ըստ անհրաժեշտության** հոգեբանի մասնակցություն: Հարկ է ընդգծել, որ առաջադրվող հայեցակարգը չի ենթադրում դատական ողջ վարույթին հոգեբանի մասնակցության պարտադիրություն, քանզի հոգեբանի մասնակցությունն ինքնանպատակ չէ և անհրաժեշտաբար պետք է զուգորդվի վերոնշյալ անձանց իրավունքների առավել արդյունավետ պաշտպանությանը նպաստելու հրամայականով: Այսինքն, տվյալ դեպքում հետապնդվող նպատակը և գործադրվող միջոցը պետք է գտնվեն ընդհանուր հավասարակշռության մեջ: Հայեցակարգային այս լուծումը ոչ միայն բխում է քրեական դատավարությունում հոգեբանի առաքելությունից, այլ նաև՝ հոգեկան խանգարումներ ունեցող անձանց կարգավիճակի մասին ընդունված մի շարք միջազգային-իրավական փաստաթղթերի պահանջներից: Մասնավորապես՝ Միավորված ազգերի կազմակերպության՝

1991 թվականի դեկտեմբերի 17-ի «Հոգեկան հիվանդների պաշտպանության և հոգեբուժական օգնության բարելավման» թիվ 46/119 բանաձևի 1-ին սկզբունքի 7-րդ մասն ամրագրում է, որ եթե դատարանը կամ իրավասու այլ մարմինը գալիս է այն եզրահանգման, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձն ի վիճակի չէ տնօրինելու իր գործերը, նրա շահերի պաշտպանության նպատակով պետք է ձեռնարկվեն միջոցներ՝ այնքանով, որքանով դա անհրաժեշտ է ու տեղին այդ անձի առողջական վիճակի համար:

15. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Ակսել Մակարյանի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում և նրան մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով՝ այն արարքի համար, որ նա, մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված առարկայով հարվածներ է հասցրել Ս.Սարգսյանի որովայնի հատվածին՝ վերջինիս առողջությանը պատճառելով կյանքի համար վտանգավոր ծանր մարմնական վնասվածք⁸,

- Ա.Մակարյանն ունեցել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք՝ «թեթև մտավոր հետամնացության» պատճառով, ընդ որում, հիմքում դրվել է «Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության եզրակացությունը⁹: Բացի այդ, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության մանկական հոգեբուժական դիսպանսերում կազմված բժշկական եզրակացության համաձայն՝ Ա.Մակարյանը 2020 թվականի մարտի 13-ի ենթարկվել է գննության և նրա մոտ ավտորոշվել է «չափավոր մտավոր հետամնացություն» և «վարքի խանգարում»¹⁰,

- Ա.Մակարյանի նկատմամբ խափանման միջոց կիրառելու միջնորդությամբ անցկացված դատալսման ընթացքում նախագահող դատավորը, ստանալով պաշտպանի բացակայությամբ դատական նիստը շարունակելու մեղադրյալի համաձայնությունը, շարունակել է դատական նիստը¹¹, եզրափակիչ դատական ակտով հաստատված է համարել մեղադրյալի կողմից իրեն վերագրվող հանցանքը կատարելու հիմնավոր կասկածն ու խափանման միջոց կիրառելու անհրաժեշտությունը: Արդյունքում, գնահատելով հետապնդվող նպատակին միջնորդվող խափանման միջոցի պիտանելիությունը՝ Առաջին ատյանի դատարանը եզրահանգել է, որ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը ենթակա է բավարարման¹²,

- հատուկ վերանայման բողոքի քննության արդյունքում, Վերաքննիչ դատարանն իրավաչափ է դիտարկել պաշտպանի բացակայությամբ խափանման միջոց կիրառելու վարույթի անցկացումը՝ արձանագրելով, որ դատական նիստի ժամանակի մասին պատշաճ ծանուցված պաշտպան Ա.Հակոբյանը չի ներկայացել և նրա բացակայությամբ վարույթն իրականացվել է մեղադրյալի համաձայնությամբ: Ընդ որում, արձանագրվել է, որ օրենսդիրն այս վարույթին պաշտպանի պարտադիր մասնակցության կարգավորում չի նախատեսել: Վերաքննիչ դատարանը նաև փաստել է, որ ներկայացված նյութերում առկա չէ մեղադրյալի հոգեկան առողջության վիճակին վերաբերող փորձագիտական եզրակացություն, որով կփաստվեր, որ վերջինս չի կարող մասնակցել դատաքննչական գործողություններին, միաժամանակ վարույթի նյութերում առկա բժշկական եզրակացությունը, ըստ էության,

⁸ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

⁹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

¹⁰ Տե՛ս նույն տեղում:

¹¹ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

¹² Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

դիտարկվել է որպես այս հարցում ոչ պիտանի փաստական տվյալ¹³:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14.1-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ըստ խափանման միջոց կիրառելու միջնորդության հիմնավորվածությունը հաստատող նյութերի, Ա.Մակարյանը՝ «թեթև հետամնացություն» ախտանիշով պայմանավորված ունեցել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, իսկ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության մանկական հոգեբուժական դիսպանսերում կազմված բժշկական եզրակացության համաձայն՝ նրա մոտ ախտորոշվել է «չափավոր մտավոր հետամնացություն» և «վարքի խանգարում»: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, մեղադրյալ Ա.Մակարյանի հոգեկան առողջության վերաբերյալ նշված տվյալների առկայությունը վկայում է, որ նրա համար ողջամտորեն դժվար է լինելու ինքնուրույն իրականացնել պաշտպանության իր իրավունքը, ուստի, քրեադատավարական օրենսդրության ուղղակի պահանջի ուժով մեղադրյալ Ա.Մակարյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է: Այսինքն, օրենսդրական կարգավորումներից չբխող է Վերաքննիչ դատարանի դիրքորոշումն այն մասին, որ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության քննարկմանը պաշտպանի պարտադիր մասնակցության պահանջ նախատեսված չէ:

Անդրադառնալով պաշտպանի բացակայությամբ վարույթը շարունակելու մեղադրյալի կամահայտնությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամեն դեպքում, Առաջին ատյանի դատարանն իր տրամադրության տակ ունենալով մեղադրյալ Ա.Մակարյանի հոգեկան առողջության վերաբերյալ հիշյալ տվյալները, պետք է գնահատեր, թե արդյո՞ք մեղադրյալն առանց դժվարությունների կարող էր ինքնուրույն պաշտպանվել:

Ընդհանրացնելով կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարույթով դատական նիստին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, ուստի տվյալ դատական նիստին պաշտպան Ա.Հակոբյանի չներկայանալու պայմաններում Առաջին ատյանի դատարանը պետք է միջոցներ ձեռնարկեր այդ նիստում նրան այլ պաշտպանով փոխարինելու ուղղությամբ, իսկ անհնարինության դեպքում՝ դատական նիստը հետաձգեր¹⁴: Նշվածով փոխկապակցված հարկ է արձանագրել, որ բողոքաբերի՝ դատական նիստին հարգելի պատճառներով չներկայանալու փաստարկին անդրադառնալու իրավական անհրաժեշտությունը բացակայում է՝ պայմանավորված սույն վարույթով պաշտպանի մասնակցությունը պարտադիր դարձնող հիմքի առկայությամբ:

Ինչ վերաբերում է հոգեկան առողջության վիճակին վերաբերող փորձագիտական եզրակացության բացակայության մասին մոտեցմանը, հարկ է նկատել, որ Վերաքննիչ դատարանը սահմանել է լրացուցիչ պահանջ, քանզի մեղադրյալի մոտ հոգեկան առողջության խնդիրների առկայության հաստատումն **ինքնին** ներառված չէ օրենսդրությամբ սպառիչ թվարկված այն հանգամանքների շարքում, որոնք կարող են հաստատվել միայն փորձագետի եզրակացությունը նախապես ստանալով և հետազոտելով¹⁵: Այսինքն՝ անկախ նրանից, թե վարույթի նյութերում մեղադրյալի հոգեկան առողջության վերաբերյալ առկա է բժշկական, թե փորձագիտական եզրակացություն, վարույթն իրականացնող մարմինը պետք է քննարկի խնդրո առարկա հիմքով վարույթին պաշտպանի պարտադիր մասնակցության հարցը: Ավելին,

¹³ Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

¹⁴ Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 273-րդ հոդվածի 3-րդ մասը:

¹⁵ Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդված:

հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի դեպքում անհրաժեշտ է ոչ թե վարության հետ կապված գործողությանը մասնակցելու անկարողության, ինչպես արձանագրել է Վերաքննիչ դատարանը, այլ պաշտպանության իրավունքի ինքնուրույն իրականացման դժվարության հավաստիությունը: Այս համատեքստում հարկ է փաստել նաև, որ Ա.Մակարյանի հոգեկան առողջության վիճակի վերաբերյալ փաստաթղթերից մեկի հիմքում դրվել է «Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության եզրակացությունը:

16.1. Վերոգրյալից բացի հարկ է նկատել, որ Առաջին ատյանի դատարանն առհասարակ քննարկման առարկա չի դարձրել Ա.Մակարյանի՝ իր իրավունքների առավել արդյունավետ պաշտպանությունն ապահովելու նպատակով հոգեբան ներգրավելու անհրաժեշտությունը: Այստեղ Վճռաբեկ դատարանը ելնում է այն նկատառումներից, որոնք հիմք են հանդիսացել հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մասնակցությամբ քննչական գործողության կատարմանը հոգեբան ներգրավելու պահանջի նախատեսման համար և դրանք վերաբերելի մասով (*mutatis mutandis*) դատական վարույթի նկատմամբ տարածելու անհրաժեշտությունից: Վարույթին հոգեբան ներգրավելու անհրաժեշտության հարցի քննարկման օգտին է խոսում նաև մինչդատական վարույթում մեղադրյալի մասնակցությամբ կատարված վարության գործողություններին հոգեբան ներգրավված լինելը¹⁶:

17. Ընդհանրացնելով կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ չի ապահովվել Ա.Մակարյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վարույթի արդարացիությունը:

18. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վարույթով Առաջին ատյանի դատարանը՝ դատական ակտ կայացնելիս, իսկ Վերաքննիչ դատարանը՝ Առաջին ատյանի դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելով, թույլ են տվել դատական սխալ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով սահմանված սկզբունքի խախտում, ինչը նույն օրենսգրքի 362-րդ հոդվածի համաձայն, հիմք է ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու համար: Սակայն, հաշվի առնելով սույն որոշումը կայացնելու պահին մինչդատական վարույթն ավարտված և քրեական գործն ըստ էության քննության առնելու համար Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկված լինելն ու այն, որ Ա.Մակարյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցի վերաբերյալ կայացվել է նոր որոշում¹⁷, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու իրավական հնարավորությունը բացակայում է: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը պետք է թողնել անփոփոխ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները: Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով արձանագրված խախտման բնույթը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պետք է սույն վարույթով ճանաչել մեղադրյալ Ա.Մակարյանի իրավունքի խախտման փաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 33-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ, 352-րդ, 359-րդ, 361-363-րդ և 400-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

¹⁶ Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1:

¹⁷ Տե՛ս սույն որոշման 12-րդ կետը:

ՈՐՈՇԵՑ

1. Ճանաչել մեղադրյալ Ակսել Դավիթի Մակարյանի իրավունքի խախտման փաստը:
2. Մեղադրյալ Ակսել Դավիթի Մակարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2023 թվականի դեկտեմբերի 15-ի որոշումը թողնել անփոփոխ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:
Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

ԵԿԴ/3859/02/17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ
(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

2024 թվականի դեկտեմբերի 13-ին

գրավոր ընթացակարգով քննելով ըստ Երևան համայնքի (այսուհետ՝ Համայնք) հայցի ընդդեմ Մարինա Պողոսյանի, երրորդ անձ Կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե)՝ սեփականության իրավունքը դադարեցնելու և իրավունքի պետական գրանցումը վերացնելու պահանջների մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.12.2021 թվականի որոշման դեմ Համայնքի բերած վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Համայնքը պահանջել է դադարեցնել Մարինա Պողոսյանի սեփականության իրավունքը Երևանի Րաֆֆու և Զիվանի փողոցների հատման մասում գտնվող 0,0072հա մակերեսով հողամասի նկատմամբ ու որպես հետևանք՝ վերացնել 30.12.2003 թվականին Կոմիտեում կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 05.08.2021 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 02.12.2021 թվականի որոշմամբ Մարինա Պողոսյանի բերած վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 05.08.2021 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Համայնքը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Մարինա Պողոսյանը (ներկայացուցիչ էմիլ Ամիրխանյան):

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ և 408-րդ հոդվածները, ՀՀ հողային օրենսգրքի 43-րդ, 86-րդ 102-րդ ու 110-րդ հոդվածները, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պարզառաքանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը Մարինա Պողոսյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը բավարարելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ Դատարանը նշված գործով իր վրա դրել է կառուցապատման համար հողամասն օտարված լինելու փաստի ապացուցման պարտականությունը, մինչդեռ այդ փաստը վեճի լուծման համար էական նշանակություն չունի:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ շինարարության թույլտվությունը դրա հասցեատիրոջը տալիս է ոչ միայն քաղաքաշինական գործունեություն իրականացնելու իրավունք, այլև սահմանում է պարտավորություններ, ինչը տվյալ դեպքում անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից, քանի որ շինարարության թույլտվությունը մեկնաբանվել և գնահատվել է բացառապես որպես իրավունք սահմանող փաստաթուղթ՝ հաշվի չառնելով դրա պարտադիր կատարման տարրերը:

Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշումը, որ իր վրա պետք է դրվեր հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրված լինելու փաստն ապացուցելու պարտականություն՝ անհիմն է, քանի որ վեճի առարկա հողամասն օտարվել է կառուցապատման նպատակով օգտագործելու համար, և Մարինա Պողոսյանը, ձեռք բերելով հողամասը, իրավահաջորդությամբ ձեռք է բերել նաև այն կառուցապատելու պարտավորություն, ինչը երեք տարուց ավել չի իրականացրել ու հողամասը ներկայումս էլ իր նպատակային նշանակությամբ չի օգտագործում:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Մարինա Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող և վեճի առարկա հանդիսացող հողամասերը ենթակա են օգտագործման դրա նպատակային նշանակությանը համապատասխան, այն է՝ հասարակական նշանակության կառուցապատում իրականացնելու նպատակով, սակայն քաղաքաշինական փաստաթղթերով սահմանված ժամանակահատվածում, ինչպես նաև ՀՀ հողային օրենսգրքի 102-րդ հոդվածով նշված երեք տարվա ընթացքում, ինչը տվյալ դեպքում Մարինա Պողոսյանի կողմից չի իրականացվել, ինչպես նաև սահմանված ժամկետում չի ներկայացվել դիմում նոր թույլտվություն ստանալու համար: Ուստի, նշված հանգամանքները հիմք են հանդիսացել սեփականության իրավունքը դադարեցնելու պահանջով դատարան դիմելու համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 02.12.2021 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 05.08.2021 թվականի վճռին:

2.1 Մարինա Պողոսյանի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքերը և հիմնավորումները

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ:

Վերաքննիչ դատարանն արդարացիորեն գտել է, որ ՀՀ հողային օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կիրառման համար առանցքային նշանակություն ունի կառուցապատման համար հողամասը տրամադրված լինելու հանգամանքը, այսինքն՝ ՀՀ հողային օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով սեփականության իրավունքը կարող է դադարեցվել, եթե հիմնավորվում է հողամասի տրամադրման նպատակը, ինչը չի կարող նույնացվել այն դեպքերի հետ, երբ հողամասի վաճառքից հետո տրվում է կառուցապատման թույլտվություն: Համայնքը չի ապացուցել, որ հողամասի օտարման պայման է եղել դրա կառուցապատումը:

Կառուցապատումը սահմանված ժամկետում չավարտելը հիմք չէ սեփականության

իրավունքի դադարման հայցով դատարան դիմելու համար: Փոխարենը նշվածը կարող է հիմք հանդիսանալ անձին վարչական պատասխանատվության ենթարկելու, իսկ հեղափոխում օբյեկտը վաճառելու հայցով դատարան դիմելու համար:

Համայնքի ներկայացրած դիրքորոշմամբ առաջնորդվելու դեպքում ստացվում է, որ անձը կարող է ենթարկվել և՛ վարչական պատասխանատվության՝ շինարարությունը սահմանված ժամկետում չիրականացնելու դեպքում, և՛ զրկվել սեփականությունից ՀՀ հողային օրենսգրքի 102-րդ հոդվածով սահմանված կարգով, ընդ որում, այն պարագայում, երբ վերջինս սեփականությունը ձեռք չի բերել կառուցապատում իրականացնելու պայմանով:

Սույն գործի քննության պարագայում ՀՀ հողային օրենսգրքի 102-րդ հոդվածի 4-րդ մասը կիրառելի չէ: Ինչ վերաբերում է իր կողմից կառուցապատումը սահմանված ժամկետում իրականացնելու պարտավորությունը խախտելուն, ապա դրա համար նախատեսված պատասխանատվության հարցի քննարկումը դուրս է նշված հոդվածի կարգավորման տիրույթից և ենթակա է քննության վարչական դատավարության կարգով:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 30.12.2003 թվականին տրված անշարժ գույքի սեփականության օգտագործման իրավունքի գրանցման թիվ 1598581 վկայականի համաձայն՝ Մարինա Պողոսյանը հանդիսանում է Երևանի Րաֆֆու և Զիվանի փողոցների հատման մասում գտնվող՝ 0,0072հա մակերեսով հողամասի սեփականատերը: Անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման համար հիմք են հանդիսացել Երևանի քաղաքապետի 11.09.2002 թվականի թիվ 1550-Ա և 21.05.2003 թվականի թիվ 1122-Ա որոշումները, թիվ 2067-2002 գլխավոր հատակագիծը, նոտարի 25.12.2003 թվականի թիվ 2914 վաճառքի պայմանագիրը **(հատոր 1-ին, գ.թ. 12-17)**։

2) Երևանի քաղաքապետի 11.04.2016 թվականի թիվ 1248-Ա որոշմամբ ուժը կորցրած են ճանաչվել Րաֆֆու և Զիվանի փողոցների հատման մասում առևտրի սրահի կառուցման համար Մարինա Պողոսյանին 23.02.2011 թվականին տրված թիվ h.h.01/18-Պ-97-65, 04.12.2013 թվականին տրված թիվ 01/18-Պ-2547-1173 ու 27.12.2014 թվականին տրված թիվ 01/18Պ24501398 շինարարության թույլտվությունները: Նույն որոշմամբ արձանագրվել է, որ վերը նշված շինարարության թույլտվություններով նախատեսվել է շինարարական աշխատանքներն իրականացնել 365 օրվա ընթացքում, սակայն 2016 թվականի հունվարի 15ի դրությամբ շինարարական աշխատանքները դեռևս սկսված չեն եղել **(հատոր 1-ին, գ.թ. 2426)**։

3) 29.09.2017 թվականին Համայնքը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Մարինա Պողոսյանի՝ պահանջելով դադարեցնել վերջինիս սեփականության իրավունքը Երևանի Րաֆֆու և Զիվանի փողոցների հատման մասում գտնվող 0,0072հա մակերեսով հողամասի նկատմամբ ու որպես հետևանք՝ վերացնել Կոմիտեում 30.12.2003 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն այն պատճառաբանությամբ, որ վեճի առարկա հողամասն օտարվել է կառուցապատման նպատակով օգտագործելու համար, իսկ Մարինա Պողոսյանը, այն ձեռք բերելով Իվետա Սուչյանից, իրավահաջորդության կարգով ձեռք է բերել նաև այն կառուցապատելու պարտավորությունը, ինչը չի իրականացրել **(հատոր 1-ին, գ.թ. 9-31)**։

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առկա է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետում նշված՝ դատական ակտի անվերապահ բեկանման հիմք, որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք հանրային շահի առնչությամբ ծագող իրավական վեճերը ենթակա են քննության քաղաքացիական դատավարության կարգով՝ վերահաստատելով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Սահմանադրության և Կոնվենցիայի վերը շարադրված իրավադրույթները, երաշխավորելով անձի՝ իր իրավունքների ու ազատությունների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների և դատական պաշտպանության իրավունքները, սահմանում են անձի դատարան դիմելու իրավունքը, որը կոչված է ստեղծելու պայմաններ՝ անձի խախտված իրավունքները վերականգնելու համար: Դատարան դիմելու իրավունքն անձի համար ապահովում է իրավական երաշխիքներ՝ իր իրավունքների խախտումների դեպքում ստանալ արդյունավետ իրավական պաշտպանություն: Այստեղից բխում է այն կարևոր կանոնը, որի համաձայն՝ դատական պաշտպանություն անձն ստանում է վերջինիս՝ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքների ու (կամ) ազատությունների խախտման դեպքում:

Երաշխավորելով անձի դատական պաշտպանության իրավունքը՝ օրենսդիրը միաժամանակ սահմանել է այն իրավական միջոցները, որոնք հնարավորություն են տալիս գործնականում ապահովելու այդ իրավունքի իրացումը: Դրանցից է նաև դատավարական նորմերով սահմանված այն դատարանի և այն դատավորի կողմից գործի քննության իրավունքը, որոնց ընդդատությանն այն վերապահված է օրենքով: Այսինքն՝ դատական պաշտպանության իրավունքի իրացումն ապահովվում է դատավարական այնպիսի կառուցակարգի միջոցով, ինչպիսին է ընդդատությունը:

Վերոգրյալ իրավական նորմերի և իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի ճիշտ ընդդատության որոշումն ունի գործնական

կարևոր նշանակություն, քանի որ դատական պաշտպանությունը կարող է արդյունավետ լինել միայն այն պարագայում, երբ գործի քննությունն իրականացվում է իրավասու դատարանի կողմից՝ տվյալ դատավարությանը բնորոշ կանոններով սահմանված ընթացակարգերի պահպանմամբ և հակառակը, եթե գործը քննում է այն դատարանը, որը տվյալ գործը քննելու իրավասություն չունի, ապա դա հանգեցնում է դատական պաշտպանության սահմանադրորեն ամրագրված իրավունքի խախտմանը:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը:

Սահմանադրական դատարանը, անդրադառնալով դատական պաշտպանության միջոցի արդյունավետության հարցին, արձանագրել է, որ դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ տարրն է հանդիսանում անձի՝ այն դատարանում իր գործի քննության իրավունքը, որի ընդդատությանն օրենքով հանձնված է տվյալ գործը: Ինչպես ՀՀ քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերը, այնպես էլ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը սահմանում են գործերի առարկայական ընդդատության իրենց կանոնները (*տե՛ս Սահմանադրական դատարանի 03.02.2009 թվականի թիվ ՍԴՈԴ787 որոշումը*):

Մինչև 20.08.2022 թվականը գործած խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (...), միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ վարչական դատարան կարող են դիմել նաև վարչական մարմինները կամ պաշտոնատար անձինք՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց որոշակի իրավունքներից զրկելու կամ նրանց վրա որոշակի պարտականություններ դնելու պահանջով, եթե օրենքով դա վերապահված է դատարանին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը (...):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյալ չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի (...) ենթակայությանը վերապահված գործերը, ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված գործերը:

ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ օրենսդիրը հստակ տարանջատել է այն գործերի ցանկը, որոնք ենթակա են կոնկրետ դատարանների քննությանը: Ընդ որում, այդ օրինակ տարանջատումն ուղղակիորեն բխում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի և վարչական դատարանի կողմից գործերի քննության դատավարական առանձնահատկություններից: Օրենսդիրը, սահմանելով վարչական դատարանի ընդդատության շրջանակը, ներառել է նաև հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերի վերաբերյալ գործերը: Այսինքն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է իրավասու դատարանի քննությանը (տես Մխիթար Ալումյանն ընդդեմ Ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության թիվ ԵԴ/13589/02/21 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 11.07.2024 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ հանրային իրավահարաբերություններն այն իրավահարաբերություններն են, որոնք ծագում են պետական մարմինների իրականացրած գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում: Այսինքն՝ այդպիսի իրավահարաբերությունները և դրանց արդյունքները պետք է ունենան հանրային՝ համընդհանուր բնույթ, ի տարբերություն մասնավոր՝ կոնկրետ անձին վերաբերող, իրավահարաբերության (տես Արևիկ Արուսյանն ընդդեմ «ՀԳ-90» ՍՊԸ-ի և Դանիել Գրիգորյանի թիվ ԵԱԲԴ/0433/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.07.2011 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը, ամփոփելով նախկին դիրքորոշումները, մեկ այլ որոշմամբ հավելել է, որ հանրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները: Իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը վարչական դատարանին ընդդատյալ լինելու հանգամանքը պարզելու նպատակով պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ հանգամանքները.

1. արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, թե՛ ոչ,

2. արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե՛ ոչ,

3. արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալիրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե՛ ոչ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր փաստել իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը, ինչպես նաև այդ հարաբերությունից բխող վեճերի ընդդատության հարցը՝

հաշվի առնելով նաև այն կարևոր հանգամանքը, որ հանրային հարաբերություններից բխող բոլոր վեճերը չեն, որ վերապահված են վարչական դատարանի քննությանը, քանի որ ՀՀ վարչական դատարանության օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի (...) ենթակայությանը վերապահված գործերը, ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված գործերը (տե՛ս *Գոռիշխան Իշխյանն ընդդեմ «Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» ՓԲԸ-ի թիվ ԵՄԴ/1029/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացված որոշմամբ փաստել է, որ իրավահարաբերության բնույթը պարզելու համար հարկավոր է այն դիտարկել շահերի տեսության, ենթակարգության տեսության և հատուկ իրավունքի տեսության համատեքստում: Ըստ շահերի տեսության՝ հանրային իրավունքը մասնավորից տարբերվում է այն շահի տեսակով, որոնք պաշտպանվում են առանձին իրավանորմով: Այն իրավանորմերը, որոնք ծառայում են հանրային կամ ընդհանուր շահին, պատկանում են հանրային իրավունքին: Մինչդեռ, մասնավոր իրավանորմերը ծառայում են մասնավոր կամ անհատական շահերին: Ենթակարգության տեսությունը ելնում է մասնակիցների հարաբերությունների բնույթից և կիրառվում է միայն այն դեպքում, երբ հարաբերության մասնակիցներն են մի կողմից պետությունը, իսկ մյուս կողմից քաղաքացին: Ըստ այս տեսության՝ այն իրավանորմերը, որոնք կարգավորում են հանրային իշխանությունը կրողների գործողությունները, համարվում են հանրային-իրավական, երբ դրանք վերաբերում են վերադատության-ենթակայության հարաբերությանը: Եթե մասնակիցների միջև առկա է վերադատության-ենթակայության հարաբերություն, ապա իրավահարաբերությունը հանրային է, իսկ եթե իրավունքի երկու սուբյեկտները միմյանց առջև հանդես են գալիս իրավահավասար կերպով, ապա առկա են մասնավոր-իրավական հարաբերություններ: Հատուկ իրավունքի տեսությունն իր հերթին նույնպես կոչված է պարզելու վեճի հանրային-իրավական բնույթը: Այն ելնում է վեճը լուծող իրավանորմերի իրավական բնույթից: Ըստ այս տեսության՝ եթե վեճը լուծվում է հանրային-իրավական նորմերի միջոցով, ապա առկա է հանրային-իրավական վեճ, իսկ եթե վեճը լուծում են մասնավոր-իրավական նորմերը, ապա կունենանք մասնավոր-իրավական վեճ:

Միևնույն ժամանակ վերոնշյալ տեսությունների հիմքում դրված չափանիշներից ելնելով՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վիճելի իրավահարաբերության բնույթը պարզելիս անհրաժեշտ է անդրադառնալ հետևյալ հարցերին՝

- ո՞ր նորմերն են լուծում վեճը,
- արդյո՞ք դրանք հանրային-իրավական նորմեր են (ինչ շահերի պաշտպանությանն են ուղղված այդ նորմերը),
- արդյո՞ք իրավահարաբերության մասնակիցների միջև առկա է վերադատության-ենթակայության հարաբերություն:

Արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վեճը կարգավորող իրավական նորմերի բնույթը պարզելու հարցին, արձանագրել է, որ հանրային իրավունքին են պատկանում այն նորմերը, որոնք իրենց ցանկացած հնարավոր կիրառման դեպքում միակողմանիորեն լիազորում կամ պարտավորեցնում են բացառապես հանրային իշխանության կրողին՝ որպես այդպիսին, իսկ այն նորմերը, որոնք լիազորում կամ պարտավորեցնում են յուրաքանչյուրին, պատկանում են մասնավոր իրավունքին (տե՛ս *Լուսինե Սահակյանն ընդդեմ*

ՀՀ փաստաբանների պալատի թիվ ԵԴ/38635/02/19 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.05.2022 թվականի որոշումը):

Համակարգային վերլուծության ենթարկելով վերը նշվածը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական դատարանում քննության են ենթակա նաև հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, այդ թվում՝ հանրային շահի առնչությամբ ծագող բոլոր իրավական վեճերի հետ կապված գործերը: Ուստի, նման պահանջի քննությունն ընդդատյա չէ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ հանրային իրավահարաբերություններից բխող լինելու հիմքով:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ օրենսդիրը, կարևորելով գործերի առարկայական ընդդատությունը, դատավարական օրենսգրքերով սահմանել է այդ կանոնը խախտելու իրավական հետևանքը, որը դատական ակտի անվերապահ բեկանումն է: Այսպես՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատարանը դատավարության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի համաձայն՝ դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե ստորադաս դատարանում առկա է եղել գործի վարույթը կարճելու հիմք:

Մինչև 14.03.2024 թվականը գործած խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անկախ բողոքի հիմքերից և հիմնավորումներից՝ դատական ակտը ենթակա է բեկանման, եթե առկա են նույն հոդվածի 2-րդ մասի (...) 11-րդ կետերով սահմանված՝ դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկության կարգով բողոքի քննության ժամանակ Վճռաբեկ դատարանը գործով կայացված դատական ակտը վերանայում է միայն վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, բացառությամբ նույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ գործի՝ առարկայական ընդդատության [ենթակայության] կանոնների խախտմամբ վարույթ ընդունված լինելը տվյալ գործի քննության ընթացքում պարզվելու դեպքում ընդհանուր իրավասության դատարանը, ի տարբերություն վարչական դատարանի, իրավասու չէ այն հանձնել այլ դատարանի քննությանը: Տվյալ պարագայում ընդհանուր իրավասության դատարանը պարտավոր է կարճել գործի վարույթն այն հիմքով, որ տվյալ գործը ենթակա չէ ընդհանուր իրավասության դատարանում քննության: Այսինքն՝ այն դեպքում, երբ որևէ գործի քննության ընթացքում պարզվում է, որ այն վարույթ է ընդունվել առարկայական ընդդատության կանոնների խախտմամբ, ընդհանուր իրավասության դատարանը պարտավոր է վճիռ կայացնել գործի վարույթը կարճելու մասին այն հիմքով, որ տվյալ գործը ենթակա չէ ընդհանուր իրավասության դատարանում քննության (տե՛ս Գոռիշխան Իշխկյանն ընդդեմ «Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» ՓԲԸ-ի թիվ ԵՄԴ/1029/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):

Վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանը հավելել է, որ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը, որի կիրառմամբ իրականացվել է քննության առարկա հանդիսացող գործով

վերաքննության վարույթը, ինչպես նաև իրականացվում է վճռաբեկության վարույթը, ենթակայության կանոնի խախտումն ամրագրել է որպես ստորադաս ատյանի դատական ակտն անվերապահորեն բեկանելու հիմք: Մասնավորապես, այսպիսի խախտման ի հայտ գալու պայմաններում վերադաս դատական ատյանը, անկախ քննության ենթակա բողոքի հիմքերից և հիմնավորումներից, պարտավոր է բեկանել ստորադաս դատական ատյանի դատական ակտը: Դատական ակտի անվերապահ բեկանման հանգեցնող խախտումների առանձնահատկությունը մյուս դատավարական խախտումների համեմատ կայանում է նրանում, որ դրանք այնքան էական են, որ խաթարում են դատարանի՝ իբրև իրավունքների համապարփակ և արդյունավետ պաշտպանությանը կոչված պետական մարմնի դերն ու նշանակությունը: Նման խախտումների առկայությամբ կայացված դատական ակտը չի կարող լինել համոզիչ և հեղինակավոր ու պետք է գնահատվի որպես թույլ տրված խախտման հետևանք (տես *Տաթևիկ Գալստյանն ընդդեմ «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/1118/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ առարկայական ընդդատության կանոնների խախտման իրավական հետևանքը դատավարության ցանկացած փուլում գործի վարույթը կարճելն է: Ընդ որում, առարկայական ընդդատության կանոնների խախտումն օրենսդիրը որակել է այնպիսի դատավարական խախտում, որը հանգեցնում է դատական ակտի անվերապահ բեկանմանը՝ անկախ բողոքի հիմքերից և հիմնավորումներից:

Այսինքն՝ առարկայական ընդդատության խախտումն օրենսդիրը համարել է այնպիսի դատավարական խախտում, որի առկայությունը վերադաս ատյաններում հաստատվելու պարագայում դատական ակտի անվերապահ բեկանման հիմք է հանդիսանում նույնիսկ այն դեպքում, երբ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքը նշված դատավարական խախտման հիմք չի պարունակում (տես *Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատունն ընդդեմ Ալբերտ և Անահիտ Հակոբյանների թիվ ԵԿԴ/1274/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 10.12.2021 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել նաև, որ վեճի առարկայական ընդդատությունը (ենթակայությունը) ճիշտ որոշելու խնդիրը սերտորեն կապված է Սահմանադրությամբ իր ամրագրումն ստացած օրինականության սկզբունքի հետ, որի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Վեճի առարկայական ընդդատությունը (ենթակայությունը) սխալ որոշելու պայմաններում արդարադատության իրականացումն անհամատեղելի կլինի օրինականության սկզբունքի կենսագործման հետ, քանի որ կստացվի այնպիսի մի իրավիճակ, երբ դատարանը, ով իրավասու չէ քննելու տվյալ վեճը, կկատարի այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված չէ Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի Րաֆֆու և Զիվանի փողոցների հատման մասում գտնվող 0,0072 հա մակերեսով հողամասը սեփականության իրավունքով պատկանում է Մարինա Պողոսյանին:

Երևանի քաղաքապետի 11.04.2016 թվականի թիվ 1248-Ա որոշմամբ ուժը կորցրած են ճանաչվել Բաֆֆու և Ջիվանի փողոցների հատման մասում առևտրի սրահի կառուցման համար Մարինա Պողոսյանին 23.02.2011 թվականին տրված թիվ h.h.01/18-Պ-97-65, 04.12.2013 թվականին տրված թիվ 01/18-Պ-2547-1173 ու 27.12.2014 թվականին տրված թիվ 01/18Պ24501398 շինարարության թույլտվությունները: Նույն որոշմամբ արձանագրվել է, որ վերը նշված շինարարության թույլտվություններով նախատեսվել է շինարարական աշխատանքներն իրականացնել 365 օրվա ընթացքում, սակայն 2016 թվականի հունվարի 15ի դրությամբ շինարարական աշխատանքները դեռևս սկսված չեն եղել:

29.09.2017 թվականին Համայնքը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Մարինա Պողոսյանի՝ պահանջելով դադարեցնել վերջինիս սեփականության իրավունքը Երևանի Բաֆֆու և Ջիվանի փողոցների հատման մասում գտնվող 0,0072հա մակերեսով հողամասի նկատմամբ ու որպես հետևանք՝ վերացնել Կոմիտեում 30.12.2003 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը: Սույն գործով հայցադիմումը ներկայացնելու համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ վեճի առարկա հողամասն օտարվել է կառուցապատման նպատակով օգտագործելու համար, իսկ Մարինա Պողոսյանը, այն ձեռք բերելով Իվետա Սուչյանից, իրավահաջորդության կարգով ձեռք է բերել նաև այն կառուցապատելու պարտավորությունը, ինչը չի իրականացրել:

Դատարանի 05.08.2021 թվականի վճռով Համայնքի հայցը բավարարվել է:

Վերաքննիչ դատարանը 02.12.2021 թվականի որոշմամբ Մարինա Պողոսյանի վերաքննիչ բողոքը բավարարել է՝ Դատարանի 05.08.2021 թվականի վճիռը բեկանել է, և գործն ուղարկել է նոր քննության:

Համադրելով սույն գործի փաստական հանգամանքները կիրառելի իրավանորմերի հետ և անդրադառնալով վեճը կարգավորող իրավական նորմերի բնույթը պարզելու հարցին՝ Վճռաբեկ դատարանը վերահաստատում է, որ հանրային իրավունքին են պատկանում այն նորմերը, որոնք իրենց ցանկացած հնարավոր կիրառման դեպքում միակողմանիորեն լիազորում կամ պարտավորեցնում են բացառապես հանրային իշխանության կողմին՝ որպես այդպիսին, իսկ այն նորմերը, որոնք լիազորում կամ պարտավորեցնում են յուրաքանչյուրին, պատկանում են մասնավոր իրավունքին:

Սույն գործի շրջանակներում ներկայացրած հայցապահանջի փաստական և իրավական հիմքերը հաշվի առնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իր նպատակային նշանակությամբ չօգտագործվող գույքի պաշտպանությունն ուղղված է հանրային շահի սպասարկմանը, ուստի նշված գործառույթի իրականացման առնչությամբ ծագող հարաբերությունները կարգավորող իրավական նորմերն ունեն հանրային բնույթ:

Պետության օրենսդրական քաղաքականությունն ընթանում է այն հունով, որ հանրային շահի առնչությամբ ծագող բոլոր իրավական վեճերի քննությունը վերապահվել է ՀՀ վարչական դատարանին:

Հաջորդիվ անդրադառնալով իրավահարաբերության մասնակիցների միջև ենթակարգության-վերադասության առկայությանը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ համայնք-ֆիզիկական կամ իրավաբանական անձ հարաբերությունները թեև որոշ դեպքերում կարող են բնորոշվել նաև որպես մասնավոր, սակայն սույն գործի շրջանակներում դրանք հանդես են գալիս հանրային իշխանական դրսևորման մեջ: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2րդ կետի բովանդակությունից պարզ է դառնում, որ վարչական մարմինը ձեռք է բերում վարչական դատարան դիմելու իրավունք, երբ պահանջ է ներկայացնում ֆիզիկական կամ իրավաբանական անձանց

որոշակի իրավունքներից զրկելու կամ նրանց վրա որոշակի պարտականություններ դնելու մասին: Տվյալ դեպքում Համայնքը, որը հանդիսանում է վարչական մարմին, հայցադիմում է ներկայացրել ընդդեմ ֆիզիկական անձ Մարինա Պողոսյանի՝ վերջինիս սեփականության իրավունքից զրկելու պահանջով: Այսինքն՝ սույն գործի շրջանակներում Համայնքի մոտ իր ներկայացրած պահանջի ուժով ծագել է վարչական դատարանի դիմելու իրավունք, մինչդեռ Համայնքը հայցադիմումը ներկայացրել է Երևան քաղաքի առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարան, և գործը քննվել է քաղաքացիական դատավարության կարգով:

Հիմք ընդունելով վերը նշված իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևանի քաղաքապետի 11.09.2002 թվականի թիվ 1550-Ա և 21.05.2003 թվականի թիվ 1122-Ա որոշումների հիման վրա Մարինա Պողոսյանի՝ Րաֆֆու ու Զիվանի փողոցների հատման մասում գտնվող 0,0072հա մակերեսով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման և Համայնքի՝ Մարինա Պողոսյանի սեփականության իրավունքը դադարեցնելու ու որպես հետևանք՝ Կոմիտեում 30.12.2003 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը վերացնելու պահանջով հայցադիմում ներկայացնելու փաստերի ուժով Համայնքի և Մարինա Պողոսյանի միջև ծագել է վարչական իրավահարաբերություն, որի կապակցությամբ կողմերի միջև ծագած վեճը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի ուժով ընդդատյա է ՀՀ վարչական դատարանին:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարաններում առկա է եղել գործի վարույթը կարճելու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմք, այն է՝ գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով, ուստի անկախ վերաքննիչ բողոքի հիմքերից ու հիմնավորումներից Դատարանի վճիռը բոլոր դեպքերում ենթակա է եղել անվերապահ բեկանման, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում ստորադաս դատարաններում առկա է եղել գործի վարույթը կարճելու հիմք, որպիսի պայմաններում Դատարանի և Վերաքննիչ դատարանի կողմից սույն գործի ըստ էության քննությունն իրավաչափ համարվել չի կարող, քանի որ գործն ի սկզբանե ենթակա չէր քննության քաղաքացիական դատավարության կարգով, այլ կերպ ասած՝ հայցի հիման վրա գործի հարուցումն ու ըստ էության քննությունն իրականացվել են օրինականության սկզբունքի խախտմամբ՝ խախտելով նաև իրավասու դատարանի կողմից անձի՝ իր գործի քննության իրավունքը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը վերը նշված հանգամանքի առկայությունը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասի և նույն հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով Վերաքննիչ դատարանի 02.12.2021 թվականի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու և գործի վարույթը կարճելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հիմնավորվում են վերոգրյալ պատճառաբանություններով:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ եթե հիմնական պահանջից բացի, ներկայացված են ածանցյալ պահանջներ, որոնք հիմնական պահանջի բավարարման դեպքում ենթակա են անվերապահ բավարարման, ապա ածանցյալ պահանջների համար պետական տուրք չի գանձվում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ (...) գործի վարույթը կարճելու դեպքում դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը դրվում է հայցվորի վրա, բացառությամբ նույն հոդվածով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլուխ] կանոններին համապատասխան:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը՝ նույն գլխի [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] կանոնների համաձայն:

Մինչև 09.04.2018 թվականը գործած խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի բովանդակությունից բխում է, որ հայցադիմումների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝ ոչ գույքային պահանջով՝ բազային տուրքի քառապատիկի չափով:

Մինչև 09.04.2018 թվականը գործած խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի «բ» ենթակետի բովանդակությունից բխում է, որ դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքների համար պետական տուրքը ոչ գույքային բնույթի պահանջի գործերով գանձվում է բազային տուրքի տասնապատիկի չափով:

Մինչև 09.04.2018 թվականը գործած խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ կետի «բ» ենթակետի բովանդակությունից բխում է, որ դատարանի դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը ոչ գույքային բնույթի պահանջի գործերով գանձվում է բազային տուրքի 20-պատիկի չափով:

Նկատի ունենալով, որ տվյալ դեպքում սույն գործի վարույթը ենթակա է կարճման, և բացակայում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածով նախատեսված բացառությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հատուցման պարտականությունը պետք է դնել հայցվոր Համայնքի վրա:

Հաշվի առնելով, որ սույն գործով հայցադիմումը դատարան ներկայացնելու համար

հայցվոր Համայնքն արդեն իսկ վճարել է օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը, ուստի այդ մասով պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Վերաքննիչ բողոք ներկայացնելու համար պատասխանող Մարինա Պողոսյանի կողմից վճարվել է 10.000 ՀՀ դրամ, որի պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմք ընդունելով հայցի հիման վրա հարուցված քաղաքացիական գործով քննության առարկա պահանջների բնույթը և քանակը, Դատարանի 05.08.2021 թվականի վճռի ու Վերաքննիչ դատարանի 02.12.2021 թվականի որոշման բովանդակությունները, Համայնքից հոգուտ Մարինա Պողոսյանի պետք է բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք ներկայացնելու համար Մարինա Պողոսյանի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար:

Նկատի ունենալով այն, որ Համայնքը վճռաբեկ բողոք ներկայացնելու համար նախապես վճարել է 60.000 ՀՀ դրամի չափով պետական տուրք, որից 20.000 ՀՀ դրամն է կազմում վճռաբեկ բողոքի համար օրենքով սահմանված պետական տուրքի չափը, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցն այդ մասով պետք է համարել լուծված՝ մնացած ավել վճարված 40.000 ՀՀ դրամը վերադարձնելով վերջինիս:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այլ դատական ծախսերի վերաբերյալ պահանջ ներկայացված չլինելու պատճառաբանությամբ այդ ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 404-րդ, 405-րդ, 406-րդ ու 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.12.2021 թվականի որոշումը և գործի վարույթը կարճել:

2. Երևան համայնքից հոգուտ Մարինա Պողոսյանի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված և նախապես վճարված պետական տուրքի գումար: Այլ դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔ

ՀՀ դատավորների միությունը շնորհավորում է

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր
իրավասության դատարանի դատավոր
Գևորգ ԲԱԼՅԱՆԻ ծննդյան 65-ամյակը,

*մաղթում նրան առողջություն, երկար տարիների կյանք
և վաստակաշատ հանգիստ:*

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
քաղաքացիական դատարանի դատավոր
Ռուբեն ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻ ծննդյան 50-ամյակը,

ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
դատարանի դատավոր
Գոհար ՖԻԴԱՆՅԱՆԻ ծննդյան 50-ամյակը,

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
քրեական դատարանի դատավոր
Մանվել ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻ ծննդյան 45-ամյակը,

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
քաղաքացիական դատարանի դատավոր
Ալֆրեդ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ծննդյան 40-ամյակը,

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
քրեական դատարանի դատավոր
Սամվել ՅՈՒՋԲԱՇՅԱՆԻ ծննդյան 35-ամյակը,

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
քրեական դատարանի դատավոր
Ջոն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ծննդյան 35-ամյակը,

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
քաղաքացիական դատարանի դատավոր
Ալլա ՔՅՈՒՐՔՉՅԱՆԻ ծննդյան 30-ամյակը,

ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
դատարանի դատավոր
Ժենյա ՆԱԶԱՐՅԱՆԻ ծննդյան 30-ամյակը,

*մաղթում նրանց առողջություն, անսպառ եռանդ
և մասնագիտական արդյունավետ գործունեություն:*

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Դատական իշխանություն» գիտամեթոդական պարբերականը լույս է տեսնում տարեկան առնվազն չորս անգամ:

Պարբերականի գիտական խմբագրական խորհուրդը քննարկում է միայն այն նյութերը, որոնք ներկայացվում են գրախոսականի առկայությամբ:

Տպագրվող նյութը պետք է ունենա որոշակի կառուցվածք՝ **ներածություն, հիմնական հետազոտություն** (որը կարող է ունենալ բաժիններ և ենթաբաժիններ), **եզրակացություն**:

«Դատական իշխանություն» պարբերականում տպագրության ներկայացվող նյութերի տեխնիկական պահանջները.

1. նյութի սկզբում դրվում է վերնագիրը (գլխատառերով),
2. հաջորդ տողում՝ հեղինակի անուն-ազգանունը (գլխատառերով), հեղինակի գիտական աստիճանն ու կոչումը, աշխատանքի վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի անվանումը,
3. տեքստի լուսանցքները. վերև՝ 25 մմ, ներքև՝ 25 մմ, աջ՝ 25 մմ, ձախ՝ 20 մմ,
4. հայերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapat, անգլերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapat, ռուսերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapat,
5. հիմնական տառաչափը՝ 12,
6. միջտողային հեռավորությունը՝ 1.5,
7. օգտագործված գրականության ցանկ՝ աճման կարգով, տառաչափը՝ 10, նշվում է աղբյուրի հեղինակը (թավ), վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (մամուլի դեպքում՝ նաև համարը) և էջերի քանակը,
8. հղումները տրվում են տողատակում՝ աճման կարգով, տառաչափը՝ 10, նշվում է աղբյուրի հեղինակը (թավ), վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (մամուլի դեպքում՝ նաև համարը) և էջը,
9. նյութը կարող է ներկայացվել հայերեն, անգլերեն կամ ռուսերեն, այն պետք է ունենա երեք լեզուներով ամփոփագրեր (ընդ որում՝ եթե այն անգլերեն կամ ռուսերեն չէ, ամփոփագիրը պետք է լինի 150-250 բառի սահմաններում), որոնք պետք է պարունակեն որոշակի, հստակ և ընդգրկուն տեղեկատվություն նյութի վերաբերյալ: Նյութը երեք լեզվով պետք է ունենա մինչև 10 բանալի բառեր,
10. նյութն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային եղանակով (էլեկտրոնային փոստ՝ kchalabyan@gmail.com):

Պարբերականում հոդվածները տպագրվում են վճարովի հիմունքներով: Տպագրության վճարը կազմում է 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ: Բացառություն են կազմում ՀՀ դատավորների միության անդամ դատավորները (ինչպես նաև ՀՀ դատավորների միության անդամ նախկին դատավորները), ում համար հոդվածների տպագրությունն իրականացվում է անվճար հիմունքներով:

Թեապոր խոսքեր

Խղճուկ է՛նա, ով ապրում է առանց
իդեալի ու օրենքների:
(Բ. Տուրգենև)



Խուսափե՛ք շողորրոթներից, դրանք
զգեստասփոխված գողեր են:
(Ու. Պեն)



Պարտականությունն այն գինն է, որ յուրաքանչյուր մարդ
պետք է վճարի ազատության համար:
(Էդիթ Համֆրոն)



Ազատ եղի՛ր՝ օրենքի գերին մնալով:
(Յիցերոն)



Մեծ խնդիրներ գոյություն չունեն, կան միայն մեծ
քանակությամբ փոքր խնդիրներ:
(Հենրի Տորդ)



Կարգապահությունը կամուրջ է՛ նպատակների և դրանց
իրականացման միջև:
(Ջիմ Ռոն)

ԼՈՒՅՍ Է ՏԵՄՆՈՒՄ
1997 Թ ՎԱԿԱՆԻՑ



copy  print